

Ն.Մ.ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԱՆՏԻԿ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ

Ն.Մ.ԽԱԶԱՏՐՅԱՆ

**ԱՆՏԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

**ԵՐԵՎԱՆ 2002
ԼԻՆԳՎԱ**

ՀՏԴ 820/89.0
ԳՄԴ 83.3 /0/ 3
Խ 282

Խ 282 Խաչատրյան Ն.
Անտիկ գրականության պատմություն: Եր.:
«Լինգվա», 2002. - 123 էջ:

Խմբագիրներ՝ բ.գ.թ. պրոֆ. **Ֆ.Խլղաթյան,**
ՀՀ ԳԱԱ ավագ գիտաշխատող **Գ.Զանիկյան**
Գրախոս՝ ՀՀ ԳԱԱ ավագ գիտաշխատող **Մ.Մաքսապետյան**

Սույն ուսումնական ձեռնարկը ստեղծված է հեղինակի դասախոսությունների հիման վրա և նախատեսված է բուհերի հումանիտար բաժինների ուսանողության համար: Ձեռնարկի առաջին բաժինը նվիրված է հին հունական, երկրորդը՝ հռոմեական գրականությանը:

Խ 4603020300 2002թ. **ԳՄԴ 83.3 /0/ 3**
0134(01) 2002

ISBN 99930-922-6-6

© Ն.Խաչատրյան, 2002թ.



Անտիկ գրականության դասընթացը ընդգրկում է Հին Հունաստանի և Հռոմի, իրավամբ եվրոպական քաղաքակրթության օրրան համարվող երկու պետության գրականությունների պատմությունը: Այդ դարաշրջանի մշակույթը ստեղծել է ց' այսօր գոյություն ունեցող բոլոր գրական ժանրերի փայլուն օրինակներ և երախտապարտ մարդկությունը պահպանել է նրանց կանոններն ու անվանումները՝ էպոս /վիպերգություն/, տրագեդիա /ողբերգություն/, կոմեդիա /կատակերգություն/, պոեմ, օդա /ներբող/, էլեգիա /եղերերգ/, սատիրա /երգիծանք/, էպիգրամ, իդիլլիա /հովվերգություն/, ռոման /վեպ/ և այլն: Անտիկ դարաշրջանում են ստեղծվել նաև ոճի տեսությունը՝ ճարտասանությունը և գրականության տեսությունը՝ պոետիկան:

Անտիկ հեղինակների ստեղծագործությունների աշխարհընկալման բանաստեղծականությունը, հերոսների պարտքի բարձր գիտակցումը, նրանց կերպարների վեհակերտությունը, կրքերի ուժը ոգևորել են հետագա դարաշրջանների արվեստագետներին և բարեբեր հող դարձել գեղարվեստական ոճերի և ուղղությունների համար /Վերածնունդ, XVIIդ. կլասիցիզմ/:

Մինչև XVIIդ. եվրոպական մշակույթը կողմնորոշվում էր հռոմեական օրինակներով, քանի որ, նվաճելով Հունաստանը, Հռոմն էր դարձել անտիկ դարաշրջանը եվրոպական միջնադարին կապող կամուրջը: Այդ պատճառով տարվա որոշ ամիսներ անվանվեցին հռոմեական աստվածների անուններով /մարտը՝ Մարս աստծո, հունիսը՝ Յունոնայի, հունվարը՝ Յանուսի/, իսկ մոլորակների պատմականորեն հաստատված անվանումները՝ Մերկուրի, Մարս, Վեներա, Յուպիտեր և այլն, ստեղծված լինելով հույների պոետիկ երևակայությամբ՝ պիտի հնչեին Հերմես, Արես, Աֆրոդիտե, Ջևա և այլն:

Հռոմը, իր ավելի ուշ զարգացման ընթացքում, Հունաստանից է փոխ առել և՛ կրոնը, և՛ փիլիսոփայությունը, և՛ արվեստները, և՛ գրականությունը, հարմարեցնելով իր ճաշակին: Հույների մոտ պատրաստի պատասխաններ գտնելով՝ հռոմեացիները ստեղծեցին մշակույթ, որն անխուսափելիորեն պիտի կրեր «երկրորդականության» դրոշմ, նույնիսկ իր ամենահանճարեղ ստեղծագործություններում:

Անտիկ հասարակությունը ստրկատիրական էր: Պետական կառուցվածքի հիմքն էր պոլիսը՝ քաղաք պետությունը՝ ազատ քաղաքացիների մի համայնք, որն ուներ իր թագավորը, զորքը,

օրենսդրությունը, դաստիարակչական համակարգը: Պատերազմի դեպքում պոլիսները կարող էին միավորվել, կազմելով սիմախիաներ՝ ռազմական դաշինքներ: Շփման գլխավոր սկզբունքը հյուրընկալության օրենքն էր՝ պրոքսենիան, քաղաքի և հյուրի փոխադարձ պարտավորությունները: Պոլիսների միջև կապը իրագործվում էր դեսպանների միջոցով, որոնք երբեմն ընտրվում էին դերասաններից, նկատի ունենալով նրանց հռետորական կարողությունը: Դեսպանին հանձնվում էր երկտակ փաստաթուղթ, որը կոչվում էր դիպլոմա /այստեղից դիպլոմատիա՝ դիվանագիտություն/: Պոլիսները կառուցվում էին մի բլրի՝ ակրոպոլիսի շուրջը, որի վրա կանգնեցվում էր պոլիսը հովանավորող աստծուն նվիրված տաճարը:

ԲԱԺԻՆ I

ՉԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ԱՆՏԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ



Անտիկ գրականության աղբյուրներն են **դիցաբանությունը** և **բանահյուսությունը** /**Ֆոլկլորը**։

Աշխարհն ընկալելու և գիտակցելու գործընթացում նախնադարյան մարդն անխուսափելիորեն կանգնում էր այս կամ այն երևույթը ըմբռնելու, գոնե անվանելու անհրաժեշտության առջև: «Միթոս» հունարեն նշանակում է «բառ», այսպիսով հասկանալի է դառնում *mithologia* /դիցաբանություն/ բառի սկզբնական իմաստը: Միթոսի առարկա էին դառնում և՛ բնության երևույթները, և՛ աշխարհի ստեղծումը /կոսմոգոնիան/, և՛ աստվածների ծագումը /թեոգոնիան/, և՛ երկնային մոլորակներն ու աստղերը, որոնց հետ անտիկ դիցաբանությունը կապում էր աստվածների, մարդկանց և կենդանիների /հունարեն՝ զոդիակների/ կերպարանափոխությունների վերաբերյալ պատմությունները:

Ըստ հին հունական դիցաբանության ողջ աշխարհը և անմահ աստվածները գոյացել են Քաոսից¹, որը ծնել էր Գեային /երկիր/, Էրոսին /սեր/, Տարտարոսին /ահավոր անդունդ/, Նյուկտային /գիշեր/, Էրեբին /խավար/: Գեան ծնեց Ուրանոսին /երկինք/, սարեր ու ծովեր: Ուրանոսը և Գեան ծնեցին վեց ուստր և վեց դուստր՝ տիտաններին, դրանք են Օվկիանոսը /Յելիոս՝ արեգակի, Սելենա՝ Լուսնի և Էոս՝ արևածագի հայրը/, Յիպերիոնը, Պրոմեթևսը, Էփիմեթևսը, Ռեան և ուրիշներ: Տիտաններից մեկը՝ Քրոնոսը /խրոնոս՝ ժամանակ/ ըմբոստացավ հոր դեմ և գահնկեց արեց նրան: Վախենալով իր հերթին գահից զրկվելուց՝ Քրոնոսը Ռեայից ծնված իր զավակներին կուլ էր տալիս: Միայն վերջինին՝ Չևսին, Ռեային հաջողվեց փրկել և թաքցնել Կրետե կղզում, որտեղ Ադրաստեա և Իդեա ջրահարսերը կերակրեցին նրան Ամալթեա այծի կաթով: Չևսը մեծացավ, ըմբոստացավ հոր դեմ և ստիպեց նրան վերադարձնել կուլ տված հինգ զավակին: Տաս տարի տևած պատերազմում աստվածները հաղթեցին տիտաններին, նետեցին նրանց Տարտարոս անդունդը և բնակություն հաստատեցին Օլիմպոս լեռան գա-

¹ Հատուկ անունները, հաշվի առնելով նրանց տարընթերցվածությունը, աշխատել ենք առավելագույնս մոտեցնել հունական և լատինական հնչողությանը:

գաթին: Նրանք սնվում էին ամբողջիայով և նեկտարով: Ձևան իր կնոջ՝ Չերայի հետ բնակվում էր ոսկե դոյակում, նրա կողքին էին խաղաղության աստվածուհի Էյրենը և հաղթանակի աստվածուհի Նիկեն: Այստեղ էին ճակատագրի աստվածուհիներ Մոյրաները՝ Կլոտոն մանում էր կյանքի թելը, Լախեսիսը առանց նայելու վիճակ էր հանում, իսկ Ատրոպոսը վիճակվածը գրի էր առնում երկար գլանաձև ձեռագրում /հռոմեացիները Մոյրաներին անվանում էին Պարկաներ/: Մարդկանց ճակատագրի վրա մեծ ազդեցություն էր գործում նաև հաջողության աստվածուհի Տյուխեն /հռ. Ֆորտունան/ առատության եղջյուրը ձեռքին:

ՀՈՒՆԱԿԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նկատի ունենալով այն մեծ նշանակությունը, որ հին հունական աստվածների կերպարներն ունեցան եվրոպական մշակույթի և գրականության համար, անհրաժեշտ է որոշ տեղեկություններ իմանալ նրանցից առավել կարևորների մասին:

ՁեՎՍԸ /հռ. Յուսիստերը/ արդար, ամենագոր, շանթարձակ և կնամոլ աստված է: Երջանիկ ազատագրումից հետո երախտապարտ աստվածները Ձևսին են ընտրում թագավոր: Հին հույների պատկերացումներով Ձևսը մարմնավորում է ամենամահասկանալին՝ որոտն ու կայծակը, ինչպես հայերիս Արամազդը: Ձևսը կնության է առնում քույրերից ամենագեղեցիկին՝ Չերային, բայց հաճախ դավաճանում է նրան դիցուհիների և մահկանացու կանանց հետ:

ՀԵՍԻԱ /հռ. Վեստա/. Ձևսի քույրն է, ընտանեկան օջախի աստվածուհին: Հռոմում Վեստայի տաճարում պահպանվում էր հավերժական կրակը: Քրոնուհիները ընտրվում էին ազնվագարն ընտանիքների վեց-տաս տարեկան աղջնակներից, որոնք ծառայում էին երեսուն տարի: Հանգած կրակի համար, որը համարվում էր դժբախտության նշան, քրոնուհիներին մտրակով ծեծում էին, իսկ ամարատությունը կորցնելու դեպքում՝ կենդանի թաղում: Հեստիայի քրոնուհիներն անձեռնմխելի էին, ունեին մեծ իրավունքներ, օրինակ՝ կարող էին մահվան դատապարտվածին կյանք պարգևել:

ԴԵՄԵՏՐԱ /հռ. Ցերերա/. Ձևսի քույրն է, պտղաբերության և հողագործության աստվածուհին: Նրա դստերը՝ Պերսեֆոնեին /հռ. Պրոզերպինեին/ առևանգում է ստորերկրյա աշխարհի աստված Աիդը: Ձայրացած Դեմետրան, Հելիոսից իմանում է իր դստեր տեղը, իջնում է Օլիմպոսից և գնում աղջկան փնտրելու: Ձևսը, տեսնելով, որ Դեմետրայի բացակայությամբ երկրի վրա առաջանում են

երաշտ, տեղատարափ, կարկուտ, հեղեղ, ստիպում է Աիդին վերադարձնել Պերսեֆոնեին և որոշում, որ այսուհետև նա տարվա կեսը կանցկացնի ստորերկրյա աշխարհում, կեսը՝ երկրի վրա, մոր հետ: Այսպես, Դեմետրայի տրամադրությամբ է բացատրվում տարվա եղանակների փոփոխումը:

ՅԵՐԱ /հռ. Յունոնա/. Ջևաի քույրն է և կինը: Նրանց հարսանիքին Գեան նվիրում է ոսկե պտուղներ տվող խնձորենի: Յերան բնության և ամուսնության հովանավորն է: Իշխանասեր, խանդոտ և դիակալ դիցուհի է, անողորմ հետապնդում է Ջևաի սիրուհիներին. Իոյին դարձնում է սպիտակ կով, Կալիստոյին՝ եգ արջ /որին Ջևաը հետագայում երկինք է համբարձում Մեծ Արջ համաստեղության տեսքով/, Սեմելային սպանում է, Ալքմենայի ծննդաբերությունը հետաձգում է և այլն: Յերան նաև հետապնդում է Ջևաի ապօրինի զավակներին, հովանավորում է Արգոս ամրոցը, որտեղ հինգ տարին մեկ անցկացվում են նրան նվիրված տոնախմբություններ՝ հերեփներ:

ՊՈՍԵՅՊՈՆ /հռ. Նեպտուն/. Ջևաի եղբայրն է, ծովերի աստվածը: Ապրում է ծովի հատակում գտնվող շքեղ դղյակում իր կնոջ՝ Անֆիտրիտեի հետ: Նրա շքախումբը կազմված է ներեիդներից, տրիտոններից և այլ ֆանտաստիկ էակներից: Ջեռքի եռաժանիով ժայռեր է ճեղքում: Ապոլլոնի հետ կառուցում է Տրոյա քաղաքի պարիսպը: Աթենքին տիրելու համար, Աթենասի հետ վեճի է բռնվում, բայց պարտվում է: Հաճախ անվանվում է «երկիրը սասանող», քանի որ Պոսեյդոնի հետ է կապվում երկրաշարժի առաջացումը:

ՍԻԴ ԿԱՄ ՅԱԴԵՍ /հռ. Պլուտոն/. Ջևաի եղբայրն է, ստորերկրյա աշխարհի և ստորերկրյա հարստությունների աստվածը: Նրա թագավորության մուտքի մոտ նստած է եռագլուխ շուն Կերբերը /կամ Ցերբերը/, որը բոլորին ներս է թողնում, սակայն ոչ մեկին դուրս չի թողնում: Մի անգամ առասպելական երգիչ Օրֆեոսը քնեցնում է նրան իր երգով, մեկ այլ անգամ Էնեասը՝ բլիթով, իսկ Յերակլեսը կապում է /12-րդ սխրանքը/: Մահացած մարդու դագաղի մեջ Կերբերի համար մեղրաբլիթ էին դնում, իսկ բերանի մեջ՝ պղնձյա դրամ հարոնի համար, որը Ստիքսոս գետով ստվերների աշխարհ էր տեղափոխում հանգուցյալի հոգին: Ստորերկրյա աշխարհի գետերն են Լետան՝ մոռացության գետը, որի մի կուն ջուրը մոռացնել է տալիս երկրային կյանքը, Կոկիտոսը /կամ Կոցիտոսը/ արցունքների սառը գետը, Պիրիֆլեգետոնը, Ախերոնը և Ստիքսոսը, որի ջրերով են երդվում աստվածները, իսկ երդմնագանցները մի տարով քուն են մտնում և ինը տարով վտարվում Օլիմպոսից: Աստվածներին վիրավորող մահկանացուները պատժվում են ստորերկրյա աշխարհում /դանայիդները, Սիզիֆը,

Տանտալոսը/։ Արդի շքախմբում են մահվան աստված թևավոր Տանատոսը՝ սև թիկնոցով և երիտասարդ գեղադեմ աստված Հիպանոսը։

ՀԵՔԵ /հռ. Յուլիենտա/։ Ձևսի և Հերայի դուստրն է, գեղեցիկ կույս է, անձնավորում է առավոտյան ցողը, թարմությունը, մաքրությունը։ Օլիմպոսում աստվածներին մատուցում է ամբրոզիա և նեկտար, այդ պատճառով այսօր փոխաբերական իմաստով խորհրդանշում է մատուցող աղջկա կամ պանդոկի տիրուհու։ Հեքեն Հերակլեսի երկնային կինն է։ Հեքեի տաճարը մտնող ստրուկը ազատություն էր ստանում։

ԱՐԵՍ /հռ. Մարս/։ Ձևսի և Հերայի որդին է, պատերազմի աստվածը։ Ռազմատենչ է և արնախում։ Ձևսը չի սիրում Արեսին նրա դաժանության համար։ Արեսը սնվում է մարտադաշտում թափվող արյունով, հաճախ մարտնչում է մահկանացուների կողքին և երբեմն պարտություն է կրում Աթենասից։ Մի անգամ վիրավորվում է մահկանացու Դիոմեդեսի ձեռքով։ Արեսի և սիրո ու գեղեցկության աստվածուհի Աֆրոդիտեի սիրային կապից ծնվում է Էրոսը /հռ. Անուրը/, որը պատկերվում է չարածճի երեխայի տեսքով, նրա ձեռքին են սերը հարուցող և սերը սպանող նետերը, որոնցով նա խոցում է և՛ մահկանացուների, և՛ աստվածների սրտերը։

ՀԵՓԵՍՏՈՍ /հռ. Վուլկան/։ Ձևսի և Հերայի որդին է, կրակի և արհեստների, հատկապես դարբնության աստվածը։ Ծնվում է թուլակազմ և տգեղ /ըստ Հոմերոսի՝ նաև կաղ/։ Հերան նրան Օլիմպոսից ցած է նետում։ Երկրի վրա Հեփեստոսը սովորում է դարբնության արհեստը, Հերայից վրեժխնդիր լինելու նպատակով նրա համար մի երկաթե գահ է կռում, որին նստելով Հերան գամվում և ստիպված է լինում համաձայնել որդու պայմաններին՝ նրան վերադարձնել Օլիմպոս և սիրո ու գեղեցկության աստվածուհի Աֆրոդիտեին կնության տալ։ Օլիմպոսում Հեփեստոսը հիանալի իրեր է պատրաստում։ Ձևսի գայիսոնն ու հովանին, Հելիոսի կառքը, Աթիլեսի զրահները, երկու ոսկե ստրկուհիներ, որոնք կաղ աստծուն օգնում էին քայլել, մի ցանց, որով բռնում է Արեսի հետ իրեն դավաճանող Աֆրոդիտեին, հողից ստեղծում է գեղեցկուհի Պանդորային, աստվածների համար Օլիմպոսում ոսկե պալատներ է կառուցում։ Հռոմում նրան նվիրում են վուլկանալիներ՝ օգոստոսի 23-ի տոնը։

ՀԵՐԱՅԵՍ /հռ. Մերկուրի/։ Ձևսի և Մայա աստվածուհու որդին է, աստվածների բանբերն ու ճանապարհների և ճանապարհորդների հովանավորը։ Ստեղծում է քնարը, որը տալիս է Ապոլլոնին։ Հետագայում համարվում է նաև առևտրի աստված։ Աֆրոդիտեից ունենում է Հերմաֆրոդիտես անունով որդի, որին սիրահարվում է

Սամալկիդե ջրահարսը և աղերսուն Աֆրոդիտեին նրանց մեկ մարմնում ձուլել:

ԱՌԹԵՆԱՍ /հռ. Միներվե/. Ձևի և իմաստության աստվածուհի Մետիսի դուստրն է: Սոյրաները զգուշացնում են Ձևսին, որ Մետիսից ծնված որդին հորը գահընկեց կանի, ուստի ճակատագրից խուսափելու նպատակով Ձևը կուլ է տալիս Մետիսին, սակայն որոշ ժամանակ անց սաստիկ գլխացավ է ունենում և գլուխը սկսում է ուռչել: Ցավից ազատվելու համար Ձևը խնդրում է Յեփեստոսին ճեղքել իր գլուխը և բացվածքից դուրս է գալիս իմաստուն և զեղաղեմ Աթենաս աստվածուհին՝ ռազմական հանդերձանքով: Աթենասը հույների ամենասիրելի դիցուհին է, նրա անունով են կոչում իրենց մայրաքաղաքը՝ Աթենքը: Աթենասը մարմնավորում է իմաստություն, արդարություն, ռազմական փառք: Նա է սովորեցնում հույներին քաղաքներ և նավեր կառուցել, ձիեր սանձահարել, կառքեր պատրաստել: Աթենասին անվանում են Պալլաս՝ քաղաքների հովանավոր, Վարվակիոն՝ ռազմիկ, Պարթենոս՝ կույս, Էրգամա՝ արիեստների հովանավոր:

ԱՐՏԵՄԻՍ /հռ. Դիանա/. Ձևի և աստվածուհի Լատոնեի դուստրն է, առաքինի, որսորդուհի, կույսերի և որսորդների հովանավոր: Հաճախ պատկերվում է իր սրբազան կենդանու՝ եղնիկի ուղեկցությամբ: Ամուսնանալուց առաջ աղջիկները քավության զոհ են բերում Արտեմիսին: Դիցուհին հաճախ անողորմ է վարվում մահկանացուների հետ. Օրիոնին որսորդությամբ իր հետ մրցակցելու համար դաժանորեն պատժում է, Ակտեոնին՝ միակ մահկանացուին, որը նրան մերկ է տեսել, եղջերու է դարձնում, բայց և օգնության է հասնում զոհաբերվող կույս Իֆիգենիային:

ԱՊՈՒՐՆԱ. Ձևի և Լատոնեի որդին է, Արտեմիսի երկվորյակ եղբայրը: Լույսի աստվածն է և արվեստների հովանավորը: Շրջապատված է ինը Մուսայով, որոնցից յուրաքանչյուրը առանձին արվեստի հովանավոր է. *Կլիոն*՝ պատմության, *Եվտերպեն*՝ քնարերգության, *Տալիան*՝ կատակերգության, *Մելպոմենեն*՝ ողբերգության, *Էրատոն*՝ երոտիկ պոեզիայի, *Կալիոպեն*՝ էպիկական պոեզիայի, *Պոլիհիմենեն*՝ մնջախաղի, *Ուրանիան*՝ աստղաբաշխության, *Տերսիսիքորեն*՝ պարի:

Ապոլլոնը տրոյական արքայադուստր Կասանդրային մարգարեության շնորհ է պարգևում, սակայն հետո պատժում է նրան մարդկանց անհավատությամբ: Էրոսի նետով խցոված՝ անպատասխան սիրահարվում է ջրահարս Դափնեին, որը հետապնդող Ապոլլոնից ազատվելու համար օգնություն է խնդրում հորից՝ զետերի աստծուց: Հայրը նրան ծառ է դարձնում, այդ ծառի տերևներից Ապոլլոնը իր համար պսակ է հյուսում: Ց՝ այսօր արվեստում կամ

սպորտում առանձնահատուկ հաղթանակների համար մարդկանց պարգևատրում են դափնե պսակներով:

Ապուլոնի որդի *Էսկուլապը /հռ. Ասկլեպիոսը/* բժշկության աստվածն է: Մահացածներին վերակենդանացնելու համար Ջևար շանթահարում է նրան: Որդու մահվան վրեժը լուծելով՝ Ապուլոնը սպանում է Ջևսի համար կայծակներ կռող կիկլոպներին /կամ ցիկլոպներին/: Որպես պատիժ Ջևսի հրամանով յոթ տարի ծառայում է մահկանացուներին:

Դիոնիսոս /հռ. Վաքիս կամ Բաքսոս/. Ջևսի և մահկանացու կնոջ, սնափառ գեղեցկուհի Սեմելեի որդին է: Խանդոտ Յերան Սեմելեին դրդում է խնդրել Ջևսին իր առջև ներկայանալ աստվածային տեսքով, բայց Ջևսից արծակվող կայծակները մոխրացնում են Սեմելեին: Իր չծնված զավակին փրկելու համար Ջևար նրան կարում է իր ազդրի մեջ, որտեղից և ծնվում է Դիոնիսոսը: Մահկանացու մայր և աստված հայր /կամ հակառակը/ ունեցողը համարվում է հերոս /այսինքն աստվածային կարողություններով մահկանացու/, սակայն քանի որ Դիոնիսոսը երկրորդ անգամ աստծուց է ծնվում, համարվում է աստված:

Դիոնիսոսը պտղաբերության, խաղողագործության և գինեգործության աստված է: Նրա պաշտամունքը տարածված է ոչ միայն Հունաստանում, այլև Փոքր Ասիայում: Դիոնիսոսին նվիրված տոները կոչվում են բաքսոսատոներ, իսկ պաշտամունքը կատարող կանայք՝ բաքսոսուհիներ: Հունաստանում Դիոնիսոսին էր նվիրված ամենահանդիսավոր վեցօրյա տոնը՝ Մեծ Դիոնիսականը:

Աստվածների մասին ասքերի կողքին հին Հունական դիցաբանության մեջ մեծ տեղ է հատկացվում նաև հերոսների մասին ասքերին, հայտնի են *Պերսևսի, Աքիլլեսի, Հերակլեսի, Էնեասի* մասին առասպելները, որոնք բազմաթիվ գեղարվեստական ստեղծագործությունների հիմք են դարձել:

Հին հունական գրականության երկրորդ աղբյուրն է ժողովրդական բանահյուսությունը՝ ֆոլկլորը, որը ներկայացված է երգերով /աշխատանքային, ծիսական, օրացույցային/ և էպիկական ասքերով: Այդ ասքերը բանավոր փոխանցվում էին սերնդե սերունդ և գրի են առնվել մոտավորապես մ.թ.ա.VI դ. երբ ստեղծվել է գիրը: Էպոսի պահպանողներն էին ժողովրդական երգիչներ **աեդները**՝ հորինողները, որոնց մասին մեզ տեղեկություններ չեն հասել, և **ռապսոդները**՝ «կարողները», որոնք գոյություն ունեցող ասքերը միավորում, «կարում» էին, պոեմի գրական ձև տալիս: Պոեմները կատարվում էին տավղի կամ քնարի նվագակցությամբ խնջույքների կամ ժողովրդական հավաքույթների ժամանակ: Հաճախ կազ-

մակերպվում էին ռապսոդների մրցույթներ /Յայաստանում նույնատիպ մրցույթներ էին անցկացվում գուսանների միջև/:

Հին հունարենում շեշտը ոչ թե ուժային էր, այլ մեղեդային. շեշտվող վանկը արտասանելիս ձայնը մի քանի տոնով բարձրանում էր, այդ պատճառով ընդունված էր պոեմների կատարումն անվանել երգ:

ԷՊԻԿԱԿԱՆ ՇԱՐՔԵՐ

Այուժետային ընդհանրության սկզբունքով պոեմները միավորվում են **կիկլերի /ցիկլերի/**, այսինքն՝ պոեմների շարքերի մեջ, որոնք խմբավորվում են մի քաղաքի /թեբեական շարքը/, մի հերոսի /Յերակլեսի, Պերսևսի մասին շարքերը/, կամ մի իրադարձության շուրջը /արգոնավորոջների մասին շարքը/:

Առավել հայտնի և հետագայում առավել մշակված շարքը նվիրված է Տրոյական պատերազմին:

Տրոյա կամ Իլիոն քաղաքը գտնվում էր Փոքր Ասիայում, Դարդանել նեղուցի հարավում, առևտրական ուղիների խաչմերուկում: Հարուստ քաղաքը գայթակղիչ էր զավթիչների համար և հաճախ պատերազմի բեմ էր դառնում: Այդպիսի պատերազմներից մեկը, ըստ հնագիտական տվյալների, տեղի է ունեցել մոտ մ.թ.ա. 1180 թ.-ին: XIX դարում գերմանացի հնագետ Հայնրիխ Շլիմանի կատարած պեղումները հայտնաբերեցին քաղաքի տասներեք շերտ, որոնցից վեցերորդը հաստատում է երկրաշարժից առաջացած մեծ հրդեհը և վեց մետր լայնք ունեցող պատի ճեղքը: Հոմերոսի անկեղծ երկրպագու, վաճառական Շլիմանը ձեռնարկել էր այդ պեղումները Հոմերոսի պոեմների պատմական վավերականությունը հաստատելու համար: 1874–76թթ. նա հայտնաբերեց նաև Ագամեմնոնի գանձարանը Միկենեում, որտեղ XVIII դարից պեղումներ էին անցկացվում, բայց բոլոր գտածոն հափշտակվում էին անգլիացիներ լորդ Էլջինի, լորդ Սլիգոյի և թուրք Վելի փաշայի կողմից:

Տրոյական շարքը նկարագրում է Տրոյայի պաշարումն ու ավերումը հունական դաշնակցային զորքի կողմից, կազմված է ութ պոեմից, որոնցից երկուսի՝ «Իլիականի» և «Ոդիսականի» հեղինականությունը ավանդաբար վերագրվում է Հոմերոսին:

1. ԿԻՊՐՈՍԱԿԱՆ

Պոենի անվանումը ծագել է հեղինակի՝ Ստասինոս Կիպրոսացու անունից: Նա պատմում է Տրոյական պատերազմի պատճառների, սկզբի և տասնամյա ընթացքի մասին:

Ձևը, կանենալով թեթևացնել գերբնակեցված երկիրը, որոշում է վառել պատերազմի ջախը և այդ նպատակով ծնում է Հիասքանչ Յեղիմեին, իսկ ծովային դիցուհի Թետիսին ամուսնացնում է Թեսալիայի թագավոր Պելևսի հետ, իմանալով, որ նրանցից ծնվելու է հզոր հերոս Աքիլլեսը:

Պելևսի և Թետիսի հարսանիքին հրավիրվում են բոլոր աստվածները, բացի երկպառակության աստվածուհի Էրիսից: Վիրավորված դիցուհին անտես մտնում է հարսանյաց սրահ և սեղանին զցում «ամենագեղեցիկին» նակագրությամբ մի ոսկե խնձոր: Խնձորին տիրանալու համար վեճ է առաջանում Յերայի, Աթենասի և Աֆրոդիտեի միջև: Ձևը նրանց խորհուրդ է տալիս դիմել Երիտասարդ հովիվ Պարիսին, որը ոսկե խնձորը պարգևում է Աֆրոդիտեին՝ ամենագեղեցիկ կնոջը իրեն կնության տալու խոստումի դիմաց: Այնուհետև Պարիսը մասնակցում է Տրոյայի համաքաղաքային խաղերին, հաղթում է բոլորին, նույնիսկ արքայազն Յեկտորին: Գուշակ արքայադուստր Կասանդրան, տեսնելով Պարիսին, ճանաչում է վաղուց կորած եղբորը, և ծնողները, անմիջապես հրժվանքով ընդունում են նրան: Պարիսի ծնվելուց առաջ նրա մայրը՝ Յեկաբեն երագում տեսել էր Տրոյայի հրդեհվելը, և գուշակը բացատրել էր, որ քաղաքը կկործանվի Պարիսի պատճառով: Պրիամոս թագավորը հրամայեց աղախնին երեխային թողնել մութ անտառում, սակայն էգ արջը կերակրեց Պարիսին, հետո նույն, աղախինը գտավ և մեծացրեց նրան: Պարիսը վերադառնում է տուն և Աֆրոդիտեն, իր խոստումը կատարելով, ուղարկում է նրան Սպարտա քաղաքը՝ Մենելաոս արքայի և նրա կնոջ՝ Հիասքանչ Յեղիմեի մոտ: Պարիսը և Յեղիմեն սիրահարվում են և, մոռանալով հայրենիքը, ամուսնուն, դատերը՝ Յերմիոնեին, Յեղիմեն Պարիսի հետ փախչում է Տրոյա: Վիրավորված Մենելաոսը վրեժխնդիր լինելու համար օգնություն է խնդրում իր եղբայր Ագամեմնոնից, նրանք պատերազմի են կոչում բոլոր հունական թագավորներին, որոնք, յուրաքանչյուրն իր զորքով /ընդհանուրը շուրջ 100000 զինվոր/, հավաքվում են Ավլիս քաղաքում, մեկնելու պատրաստ 1186 նավի մոտ: Աստվածները համընթաց քամի ուղարկելու համար պահանջում են, որ Ագամեմնոնը զոհաբերի իր ավագ դստերը՝ Իֆիգենիային, և հույները ուղևորվում են դեպի Տրոյա: Այստեղ Յեկտորի առաջնորդությամբ նրանց արդեն սպասում է իսկայական մի զորք: Հույները պաշարում են քաղաքը և տաս

տարի, ապարդյուն պաշարման ընթացքում, ավերում տրոյացիների դաշնակիցների քաղաքները:

2. ԻԼԻԱԿԱՆ

Նկարագրվող դեպքերը կատարվում են Տրոյական պատերազմի 10-րդ. տարում: Հիմնական բովանդակությունը Աքիլլեսի գայրույթն է և այդ գայրույթի հետևանքները:

/Պոեմի մանրամասն վերլուծությունը՝ «Հոմերոս» գլխում/

3. ԵԹՈՎՊՈՎԱՆ

«Իլիականի» սյուժեի շարունակությունն է. այստեղ նույնպես գլխավոր հերոսն Աքիլլեսն է, նկարագրվում են նրա հաղթանակները տրոյացիներին օգնության եկած դաշնակիցների՝ ամազոնուհիների և եթովպացիների դեմ պայքարում:

Ամազոնուհիների թագուհի, Արեսի դուստր Պենթեսիլեի հետ մենամարտում Աքիլլեսը սիզակով շամփում է նրան ձիու հետ միասին, բայց, հանելով սպանված թագուհու սաղավարտը, զմայլվում է գեղեցկությամբ, սիրահարվում և թույլ է տալիս տրոյացիներին պատվով թաղել:

Աքիլլեսի հետ մենամարտում զոհվում է նաև Էոս աստվածուհու որդի՝ եթովպացիների թագավոր Մեննոնը:

Եթովպացիների զորքերի մասն էին կազմում ասորեցիները, որոնց թվում կար Ջարմայր անունով մի հայ ռազմիկ: Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» I գլխի վերջին տողերում վկայում է, որ նա «այնտեղ հելլենացոց քաջերից վիրավորվելով, մեռնում է», և հույն մեծ հերոսին իր հարզանքի տուրքը տալով, խոստովանում է. «բայց կկամենայի Աքիլլեսից, ոչ թե մի ուրիշ քաջից»:

Աքիլլեսին հաջողվում է ներխուժել Տրոյա, որտեղ նա ահավոր կոտորած է սկսում: Տրոյացիներին կարեկցող Ապոլլոնը Պարիսի նետն ուղղում է Աքիլլեսի միակ խոցելի տեղը՝ գարշապարը: /Աքիլլեսի մայրը՝ ծովերի աստվածուհի Թետիսը, նորածին որդուն անխոցելի դարձնելու համար, գարշապարից բռնելով, նրան ընկղմել էր Սոիքսի ջրերը/:

Մահամերձ Աքիլլեսը դեռ մարտնչում է, բայց «մթնում են նրա աչքերը, թուլանում է հզոր ձեռքը», և մեծ հերոսը ընկնում է: Նրա մարմինը թշնամիների անարգանքից փրկվում են Այաքսն ու Ոդիսևսը, որոնք անձնուրաց կռվում են, հունական ճամբար հասցնում Աքիլլեսի դին: Տասնյոթ օր շարունակ ողբում են հույները և անմխիթար Թետիսը, տասնութերորդ օրը վառում են դիակիզման խարույկը: Աքիլլեսի աճյունը ամփոփում են ոսկե սափորի մեջ, իսկ նրա ոսկե զրահները որոշում են տալ Այաքսին կամ Ոդիսևսին:

Վիճակահանության ժամանակ Աթենասը, Ազամենոնը և Մեգելաոսը նենգորեն փոխում են Այաքսի վիճակը հօգուտ Ոդիսևսի:

Այաքսը որոշում է վրեժխնդիր լինել և գիշերը սուրը ձեռքին դուրս է գալիս իր վրանից՝ զինակիցներին սպանելու միտումով: Աթեմասը նրան անմիջապես խենթությամբ է համակում և խելացնորության մոլուցքի մեջ նա կոտորում է ցուլերի մի նախիր: Լուսաբացին ուշքի գալով, խայտառակությունից փրկվելու համար Այաքսը ինքնասպան է լինում:

4. ԻԼԻՈՆՑԻ ԱՆԿՈՒՄԸ /կամ «Փոքր Իլիական»/

Տաս տարվա ապարդյուն պաշարումից հետո հույները հասկանում են, որ կարող են հաղթել միայն խորամանկությամբ: Ողիսևսի առաջարկով նրանք կառուցում են հսկայական փայտե ձի, մեջը թաքցնում մի քանի տասնյակ ընտիր մարտիկ, թողնում են այն ծովի ափին: Ապա հրկիզում իրենց ճամբարը, նստում նավերը և իբր հեռանում, բայց իրականում թաքնվում են մի կղզու ետևում: Տեսնելով պաշարողների հեռանալը և պատերազմն ավարտված համարելով, երջանիկ տրոյացիները որոշում են ձին քաղաք բերել:

Ապոլլոնի քուրմ Լաոկոոնը զգուշացնում է համաքաղաքացիներին, աղերսում չհավատալ թշնամու ընծաներին, սակայն տրոյացիները, կարծես խելագարված, նույնիսկ չեն լսում թաքնված հույների զենքերի շայունը, երբ Լաոկոոնը նիզակով հարվածում է փայտե ձիուն: Աթեմասի ուղարկած հսկայական օձերը հարձակվում են Լաոկոոնի և նրա երկու որդու վրա, խեղդում:

Արքայադուստր Կասսանդրան սարսափում է, տեսնելով, որ տրոյացիները դարպասից չանցնող հսկայական ձին ներս բերելու համար քանդում են պարիսպը, զուշակում է քաղաքի անկունը, բայց նրան, ինչպես միշտ, չեն հավատում: Գիշերը, երբ բոլորը խորքուն են մտնում, հույները դուրս են գալիս ձիու միջից և մեծ խարույկ վառում: Այդ ազդանշանով նրանց նավերը վերադառնում են Տրոյա և պարսպի քանդվածքով հույները ներխուժում են քաղաք: Արիաբար են կռվում հանկարծակի եկած տրոյացիները, բայց անհավասար պայքարում կոտորվում են: Մենելաոսը, որի սրտում Աֆրոդիտեն նորից սեր է արթնացնում Յեդիների հանդեպ, ներում է կնոջը:

Երեք օր շարունակ հույները թալանում են տրոյացիների հարստությունները, գերում են գեղեցիկ կանանց և աղջիկներին, սպանում տղամարդկանց, ծերերին ու մանուկներին, հրկիզում քաղաքը և վերջապես ճամփա են ընկնում հայրենիք, թողնելով ծխացող, կողոպտված ու ամայի Տրոյան:

5. ՎԵՐԱՂԱՐՉ

Վերադարձի ճանապարհին հույներին շատ փորձություններ են սպասում: Նրանցից շատերը արագ և բարեհաջող են վերադառնում հարազատ քաղաքները, սակայն Մենելաոսը հայրենի

Սպարտա է հասնում միայն յոթ տարի թափառելուց հետո, իսկ նրա եղբայր Ազամեննոնը երկար ճանապարհորդությունից տուն հասնելուն պես սպանվում է իր կնոջ՝ Կլիտեննեստրեի և նրա սիրեկան Էգիսթոսի ձեռքով:

6. ՈՂԻՍԱԿԱՆ

Սյուժետային առումով «Ողիսականը» կարելի է համարել «Վերադարձ» պոեմի շարունակությունը, քանի որ պատմում է հերոսներից մեկի՝ Ողիսևի վերադարձի մասին: «Ողիսականը» Յունեթոսին վերագրվող երկրորդ պոեմն է, հետևաբար վերլուծվում է «Յունեթոս» գլխում:

7. ՏԵԼԵՓՈՆԻԱ

Ողիսևն իր ճանապարհորդության ժամանակ ամբողջ մի տարի մնում է Կիրկե /կամ Ցիրցեյա/ կախարդուհու կղզում: Ողիսևի և Կիրկեի որդի Տելեգոնը, որը ծնվում է հոր հեռանալուց հետո, մեծանում է, իմանում հոր անունը և ուղևորվում նրան փնտրելու: Չճանաչելով հորը, սպանում է նրան և Ողիսևի կնոջ՝ Պենելոպեյի ուղեկցությամբ, դիակը տանում Կիրկեի կղզի:

8. ԲԱՏՐԱՔՈՄԻՈՍԱՔԻԱ /Գորտերի և մկների պատերազմ/

Հերոսական էպոսի այս պոեմ-պարոդիան ստեղծվել է VI-V դարերում: Թագավորական ցեղի մի մկնիկ գորտի մեջքին նստած, տեղափոխվում է առվակի մյուս ափը, բայց, վախենալով ջրային օձից, գորտը սուզվում է, մկնիկը՝ խեղդվում: Մկները պատերազմ են հայտարարում գորտերին: Այսպես ծաղրվում են Տրոյական պատերազմի պատճառները: Այնուհետև մանրամասն նկարագրվում է Օլիմպոսում տեղի ունեցող աստվածների խորհուրդը: Աթենասը հրաժարվում է օգնել կողմերից որևէ մեկին, քանի որ մկները կրծել են նրա թիկնոցը, իսկ գորտերը իրենց կռվոցով խանգարում են քունը: Բացառիկ տաղանդով են նկարագրվում ռազմական գործողությունները, որոնք հիշեցնում են «Իլիականի» բովանդակությունը: Մկները սկսում են հաղթել: Այդ ժամանակ Ջևաը գորտերին օգնության է ուղարկում խեցգետիններից: Մկները փախուստի են դիմում և դրանով ավարտվում է «մեկօրյա ահեղ պատերազմը»: Անանուն հանճարեղ հեղինակը /կամ հեղինակները/ ցուցաբերել են հերոսական էպոսի ավանդական ռճաճևի և ռիթմիկայի փայլուն իմացություն:

ՀՈՍԵՐՈՍ

Եվրոպական գրականության առաջին գլուխգործոցներն են «Իլիական» և «Ոդիսական» պոեմները, որոնց հեղինակությունը դեռ անտիկ դարաշրջանում վերագրվել է Հոմերոսին: Հոմերոսի մասին ստույգ տեղեկություններ չկան: Նա ապրել է մոտ XII-VII դ.դ. մ.թ., նրա հայրենիքը լինելու պատիվը վիճարկում են յոթ քաղաքներ, հայտնի են նրա աստծո ապօրինի զավակ լինելու և էպիկական հերոսների հետ անձնական ծանոթության մասին առասպելները: Ըստ ավանդական պատկերացման նա կույր է եղել, քանի որ որոշ փոքրասիական լեզուներով «հոմերոս» նշանակում է «կույր»: Վիճարկելի է նաև վերը նշված երկու պոեմի պատկանելությունը Հոմերոսին, քանի որ նրանք տարբեր ժամանակաշրջաններ են արտացոլում: «Իլիականը», ըստ նկարագրվող հասարակարգի և նյութական մշակույթի, ավելի վաղ շրջանի պոեմ է, համապատասխանում է VIII-VII դդ.: Այդ դարաշրջանին բնորոշ են ռազմիկների բրոնզե զենքերը, արևելյան ոճի հագուստներն ու սանրվածքները, Փոքր Ասիայից բերվող մարգարտյա զարդերը: «Ոդիսականը» ավելի ուշ շրջանի է պատկանում, արտացոլում է նավագնացության և առևտրի նոր էտապ: Պոեմները ստեղծվել են Իոնիայում, իոնական բարբառով, բայց «Ոդիսականում» ավելի շատ են էոլիական ձևերը:²

Հոմերոսի պոեմները գրված են հեքսամետրով /վեցաչափով/
—սս / —սս / —սս / —սս / —սս / — — / —` շեշտված վանկ, ս`
անշեշտ/:

Հայերեն թարգմանություններում հեքսամետրը չի պահպանվել:

Հոմերոսյան, ընդհանրապես անտիկ տաղաչափության մեջ հանգ չի եղել:

«ԻԼԻԱԿԱՆ»

Պոեմի գործողությունը կապված է Տրոյական պատերազմի 10-րդ տարվա հետ: Ենթադրվում է, որ ընթերցողին կան ունկնդրին արդեն հայտնի են պատերազմի և՛ պատճառները, և՛ ընթացքը, և՛ գործող անձիք:

² Իոնիան, էոլիան, Ատտիկան, Լակեդեմոնիան, Մակեդոնիան Հին Հունաստանի մարզերն են:

«Իլիականի» հսկայական նյութը շարադրված է **15700** տողում, որոնք դեռ անտիկ գիտնականները, ըստ հին հունական այբուբենի տառերի թվի, բաժանել են **24** գրքի կամ երգի:

Սյուժեի հիմնական հանգույցը արտահայտված է առաջին իսկ տողում՝ *Չայրույթն երգիր, աստվածուհի, Պելևասծին Աքիլլեսի:*

Նշենք, որ թարգմանությունը ճիշտ չէ, բնագրում «մենին անյդե» նշանակում է «երգի՛ր գայրույթի մասին», իսկ երկրորդ տողը՝ *Չայրույթն անհեղ, որ աքայանց³ մատնեց անթիվ աղետների* վկայում է, որ պոեմը ոչ թե գովերգում, այլ դատապարտում է այդ գայրույթը:

Երգ I - Սրածություն: Չայրույթ:

Արհամարհելով քուրմերի և նրանց ընտանիքների անձեռնմխելիությունը, հույների առաջնորդ Ագամեմնոնը Ապոլլոնի քուրմ Քրիսոսի դատերը գերի է վերցնում, և հրաժարվում վերադարձնել: Հույներին պատժելու համար Ապոլլոնը ժանտախտ է ուղարկում նրանց ճամբարը: Վրդովված զինակիցների պահանջով Ագամեմնոնը վերադարձնում է Քրիսոսի դատերը, բայց փոխարենը Աքիլլեսից խլում է նրա հարճ Քրիսեիսին: Վիրավորված Աքիլլեսը, դառը արցունքներ թափելով, գնում է ծովի ափ, գանգատվում է մորը՝ ծովերի աստվածուհի Թետիսին և առանձնանում իր վրանում, հրաժարվելով մասնակցել ռազմական գործողություններին: Չևսը խոստանում է Թետիսին, որ Աքիլլեսին վիրավորանք հասցնելու համար կպատժի հույներին. նրանք կպարտվեն այնքան ժամանակ, քանի դեռ Աքիլլեսը չի կանենա դուրս գալ ռազմադաշտ:

Այսպիսով հաստատվում է գործողության երկու պլան՝ երկրի վրա և Օլիմպոսում: Տրոյական պատերազմը պառակտում է առաջացնում նաև աստվածների միջև՝ Չևսը, Աթենասը, Հերան, Թետիսը և Հեփեստոսը օգնում են հույներին, իսկ Աֆրոդիտեն, Արտեմիսը, Ապոլլոնն ու Արեսը՝ տրոյացիներին:

Երգ II - Երազը: Բեովթիա կամ Նավահանդես:

Չևսը մոտալուտ հաղթանակ խոստացող խաբուսիկ երազ է ուղարկում Ագամեմնոնին, որն անմիջապես մարտակոչ է հայտարարում: Թվարկվում են պատերազմին մասնակցող նավերն ու հերոսները:

Տասնամյա ապարդյուն պաշարումը ծանձրացրել էր հույն ռազմիկներին, որոնք սկսում են մտորել վերադարձի մասին, սակայն Ոդիսևսն ու Ագամեմնոնը համոզում են նրանց, գրոհի տանում: Տրոյացիները բաց են անում քաղաքի դարպասը և Պրիամոսի

³ Հույներն անվանվում էին նաև աքայացիներ /Աքայա մարզի անունով/, դանայացիներ /հերոս Դանայոսի որդիք/, կամ հելլեններ /Հելլադա՝ Հունաստան/:

որդի՝ խիզախ և ազնիվ Յեկտորի առաջնորդությամբ դուրս գալիս մարտի:

Երգ III - Երդուններ: Տեսարան պարսպից: Ալեքսանդրի և Մենելաոսի մենամարտը:

Ձորքերը շարժվում են իրար ընդառաջ: Ընծառչուծի մորթի հագած Պարիսը /կամ Ալեքսանդրը/ առաջ է գալիս և արայացի հերոսներից որևէ մեկին հրավիրում մենամարտի: Տեսնելով ահեղ Մենելաոսին՝ վախենում է և նահանջում, սակայն Յեկտորը նախատում է նրան և ստիպում կռվել:

Երկու կողմն էլ երդվում են, որ մենամարտում հաղթողը կտիրանա Յեդիներին, որից հետո հաշտություն կկնքվի: Վերջապես Տրոյայի պարսպի վրա հայտնվում է գեղեցկուհի Յեդիներն, Պրիամոսի և թագավորական տոհմի մյուս անդամների հետ հետևում է մենամարտին: Ջարմանալի է, որ այդ մենամարտը տեղի է ունենում պատերազմի սկզբից տաս տարի անց. սովորաբար ռազմական գործողությունները սկսվում էին նման մենամարտով: Տարօրինակ է նաև, որ մինչ այդ Պրիամոսը չէր տեսել հույն հերոսներին, միայն Յեդիների պատմածից է իմանում նրանց մասին:

Մենամարտը երկար չի տևում: Մենելաոսը սկսում է հաղթել, սակայն Աֆրոդիտեն անպով համակում է իր սիրեցյալ Պարիսին և փախցնում դաշտից: Մենելաոսը փնտրում է հակառակորդին և չի գտնում: Ազամեննոնը ավետում է հաղթանակը, պահանջում, որ տրոյացիները վերադարձնեն Յեդիներին և ավար տան հույներին:

Երգ IV - Ոխտադրություն: Ազամեննոնի զորատեսը:

Աթենասի դրդունով տրոյացի Պանդարոսը նետահարում և վիրավորում է Մենելաոսին: Ջինադադարը խախտվում է և՛ վերսկսվում է մարտը: Ազամեննոնը զորատես է կազմակերպում: Յուճական զորքը գլխավորում է Աթենասը, տրոյականը՝ Արեսը:

Երգ V - Դիոմեդեսի սխրանքները

Յույն ռազմիկ Դիոմեդեսը խիզախության հրաշքներ է գործում, մենամարտում է Պանդարոսի և Էնեսասի հետ. Պանդարոսին սպանում է, իսկ Էնեսասին փրկում է մայրը՝ Աֆրոդիտեն: Աթենասի օգնությամբ Դիոմեդեսին հաջողվում է վիրավորել պատերազմի աստված Արեսին, որը թռչում է Օլիմպոս՝ գանգատվելու Ջևահին և բուժելու իր վերքը:

Երգ VI - Յեկտորի և Անդրոմաքեի հրաժեշտը:

Գործողությունը կատարվում է Տրոյայում: Յեկտորը հրաժեշտ է տալիս կնոջը և որդուն՝ Աստիանաքսին: Նախագգալով Յեկտորի վախճանը՝ Անդրոմաքեն աղաչում է նրան մարտադաշտ չգնալ, բայց անվախ հերոսը հեռանում է, իսկ Անդրոմաքեն աղիորդում լացով վերադառնում է պալատ:

*Ողջը Յեկտորին էին սգում՝ մինչ նա կենդանի էր տակավին,
Այնքան նրանք հույս չունեին, որ ետ դառնար այն գոռ
մարտից,*

Ոչ էլ փրկվեր արայեցոց անվանելի բազուկներից:

Երգ VII - Յեկտորի և Այաքսի մենամարտը:

Աթենասը և Ապոլլոնը կրկին որոշում են պատերազմի ելքը լուծել մենամարտով: Յեկտորը մարտահրավեր է նետում հույների: Սկզբում նրանցից ոչ մեկը չի հանդգնում կռվել, սակայն ծեր արքա Նեստորի անոթանքից հետո դուրս են գալիս իննը զորավար: Վիճակն ընկնում է Այաքսին: Մենամարտը տևում է մի ամբողջ օր, մայրամուտին հակառակորդները որոշում են խաղաղ բաժանվել: Ի նշան փոխադարձ հարգանքի Յեկտորն Այաքսին նվիրում է իր սուրը, իսկ Այաքսը Յեկտորին՝ թանկարժեք գոտի:

Տրոյացիները հավաքվում են խորհրդի, որի ընթացքում Պարիսը մերժում է Յեկտորին վերադարձնելու առաջարկը և որոշում սահմանափակվել՝ հույներին հարուստ փրկագին տալով: Աքայացիներն այդ պայմանը չեն ընդունում:

Երգ VIII - Աստվածների ժողով: Ընդհատված մարտ:

Կողմերը որոշում են մեկօրյա զինադադար հայտարարել՝ սպանվածներին հողին հանձնելու համար, հաջորդ օրը վերսկսվում է պատերազմը: Ջևաը, հավատարիմ թետիսին տված խոստումին, օգնում է տրոյացիներին, որոնք հույներին ետ են մղում մինչև նավերը: Աթենասը և Յերան փորձում են օգնել քայացիներին, սակայն Ջևաը նրանց վերադարձնում է Օլիմպոս: Գիշերը Յեկտորի պնդումով տրոյացիները քաղաք չեն վերադառնում, մնում են մարտադաշտում, պատրաստվելով լուսաբացին լիովին ջախջախել հույներին:

Երգ IX - Պատգամավորություն:

Ազամենոնը խորհուրդ է հրավիրում, որոշում հարուստ ընծաներով և Բրիսեիսին վերադարձնելու խոստումով պատգամավորներ ուղարկել Աքիլլեսի մոտ: Աքիլլեսը, սակայն, սիրալիր ընդունելով զինակիցներին, անդրդվելի է մնում մարտին չմասնակցելու իր որոշման մեջ:

Երգ X - Դոլոնական

Գիշերը Ոդիսևսն ու Դիոմեդեսը լրտեսելու են ուղևորվում Տրոյա, ճանապարհին գերի են վերցնում տրոյացի լրտես Դոլոնեսին, որը հայտնում է տրոյացիների և նրանց օգնության եկած Թրակիայի թագավոր Ռեսոսի զորքերի դասավորությունը: Դիոմեդեսը Աթենասին զոհաբերություն է անում, զխատելով Դոլոնեսին, այնուհետև Ոդիսևսի հետ թափանցում է տրոյացիների ճամբարը,

սպանուն տասներկու թրակեացու և Ռեսոս թագավորին ու հետ վերադառնում երկու գողացված ձիով:

Երգ XI - Ազամեննոնի սխրանքները

Ազամեննոնը բազմաթիվ սխրանքներ է գործում, բայց վիրավորվում է: Վիրավորվում են նաև Ողիսևար, Աքիլլեսի ընկեր Մախսանը, Դիոնոդեսը:

Աքիլլեսի մտերիմ ընկեր Պատրոկլեսը խնդրում է նրանից զրահները՝ սարսափեցնելու համար հույների ճամբարը ներխուժող թշնամուն:

Երգ XII - Մարտ պարիսպների մոտ և

Երգ XIII - Նավերի մոտ

Շարունակվում է կատաղի և արյունալի ճակատամարտը, հատկապես աչքի են ընկնում Չեկտորը, Այաքսը: Համոզված լինելով, որ տրոյացիները կհաղթեն, Ջևան այլևս չի հետևում մարտին:

Երգ XIV - Ջևաի գայթակղումը

Պոսեյդոնը սկսում է օգնել հույներին, իսկ Չերան այդ ժամանակ սիրո թովչանքով շեղում է Ջևաի ուշադրությունը և քնեցնում նրան: Սակայն զարթնելուց հետո Ջևար նորից օգնության է հասնում տրոյացիներին և Ապոլլոնին ուղարկում է վերականգնելու Չեկտորի ուժերը:

Երգ XV - Նավերից հալածումը

Աքայացիների վիճակը գրեթե անհույս է, նրանք նահանջում են ծովափ, և Չեկտորը, փախուստն անհնար դարձնելու համար, պատրաստվում է հրկիզել նրանց նավերը:

Երգ XVI - Պատրոկլական

Աքիլլեսը համաձայնվում է իր զրահները տալ Պատրոկլեսին, որը գլխավորում է զորքը և հարձակվում տրոյացիների վրա, սպանում շատ թշնամիների, նույնիսկ Ջևաի որդի՝ Լիկեայի արքա Սարպեդոնին: Պատրոկլեսը հասնում է Տրոյայի պարիսպներին և երեք անգամ հարձակվում է քաղաքի վրա, սակայն անեն անգամ Ապոլլոնը ետ է մղում նրա գրոհները, Պատրոկլեսի գլխից պոկում է Աքիլլեսի սաղավարտը, նիզակը ջարդուփշուր անում, խլում է վահանը: Տեսնելով, որ զրահավորվածը Աքիլլեսը չէ, տրոյացիները քաջալերվում են և հարձակվում Պատրոկլեսի վրա: Եվֆորեսը թիկունքից ստորաբար հարվածում է անզեն հերոսին, և վրա հասած Չեկտորը սպանում է նրան:

Երգ XVII - Մենելաոսի սխրագործությունը

Մենելաոսը հերոսաբար պաշտպանում է Պատրոկլեսի դիակը, որի շուրջը կատաղի կռիվ է սկսվում: Չեկտորին հաջողվում է տիրանալ Աքիլլեսի զրահներին:

Երգ XVIII - Զինագործություն

Նեստոր արքայի որդի Անտիլոքոսը Աքիլլեսին հայտնում է սիրելի ընկերոջ՝ Պատրոկլեսի վախճանի բոթը: Աքիլլեսը, գլխին մոխիր ցանելով, դառն արցունքներ է թափում: Անգեմ կանգնում է նա բլրի վրա և երեք անգամ ահավոր ճիչ արձակում: Տրոյացիները սարսափահար փախչում են և Պատրոկլեսի դիմ վերջապես բերվում է հույների բանակատեղը, Աքիլլեսի վրանը: Աքիլլեսը ողջ գիշեր ողբում է ընկերոջ նահը, իսկ Օլիմպոսում այդ ընթացքում Յեփեստոսը Թետիսի խնդրանքով Աքիլլեսի համար նոր զրահներ է կռում /հատկապես հիանալի է վահանը, որի վրա դարբին աստվածը պատկերում է աստվածներ, աստղեր, մարտի և որսի տեսարաններ, արոտավայրեր, գեղեցիկ հարսներ/: Լուսաբացին նա պատրաստի զրահները դնում է Թետիսի ոտքերի տակ, և դիցուհին դրանք հասցնում է որդուն:

Երգ XIX - Դրածարում գայրության

Աքիլլեսը կամովին իբրև վրիժառու, վերադառնում է ռազմի դաշտ: Նա դժկամորեն է ընդունում Բրիսեիսին և Ագամեմնոնի ընծաները, ռազմակառք է բարձրանում և իր փայլատակող զրահներով նետվում մարտի:

Երգ XX - Դիցամարտ

Յերան, Աթենասը, Յերմեսն ու Յեփեստոսը մարտի են բռնվում հույների, իսկ Աֆրոդիտեն, Արտեմիսը, Ապոլլոնը, Արեսն ու գետերի աստված Քսանթոսը՝ տրոյացիների կողմից: Բախվում են բանակները, կոչ են արձակում Աթենասն ու Արեսը: Պոսեյդոնը ցնցում է ողջ երկիրը, նույնիսկ Աիդն է վեր թռչում իր գահից: Աքիլլեսն այդ ժամանակ կատաղի կռվում է, փնտրում Յեկտորին և սպանում նրա եղբորը՝ Պոլիդորին: Այդ տեսնելով Յեկտորը հարձակվում է Աքիլլեսի վրա: Երեք անգամ Աքիլլեսը հարվածում է նրան, բայց երեք անգամն էլ Ապոլլոնը խավարով պատում, փրկում է Յեկտորին:

Երգ XXI - Գետափնյա մարտը

Աքիլլեսի սրից փախչող տրոյացիները փրկություն են փնտրում Քսանթոս գետում, որի ջրերն այլևս չեն կարող հոսել: Քսանթոսն իր ջրերը թափում է Աքիլլեսի վրա, սակայն Յերան գետի դեմ է ուղարկում բոցահարող Յեփեստոսին: Արեսը նիզակով հարվածում է Աթենասի հովանուն, իսկ Աթենասը քարով խփում է նրա վզին: Տրոյացիները նահանջում են քաղաքի պարիսպների տակ, և Պրիամոս արքան հրամայում է բացել դարպասը:

Երգ XXII - Յեկտորի մահը

Իզուր են ծնողներն աղաչում Յեկտորին քաղաք մտնել. նա մնում է դաշտում և սպասում Աքիլլեսին, սակայն երբ հույն հերոսը

հարձակվում է նրա վրա, վախենում և փախուստի է դիմում: Աքիլլեսը հետապնդում է Յեկտորին, և նրանք երեք պտույտ են կատարում Տրոյայի շուրջը:

Ձևը մահվան վիճակ է գցում իր ոսկե կշեռքին: Յեկտորի նժարը իջնում է: Այդ տեսնելով՝ Ապոլլոնը լքում է նրան, իսկ Աթենասը, ընդունելով Յեկտորի եղբայր Դեիֆոբոսի կերպարանքը, ոգևորում է և օգնություն խոստանում, բայց երբ մենամարտն սկսվում է, անմիջապես անհետանում է: Աքիլլեսը, վերջապես, իր սուրը մխրճում է զրահներից ազատ Յեկտորի պարանոցը: Մահամերձ Յեկտորը խնդրում է Աքիլլեսին իր դին հանձնել հայրենակիցներին՝ վայել թաղման համար, սակայն Աքիլլեսը կապում է նրան իր կառքից և գետնով քարշ տալիս: Սիրելի որդու մարմնի պղծումը տեսնելով դառնորեն լալիս են Պրիամոսը և Յեկաբեն, նրանց հետ՝ պարիսպներին բարձրացած դժբախտ Անդրոմաքեն և մյուս տրոյացիները:

Երգ XXIII - Պատրոկլեսի թաղումը: Խաղեր

Հույները հսկայական խարույկ են պատրաստում, Պատրոկլեսի մարմինը յուղում են գառների և եզների ճարպով, ողբալով կտրում են իրենց մազերը և նրանցով ծածկում սիրելի ընկերոջ դին: Սպանում են չորս ձի և երկու շուն, խարույկի փայտերի վրա են դնում նաև Աքիլլեսի ձեռքով սպանված տասներկու տրոյացի պատանիներին: Աքիլլեսը վառում է խարույկը, որն այրվում է ողջ գիշեր, առավոտյան այն գինով հանգցնում, Պատրոկլեսի աճյունը ամփոփում ոսկե սափորի մեջ: Այնուհետև սկսվում են թաղման խաղերը՝ կառքերի վազք, բռնցքամարտ, սկավառակի և նիզակի նետում, նետածություն:

Այդ ընթացքում Յեկտորի պղծված մարմինը ընկած է մնում խարույկի մոտ, բայց Աֆրոդիտեն այն օծում է անուշահոտ յուղերով, իսկ Ապոլլոնը ամպով պաշտպանում է արևից:

Երգ XXIV - Յեկտորի փրկությունը

Արևածագին Աքիլլեսը Յեկտորի մարմինը նորից կապում է իր կառքից և երեք պտույտ է տալիս Պատրոկլեսի գերեզմանաբլրի շուրջը: Անգամ աստվածներն են զայրանում նման վերաբերմունքից: Ձևը Թետիսի միջոցով հրամայում է Աքիլլեսին Յեկտորի դին մեծ փրկագնով հանձնել տրոյացիներին: Յերմեսը ծեր Պրիամոսին օգնում է թափանցել Աքիլլեսի վրանը, որտեղ դժբախտ հայրը, համբուրելով որդուն սպանած ձեռքերը, Աքիլլեսին աղերսում է վերադարձնել Յեկտորի մարմինը: Նրանք միասին ողբում են պատերազմի պատճառած վիշտը:

*Մտիկ արա աստվածներին, հիշիր հորդ և ինձ գթա,
Նրանից շատ թշվառ եմ ես՝ և կրեցի այնպես վշտեր,
Որ ոչ մի մարդ մահկանացու այս աշխարհում չէր տեսել դեռ:
Տես, ձեռն անգամ համբուրեցի, որ սպանեց իմ զավակին:*

Աքիլեսը հրամայում է իր ստրկուհիներին լվանալ Յեկտորի մարմինը, որն անվնաս էր մնացել աստվածների բարեհաճության շնորհիվ: Աքիլեսն ինքն է բարձրացնում դիակը և դնում կառքին: Պրիամոսի պատվին նա ճոխ ընթրիք է կազմակերպում, բայց երբ բոլորն արդեն քուն են մտնում, Յերմեսը, վախենալով հույների նենգությունից, հանդում է Պրիամոսին արագ հեռանալ: Լուսաբացին Պրիամոսը մտնում է Տրոյա, նրան դիմավորում են ողբացող Յեկաբեն, Անդրոմաքեն, Կասսանդրան, Յեդիմեն: Ինը օր շարունակ Իդե սարից փայտ են բերում դիակիզման խարույկի համար: Տասներորդ օրը այրում են Յեկտորի մարմինը, աճյունը ոսկե սափորով դնում գերեզման, վրան տապանաքարեր շարում և դամբարանաբլուր բարձրացնում: Յեկտորի թաղման և Պրիամոսի պալատի ճոխ հացկերուբի նկարագրությամբ էլ ավարտվում է «Իլիականը»:

«ՈՂԻՍԱԿԱՆ»

Ինչպես և «Իլիականում», այստեղ նույնպես հսկայական նյութ է ի մի բերված, բայց կառուցվածքի առումով «Ողիսականն» ավելի բարդ է: Պոեմն սկսվում է պատմության կեսից, իսկ նախորդող իրադարձությունների մասին տեղեկանում ենք կենտրոնական երգերից: Ի տարբերություն «Իլիականի», «Ողիսականի» սյուժեն ոչ թե հերոսական է, այլ հեքիաթային, արկածային և կենցաղային: Գլխավոր հերոսն ավելի վառ է արտահայտված:

«Ողիսականը» նույնպես բաժանված է **24** գրքի կամ երգի, թեման է Իթակե կղզու թագավոր Ողիսևսի վերադարձը տաս տարի տևած Տրոյական պատերազմից և տասնամյա ճանապարհորդությունից հետո:

Երգ I - Պոեմը սկսվում է Մուսային ուղղված ավանդական դիմումով և Օլիմպոսում աստվածների ժողովի նկարագրությամբ:

*Երգիր մուսա, այն մեծ մարդուն, խորագետին բազմահմար,
Որ Իլիոնը քանդելուց ետ թափառական շրջեց երկար,
Որ այց գնաց շատ քաղաքներ, տեսավ մարդկանց վարքերն
ու բարք,
Որ վշտերուն և ծովերուն կրեց բազում նա տառապանք,*

*Որ իր և իր ընկերների դեպ հայրենի դարձը հոգաց,
Բայց զուր եղավ հոգսը նրա, չհաջողվեց փրկել նրանց,
Քանզի նրանք երկար ճամփին ոչնչացան բոլորովին:*

.....
Արդ այս մասին, ասա մեզ բան, դուստր Ձևսի, ո՛վ դիցուհի...

Աստվածները քննարկում են Օգիգեա կղզում Կալիպսե ջրահարսի մոտ գերի պահվող Ոդիսևսի ճակատագիրը: Օգտվելով Ոդիսևսին հետապնդող Պոսեյդոնի բացակայությունից, աստվածները որոշում են թույլ տալ Ոդիսևսին վերադառնալ հայրենիք և իրենց սուրհանդակ Չերմեսին են ուղարկում հայտնելու Կալիպսեին այդ վճիռը: Աթենասը ուղևորվում է Իթակե և Ոդիսևսի որդի Տելեմաքոսին դրդում գնալ հորը փնտրելու: Քսան տարի բացակայող թագավորին իթակեցիներից շատերը մեռած են համարում և երիտասարդ լկտի ազնվականների մի խումբ պահանջում է, որ Ոդիսևսի կինը՝ Պենելոպեյն իրենցից մեկին ընտրի ամուսին: Պենելոպեյն /որն առ այսօր հավատարիմ կնոջ խորհրդանիշն է/, խոստանում է ընտրություն կատարել Ոդիսևսի հոր՝ Լաերտի համար դագաղի ոստայն գործելուց հետո, բայց խորամանկորեն ժամանակ է շահում, գիշերները քանդելով ցերեկվա գործածը:

Երգ II - Աթենասը խորհուրդ է տալիս Տելեմաքոսին դիմել իթակեցիներին, գանգատվել Ոդիսևսի տանը խնջույքներ կազմակերպող և նրա ունեցվածքը թալանող փեսացուներից, որոնք անպատիժ ծաղրում են բոլորին, նույնիսկ գուշակ Չալիփերսոսին, որը կանխագուշակում է Ոդիսևսի մոտալուտ վերադարձը:

Ժողովուրդը Տելեմաքոսին նալ է հատկացնում, դաստիարակ Մենթորի կերպարանքն ընդունած Աթենասի ուղեկցությամբ նա մեկնում է Տրոյայի արշավանքից վերադարձած թագավորների մոտ:

Երգ III - Պիլոսի թագավոր, ծեր Նեստորը սիրալիր ընդունում է Տելեմաքոսին, պատմում Ագամեմնոնի սպանության մասին, Ոդիսևսի ճակատագրից անտեղյակ, խորհուրդ է տալիս գնալ Սպարտա, Մենելաոս արքայի մոտ:

Երգ IV - Մենելաոսը և Չեղիներն սրտաբաց են ընդունում Ոդիսևսի որդուն: Նրանք Մենելաոսի որդու հարսանիքն են տոնում, իսկ նրանց դստերը՝ Չերմիոնեին, ճանապարհում են ապագա ամուսնու՝ Աքիլևսի որդի Նեոպտոլեմի մոտ: Տելեմաքոսը նրանցից իմանում է, թե ինչպես Տրոյական պատերազմի ժամանակ ծպտված Ոդիսևսը թափանցեց Տրոյա, և Չեղիներն, ճանաչելով նրան, չմատնեց, թե ինչպես Չեղիներն աստվածների դրդումով մոտեցավ Տրոյական ձիուն և ներսում թաքնված հերոսների սիրելի կանանց

ծայները ընդօրինակելով կանչեց նրանց, սակայն խորամանկ Ողիսևը թույլ չտվեց ընկերներին պատասխանել: Վերջապես Մենելաոսը և Յեղիմեն Տելեմաքոսին հայտնում են, որ նրա հայրը մնում է Օգիգեա կղզում, որտեղ ջրահարս Կալիպսեն համոզում է ամուսնանալ իր հետ:

Երգ V - Յերմեսից ստանալով աստվածների հրամանը, Կալիպսեն ազատում է Ողիսևսին, որը լաստ է պատրաստում և ուղևորվում դեպի հայրենիք, սակայն տասնութերորդ օրը Պոսեյդոնը նկատում է նրան, փոթորիկ ուղարկում, փշրում լաստը: Լևկոթե աստվածուհու տված կախարդական թիկնոցի շնորհիվ Ողիսևսին հաջողվում է եռօրյա կենաց և մահու պայքարից հետո ուժասպառ դուրս գալ անհայտ մի կղզու ափ, որտեղ նա թաղվում է չորացած տերևների մեջ և քնում:

Երգ VI - Սքերիա կղզում բնակվող թեակացիների թագավոր Ալքինոյի դուստրը՝ Նավսիկեն Աթենասի դրոմամբ առավոտյան իր աղախիմների հետ ծովափ է գալիս լվացք անելու: Պերճ զգեստները ջրի մեջ ոտքերով տրորելուց և թփերին փռելուց հետո աղջիկները սկսում են զնդակ խաղալ: Նրանց ծայներից Ողիսևը զարթնում է, մոտ գալիս և բացատրում, որ քսան օր ալեկոծ ծովում է անցկացրել: Խղճալով գեղեցկադեմ դուցազնին, Նավսիկեն նրան հագուստ է առաջարկում, ցույց տալիս քաղաք տանող ճանապարհը, բայց բամբասանքներից խուսափելու համար ինքը Ողիսևսին չի ուղեկցում:

Երգ VII - Թեակացիների թագավոր Ալքինոյը և թագուհի Արետեն օտարականի գեղեցկությամբ և փառահեղ տեսքով հիացած, խոստանում են օգնել նրան:

Երգ VIII - Հաջորդ օրը հյուրի պատվին կազմակերպված խնջույքի ժամանակ կույր ռապսոդ Դեմոդոկոսը /որն ըստ երևույթին Հոմերոսի նախատիպն է/, երգում է Տրոյական պատերազմում հույն հերոսների սխրանքների մասին: Այնուհետև խաղեր են կազմակերպվում, որոնց մասնակցում է նաև Ողիսևը:

Երգ IX - Խնջույքը շարունակվում է: Դեմոդոկոսը երգում է Տրոյական ձիու և Ողիսևսի սխրանքների մասին: Հյուրն արտասվում և խոստովանում է թեակացիներին իր ով լինելը: Ողիսևսին օգնելու համար հուզված Ալքինոյը տրամադրում է թեակացիներին պատկանող կախարդական նավը, որն առանց առազաստի կամ թիերի ուղևորին հասցնում է իր նպատակին:

Մեկնելուց առաջ Ողիսևը պատմում է իր տասնամյա թափառումների մանրամասները:

Տրոյայի ափերից տասներկու նավով հեռանալուց հետո, նա պատերազմում է Թրակիայում ապրող կիկոնների դեմ: Իր ուղեկից-

Երկրից մի քանիսին կորցնում է լոթոֆազների /լոթոս խժռողների/ երկրում, որը որոշ տվյալներով, այժմյան Լիբիան է: Փորձելով այդ կախարդական ծաղիկը, նրանք մոռանում են ամեն բան՝ հայնենիք, ընտանիք, պարտք և մնում են այդ երկրում:

Այնուհետև նրանք ընկնում են կիկլոպների /կամ ցիկլոպների/ կղզին: Այդ միակնյա մարդակեր հսկաները ապրում են քարանձավներում, որտեղ և պահում են իրենց գառներն ու այծերը: Կիկլոպներից մեկը՝ Պոսեյդոնի որդի Պոլիֆեմը, Ողիսսսին տասներկու ուղեկիցների հետ միասին քշում է իր քարանձավը և ամեն երեկո նրանցից երկուսին խժռում: Տեսնելով, որ մուտքը փակող ժայռը տեղաշարժելը մարդկային ուժերից վեր է, խելամիտ Ողիսսը խորամանկության է դիմում, գիճովցնում է Պոլիֆեմին և կրակի վրա շիկացրած մահակի սուր ծայրով կուրացնում: Առավոտյան ոչխարների փորերի տակ թաքնվելով նրանք փախչում են, նավով հեռանում: Ողիսսը հաղթանակած գոռում է իր անունը, Պոլիֆեմը դիմում է հորը՝ Պոսեյդոնին, խնդրելով պատժել հանդուգն մահկանացուին: Պոսեյդոնը սկսում է հետապնդել Ողիսսին, ինչը և դառնում է նրա տասնամյա թափառումների պատճառը:

Երգ X - Քամիների աստված Էոլոսը Ողիսսին անբարենպաստ քամիներն ամփոփող մի պարկ է տալիս, սակայն կարծելով, որ այնտեղ պահված է Ողիսսի հարստությունը, ուղեկիցները այն գողանում և քանդում են:

Մարդակեր Լիստրիգոնների հարձակումից հետո տասներկու նավից մնում է միայն մեկը, որով Ողիսսը հայտնվում է Զելիոսի դստեր, գեղեցիկ կախարդուհի Կիրկեի /կամ Տիրցեայի/ կղզում: Կիրկեն Ողիսսի ընկերներին խոզ է դարձնում, սակայն Ողիսսը փրկում է նրանց և մի ամբողջ տարի Կիրկեի սիրո և խնջույքների հաճույքը վայելելուց հետո ուղևորվում է սովերների թագավորություն՝ թեբեական գուշակ Տիրեսիոսից իմանալու իր ճակատագիրը:

Երգ XI - Հանդերձյալ աշխարհի մոտ Ողիսսը Կիրկեի խորհրդով փոս է փորում, մեղր, գինի և ջուր է լցնում, ավելացնում սպիտակ և սև գառների արյունը և սպասում Տիրեսիոսի սովերին: Իմանալով իրեն սպասող բոլոր աղետների մասին, Ողիսսը զրուցում է իր մոր, Տրոյական արշավանքի մասնակիցների հետ, վերադառնում է Էյա կղզի, Կիրկեի մոտ:

Երգ XII - Կիրկեն սովորեցնում է Ողիսսին փորձանքներից խուսափելու հնարքները և հրաժեշտ տալիս նրան: Ճանապարհին Ողիսսի նավն անցնում է մահաբեր սիրենիների /կիսակին, կիսաթռչուն էակներ/ կղզու մոտով: Սիրենիներն իրենց կախարդական երգով գրավում և կործանում են նավագնացներին. սակայն

Ողիսևան իր ուղեկիցների ականջները մոմ է լցնում, իրեն էլ հրամայում է կայմից կապել և չարձակել մինչև կղզուց հեռանալը:

Հաջորդ արկածը կապված է երկու հրեշների՝ Սկիլլայի և Քարիբդայի մոտով անցնելու վտանգի հետ: Սկիլլան աղմկով և ծխով կուլ է տալիս շուրջը գտնվող նավերը, իսկ Քարիբդան իր վեց երախներով և երեք ժանիքներով խժռում է Ողիսևսի վեց ուղեկիցներին: Վերջապես նրանք հասնում են Տրինակրիա /այժմյան Սարդինիա/ կղզին, որտեղ արածում են Հելիոս աստծո սրբազան ցուլերը: Մի ամբողջ ամիս աստվածները համընթաց քամի չեն ուղարկում, պաշարները սպառվում են: Չնայած Ողիսևսի նախագուշացմանը, նրա քաղցած ընկերները մորթում են ցուլերից մի քանիսին: Հելիոսը զայրանում է, գանգատվում Ձևսին, որը թույլ է տալիս Պոսեյդոնին փոթորիկ ուղարկել և ոչնչացնել Ողիսևսի նավը: Բոլոր ուղեկիցները զոհվում են, իսկ Ողիսևսին ինը օր անց ալիքները շարտում են Օգիգեա կղզի, հանձնում ջրահարս Կալիպսեի կամքին:

Երգ XIII - Թեակացիները հարուստ ընծաներով ճանապարհում են Ողիսևսին: Նրանց նավը հերոսին հասցնում է հարազատ Իթակե, սակայն հետադարձ ճանապարհին Պոսեյդոնը այդ նավը ապառաժ է դարձնում: Աթենասը Ողիսևսի վերադարձը ապահովելու համար, նրան վերափոխում է աղքատ ծերուկի:

Երգ XIV-XV - Ողիսևսը գալիս է իրեն հավատարիմ խոզարած Էվմեոսի մոտ, իսկ Աթենասը Սպարտայում գտնում է Տելեմաքոսին, ստիպում արագ տուն վերադառնալ, ճանապարհին օգնելով խուսափել փեսացուների դարանից:

Երգ XVI - Էվմեոսի տանը Ողիսևսը հանդիպում է Տելեմաքոսին, ամեն ինչ խոստովանում է նրան, պահանջում է գաղտնի պահել իր վերադարձը և պատրաստվում է պատժել Պենելոպեի փեսացուներին:

Երգ XVII - Ծեր մուրացկանի տեսքով է մտնում Ողիսևսը իր պալատը, հավատարիմ շունը՝ Արգուսը տիրոջը քսան տարի սպասելուց հետո ճանաչում է նրան և մեռնում: Տուն մտնելիս, Ողիսևսը ենթարկվում է խնջույքի հավաքված փեսացուների վիրավորանքներին:

Երգ XVIII - Շրջմուլիկ Իրոսը ծաղրում է Ողիսևսին և ուզում է կռվել նրա հետ, սակայն Ողիսևսը ծեծում և դուրս է շարտում: Խնջույքը շարունակվում է մինչև ուշ գիշեր:

Երգ XIX - Վերջապես խնջույքից հետո, երբ Ողիսևսը Տելեմաքոսի հետ դուրս է բերում դահլիճում պահվող գեմքերը, մտնում է գեղեցիկ և խելամիտ Պենելոպեն: Ողիսևսը պատմում է, որ հանդիպել է նրա ամուսնուն, որը շուտով կվերադառնա: Պենելոպեն չի

հավատում, բայց հրամայում է սիրալիր վարվել աղքատ ծերունու հետ: Ողիսևի պառավ դայակ էվրիկլեն լվանում է հյուրի ոտքերը, սպիից ճանաչում է տիրոջը:

Երգ XX-XXI - Հաջորդ օրը փեսացուները հավաքվում են խնջույքը շարունակելու: Ստրկուհիներից մեկը մատնում է Պենելոպեին, պատմելով, որ թագուհին խորամանկորեն գիշերները քանդում է ցերեկվա գործածը՝ ժամանակ շահելու նպատակով: Փեսացուները պահանջում են անմիջապես ընտրություն կատարել, Պենելոպեն ստիպված հայտնում է, որ կամուսնանա փեսացուներից նրա հետ, ով Ողիսևի աղեղից նետը կանցկացնի տասներկու օղերի միջով: Մրցույթը սկսվում է, երիտասարդ և ուժեղ փեսացուներից ոչ մեկին չի հաջողվում նույնիսկ կռել աղեղը: Հանկարծ ամբոխից դուրս եկած չքավոր մի օտարական վերցնում է աղեղը և ենթարկվելով փեսացուների ծաղրանքներին, մրցույթին մասնակցելու թույլտվություն խնդրում: Նա հեշտությամբ է կռում աղեղը, նետը անց կացնում տասներկու օղերի միջով:

Երգ XXII - Աթենասը անմիջապես վերադարձնում է Ողիսևի իսկական կերպարանքը, նա հայտնում է իր ով լինելը, հաջորդ նետով սպանում է փեսացուներից մեկին՝ Անտինոյին, հետո, Տելեմաքոսի և Էվմեոսի օգնությամբ՝ բոլոր մնացածներին: Ներում է շնորհում միայն երգիչ Թեմիոսին:

Երգ XXIII - Պենելոպեն, աչքերին չհավատալով, ուզում է համոզվել, որ գեղեցկադեմ դյուցազնը իրոք սիրելի անուսինն է, և երբ Ողիսևը նկարագրում է իր ձեռքով սարքած նրանց մահճակալը, Պենելոպեն վերջապես ճանաչում և գրկում է նրան:

Երգ XXIV - Ողիսևը հանդիպում է հոր՝ Լաերտի, հետո սպանված փեսացուների հարազատների հետ: Նրանք քաղաքում ապստամբություն են բարձրացնում, սակայն դաստիարակ Մենթորի կերպարանք ընդունած Աթենասի օգնությամբ Ողիսևը նրանց ներում է շնորհում, հաշտություն կնքում իր ժողովրդի հետ:

Հոմերոսյան արվեստը

I. Հոմերոսի պոեմները *ընայիստական են*, ներկայացնում են դարաշրջանի բոլոր առանձնահատկությունները, դասակարգերը, ստրկությունը, կենցաղային տարրերը, հագուստը, սպառազինությունը, ավանդույթները, գրույցները, համայնքի ժողովները /ազորաները/ և այլն: Պատահական չէ, որ Հոմերոսի պոեմներն անվանում են «*հնադարի հանրագիտարան*»:

II. Պոեմներն արտահայտում են հեղինակի *հակապատերազմական ուղղվածությունը, մարդասիրությունը*, մարդկային կյանքի գնահատումը:

III. Չնայած հարգանքի արժանի թշնամիների ճշմարտացի նկարագրությանը, հույն հեղինակի պոեմները անկեղծ *հայրենասիրական են*՝ հերոսները մարտնչում են հանուն հայրենիքի, որի մասին մեծ սիրով և կարոտով են արտահայտվում:

IV. Պոեմները շարադրված են էպիկական ոճով, որն հետագայում պարտադիր է դառնում եվրոպական էպիկական պոեմների համար:

Այն ենթադրում է՝

ա. շարադրանքի *հանդիսավորությունը*, վերամբարձ ոճ, հերոսների անունների հետ անպայմանորեն օգտագործվող *էպիտետներ* /Ձևը ամպահալած, շանթարձակ, Աքիլլեսն արագավազ, Այաքսն ուղղամիտ, Ոդիսևսը խորամանկ/:

բ. կերպարների վեհակերտություն, գլխավոր գործող անձանց *հերոսականությունը*, գերմարդկային սխրագործություններ:

գ. *անհատապաշտություն*, հերոսներն ազատ են իրենց ընտրության մեջ, նրանց վրա չի ծանրանում ո՛չ աստվածների, ո՛չ պետության իշխանությունը: /Աքիլլեսն, օրինակ, իր որոշման մեջ կողմնորոշվում է միայն իր ցանկությամբ և վիրավորվածությամբ/:

դ. կերպարների *ստատիկա* /անփոփոխականություն/, նրանք չեն փոխվում ո՛չ իրենց բնավորությամբ, ո՛չ էլ արտաքինով, չնայած անցնող տասնյակ տարիներին:

ե. *աստվածների մարդկայնագում*՝ նրանց մասնակցությունը երկրի վրա կատարվող գործողություններին, բնավորությունները մարդկային արժանիքներով ու արատներով օժտելը:

զ. *դեմոկրատիզմը*՝ հերոսների հավասարությունը անկախ սոցիալական դիրքից /թագավոր Ոդիսևսի մտերմությունը խոզարածի հետ, արքայադուստր Նավսիկեի լվացք անելը աղախիմների հետ/:

V. Հոմերոսյան պոեմների բանաստեղծական տեխնիկական ենթադրում է *հեքսամետրը*, հաճախակի *կրկնությունները* /որոնք կազմում են պոեմների ծավալի 1/3-ը/, հասարակ և բարձր ոճերի, հանդիսավորության և հումորի, դրամատիզմի և քնարականության համատեղությունը:

ՀԵՏԻՈՂՈՍԻ ԴԻՂԱԿՏԻԿ ԷՊՈՍԸ

Մ.թ.ա. VIII-VII դարերում հերոսական էպոսի զարգացումը դադարում է. դա բացատրվում է և՛ հոմերոսյան մեծության համեմարների բացակայությամբ, և՛ ռազմական թեմատիկայի համդեպ հետաքրքրության թուլացմամբ:

Ըստ հին առասպելի, ռապսոդների մի մրցույթում նրանցից մեկը հատվածներ էր կատարում հոմերոսյան հերոսական պոեմներից, մյուսը գովերգում էր խաղաղ կյանքը և գյուղացիական աշխատանքները: Ոմն Պանդեոս արքան մրցանակը շնորհում է երկրորդին: Այսօր Պանդեոսի անունը խորհրդանշում է վատ ճաշակ և թուլամտություն, բայց և այնպես նրա որոշումը ինչ-որ չափով արտացոլում է ժամանակաշրջանի ճաշակը, աշխարհայացքը:

Հաղթող երգչի անունն էր **Հեսիոդոս**: Ամտարակույս՝ նա իր տաղանդով զիջում էր Հոմերոսին, սակայն իր ուրույն տեղն է զբաղեցնում գրականության պատմության մեջ որպես դիդակտիկ էպոսի ստեղծող: Հեսիոդոսի «Աշխատանքներ ու օրեր» դիդակտիկ /այսինքն դաստիարակչական, խրատական/ պոեմն իր ձևով գյուղատնտեսական տրակտատ է, որն ընդգրկում է չորս գլխավոր գյուղական աշխատանքները՝ հողագործություն, անասնապահություն, խաղողագործություն և մեղվաբուծություն: Հեղինակի տված խորհուրդներն իր ժամանակի համար, անկասկած, մեծ արժեք ունեին, բայց այսօր դրանց բովանդակությունը միայն պատմական հետաքրքրություն ունի: Իսկ իր գեղարվեստական արժանիքներով, չնայած արտաքին նմանությանը /հեքսամետր, կրկնողություններ, դիցաբանական հիմք, իոնական բարբառ/, Հոմերոսի պոեմների հետ համեմատվել չի կարող:

«Աշխատանքներ ու օրեր» պոեմը Հեսիոդոսը, որպես խրատ և մխիթարանք, ուղղել է իր եղբորը՝ Պերսոսին, որը սնանկացել էր հոր ժառանգության անարդար բաժանման պատճառով: Նյութական օգնության փոխարեն Հեսիոդոսը նրան խորհուրդներ է տալիս, մշտապես հիշեցնելով աշխատելու անհրաժեշտությունը: Մարդը չի կարող դիմակայել աստվածների կամքին, որից լիովին կախված է: Աստվածները պատժում են մարդկանց այն օրվանից, երբ Պրոմեթևսը նրանցից գողացավ կրակը և տվեց մարդկանց: Այդ պատճառով կյանքը ծանր է, լի պայքարով և հետզհետե վատթարանում է: Այդ միտքը հաստատվում է երկու առասպելով՝ Պանդորայի արկղի և հինգ տոհմի մասին:

Կամենալով պատժել մարդկանց, որոնք մեծամտաբար ձգտում են հավասարվել աստվածներին, վերջիններս ստեղծում են մի չքնաղ գեղեցկուհի՝ Պանդորային և ուղարկում երկիր, Պրոմեթև-

սի եղբորը՝ Եփիմեթեսին կնության: Հարուստ ընծաների հետ նրանք տալիս են մի արկղ, որն արգելում են բացել: Սակայն երկիր հասնելուն պես, Պանդոբան բաց է անում արկղը. այնտեղից դուրս են թափվում մարդկային բոլոր արատներն ու դժբախտությունները՝ նախանձը, խանդը, հիվանդությունները, չարությունը և այլն: Իր արածից սարսափած, Պանդոբան փակում է արկղը, չիմանալով, որ նրա մեջ է մնացել հույսը:

Ըստ երկրորդ առասպելի երկրի վրա միմյանց հաջորդել են մարդկային հւնգ «տոհմ» կամ սերունդ: Եթե առաջին՝ ոսկե դարի ժամանակ մարդիկ երջանիկ էին, անհոգ ապրում էին բնության առատ բարիքներով, ապա արծաթե և հաջորդ՝ պղնձե դարերում կյանքը բարդացել էր, առաջացել էին պատերազմները, ատելությունը, մարդասպանությունը, մարդիկ ստիպված էին աշխատել, պայքարել դժկամ բնության դեմ: Պղնձե դարից հետո պիտի գար երկաթե դարը, Հեսիոդոսը ավելացնում է «հերոսների սերունդը», որն ուզում է օգնել մարդկությանը, բայց ապարդյուն: Ինքը՝ Հեսիոդոսը, ապրում էր իր պատկերացմամբ ամենադաժամ երկաթե դարում, երբ մարդկությունը հասել էր ինքնակործանման եզրին: Մարդկանց հարաբերությունները Հեսիոդոսը ներկայացնում է երկու երիսի տեսքով. մեկը պառակտման չար աստվածուհի է, մյուսը բարի է, մարմնավորում է աշխատանքային մրցակցությունը: Երիսներից բացի երկրի վրա են գտնվում «երեսուն անմահ պահապան», որոնք մարդկանց բոլոր արարքները հայտնում են Ջևսին. իսկ Ջևսն իր հերթին պատժում է բոլորին, նույնիսկ թագավորներին: Մարդկանց մնում է ազնվորեն ապրել և աշխատել, այն էլ միայն Հեսիոդոսի խրատների համաձայն: Նրա խորհուրդները զործնական են և խիստ, արտահայտում են աշխատասեր և հաշվենկատ գյուղացու աշխարհայացքը, որտեղ զգացմունքներին տեղ չի մնում. կանանց հանդեպ սերը ավելորդ ծախսեր է պահանջում, այդ պատճառով մերժվում է, բայց ամուսնանալը անհրաժեշտություն է /գերադասելի է՝ հարևանուհու հետ, հողամասերը միացնելու հեռանկարով/, ժառանգությունը չկիսելու համար պետք է ունենալ միայն մի որդի և այլն:

Պոեմի վերջում Հեսիոդոսը տալիս է տարբեր աշխատանքների համար «բախտավոր» և «դժբախտ» օրերի ցանկը: Հեսիոդոսի պոեմներից պահպանվել է նաև «*Թեոգոնիան*» /Աստվածների ծագումը/, որը մտահորիզոնի առումով ավելի լայն է, սակայն այստեղ նույնպես ցայտուն երևում է հեղինակի ինքնահավանությունը. նա իրեն հակադրում է մյուս բոլոր երգիչներին, որոնք չեն կարող ճշմարտության ուսուցիչներ լինել, քանի որ Մուսաները

միայն իրեն՝ Չեսիոդոսին են պսակադրել և ներշնչել աստվածային շնորհը:

«Թեոզոնիայում» Չեսիոդոսը փորձում է ստեղծել աստվածների տոհմաբանությունը, ինչը ինքնին չափազանց հետաքրքիր է, որովհետև ներկայացնում է աշխարհի փիլիսոփայական ընկալման առաջին փորձը: Այսպես՝ Քաոսը, Գեան, Էրոսը և Քրոնոսը մարմնավորում են տարածության, մատերիայի, շարժման և ժամանակի փիլիսոփայական կատեգորիաները:

Չոմերոսի կողմից սիրված «երիտասարդ» աստվածներին /Աթենասին, Աֆրոդիտեին, Ապոլլոնին, Արեսին և ուրիշներին/ Չեսիոդոսը ավելի քիչ տեղ է հատկացնում, զերադասելով պատմել մայրիշխանությունից հայրիշխանության անցման, ավագ և կրտսեր աստվածների միջև պայքարի, տիտանների պատմության, Ջևսի սիրային կապերի մասին:

Չեսիոդոսի գրչին են պատկանել նաև երեք չպահպանված պոեմներ՝ «Կանանց ցանկը» /հույների նախամայրերի, հերոսուհիների մասին/, «Սելամպոդիան», «Թետիսի և Պելևսի ամուսնությունը»:

ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

VI դարը քնարերգության դար է: Անտիկ քնարերգությունը /լիրիկան/ գոյություն է ունեցել դեռ նախահոմերոսյան ժամանակներում՝ կենցաղային, ծիսական կամ աշխատանքային երգերի տեսքով, սակայն լիրիկայի զարգացումը VI դարում կապված է անհատ պոետի ձևավորման հետ, մի անձնավորության, որն իրեն համարում է ինքնուրույն գոյություն ունեցող, ապրող և զգացող անհատականություն:

Լիրիկայի կատարումը ենթադրում է պարային տարր և քնարի կամ լիրայի /այստեղից և անվանումը՝ լիրիկա/, հետագայում չորս կամ յոթ լարանոց կիթառի, սրնգի նվագակցություն: Լիրիկական պոեզիայի մուսան՝ Եվտերպեն, ավանդաբար պատկերվում է կրկնակի սրնգով, իսկ էրոտիկ լիրիկայի մուսա էրատոն՝ քնարով:

Անտիկ քնարերգությունը զարգացել է երկու ուղղությամբ՝ դեկլամացիոն և երգային:

Դեկլամացիոն /արտասանական/ լիրիկան ընդգրկում է երկու ժանր՝ *Էլեգիան* և *յամբը*: Էլեգիան սկզբում ողբ էր, հետագայում վշտալի բնույթը փոխարինվեց խրատական, փիլիսոփայական կամ դրդիչ ուղղվածությամբ: Էլեգիաները կատարվում էին խնջույքների կամ համայնական ժողովների ժամանակ, հաճախ սրնգի նվագակ-

ցությամբ: Օգտագործվում էր հեքսամետրը, երբեմն պենտամետրին զուգահեռ: Քաղաքական, ռազմահայրենասիրական էլեգիան կարևոր դեր էր խաղում հասարակական և քաղաքական կյանքում: Այսպես, 671թ./մ.թ.ա./, Մեսենական պատերազմի ժամանակ սպարտացիները աթենացիներից խնդրեցին օգնության ուղարկել մի զորավարի: Աթենացիները, որպես ծաղրանք, ուղարկեցին Տիրտեոսին՝ միաչքանի կաղ ուսուցչի, որը, սակայն, իր ռազմատենչ էլեգիաներով այնպես ոգևորեց սպարտացիներին, որ նրանք հաղթեցին: Հայտնի է նաև, որ աթենացի օրենսդիր Սոլոնը երկար ճանապարհորդությունից վերադառնալով հայրենիք, իմանում է, որ մեզարացիները զավթել են Աթենքին պատկանող Սալամին կղզին: Խելազար ձևանալով՝ Սոլոնը կանգնում է հրապարակում և աթենացիների պատվին, նրանց հայրենասիրությանն ուղղված էլեգիաներ արտասանում: Որոշման ենք էլեգիաների ամենահայտնի հեղինակն էր **Կալլիմոսը**: Սիրային էլեգիան ներկայացված է **Միմներմոսի** փայլուն երկերով: Միմներմոսը համոզված է, որ տղամարդու համար նախընտրելի է մեռնել, քան ապրել ծեր և առանց հաճուքների: Թո՛ղ որ կյանքը տևի միայն 60 տարի, բայց լինի սիրով, «ոսկե Աֆրոդիտեին» ծառայությամբ լի: Միմներմոսը համարվում է նաև էրոտիկ էլեգիայի ստեղծողը: Մոտ 150 սիրային էլեգիայի հեղինակ է **Թեոգնիդեսը**, սակայն հայտնի է նաև նրա խրատների ժողովածուն, որն ուղղված է Կիռնոս անունով մի պատանու:

Յամբը՝ ոտանավոր է, որը գրված է բուն յամբով /ս --/ կամ տրոխայով /քորեյով -- ս/, կատարվում էր պտղաբերության, հողագործական տոների ժամանակ: Յամբի համար բնորոշ են ծաղրական բնույթը, հեզմանքը, հայիոյանքը, զվարճանքը: Երբեմն յամբերն ուղղված էին ժողովրդի սիրելիների դեմ՝ պահպանելով նրանց չար աչքից: Այդ պատկերացումը հետագայում տարածվել էր նաև Հռոմում, այսպես՝ Հուլիոս Կեսարը ներողամտաբար էր վերաբերվում իր մասին երգվող յամբերին, նույնիսկ ճաղատի վերաբերյալ խիստ վշտացնող ակնարկներին: Յամբերը ոճի առումով մատչելի էին և հեշտ հիշվող, ուրեմն, արագ տարածվելով, կարող էին վտանգավոր գեներ դառնալ: Հայտնի է, օրինակ, որ ոմն Լիկամբոսը ինքնքսպան է եղել իր դեմ գրված յամբերի պատճառով: Այդ յամբերի հեղինակը՝ փայլուն պոետ **Արքիլոքոսը**, վիրավորված էր, որ Լիկամբոսը իր գեղեցիկ դատերը՝ Նիոբուլեին պոետին կնության չէր տվել, պատճառաբանելով նրա ազնվականից և ստրկուհուց ապօրինի ծնված լինելը: Արքիլոքոսը թողեց հայրենիքը, որպես վարձկան զինվոր մեկնեց պատերազմի և զոհվեց: Նա ոչ միայն յամբերի, այլև էլեգիաների, էպիգրամների հեղինակ է, ստեղծել է սրնգի համար երաժշտական գործեր: Նրա երկերը և՛ փիլիսոփայա-

կան են, և՛ սրամիտ, հայրենասիրական և սիրային, ռազմատենչ և ուրախ: Ժամանակակիցները նրան համեմատում էին Յոն Կեքոսի հետ: Յամբերի հայտնի հեղինակներից է նաև **Սիմոնիդեսը**, որը գովերգում էր կյանքը, տոկունությունը, լավատեսությունը՝ անգամ ամենածանր պահերին: Բանաստեղծը հատուկ ուշադրության էր արժանացնում կանանց, որոնց բաժանում էր տարբեր կենդանիներից գոյացած տաս խմբի /առավել գովելի էին մեղվից ծնվածները/:

Անտիկ քնարերգության երկրորդ ձևը մելիկան է /մելոս՝ մեղեդի բառից/, այսինքն՝ երգային լիրիկան:

Ըստ Պլատոնի մելոսը բաղկացած է երեք տարրից՝ խոսքից, հարմոնիայից և ռիթմից, այսպիսով այն կարելի է պատկերացնել որպես երաժշտության, պոեզիայի և օրիսեստիկայի /պարային արվեստի/ միացություն:

Մելիկան բաժանվում է մոնոդիկ /մեներգային/ և խմբերգային տարատեսակների: Խմբերգայինը ենթադրում է խմբային կատարում՝ հանդիսավոր տոների ժամանակ: Օրինակ՝ Մեծ Դիոնիսականների համար գրվում էին հատուկ Դիոնիսոսին նվիրված օրհներգեր՝ *դիֆիրամբներ*, մարմնամարզական մրցույթների հաղթողներին նվիրվում էին *էպիհիկեներ*, իսկ տարբեր անձանց /գորավարների, թագավորների, առաջնորդներին և այլն/՝ *էնկոմիեներ*:

Խմբերգային օրհներգների հեղինակներից հայտնի են **Ստեփորի** և **Իբիկոսի** անունները:

Ըստ առասպելի՝ Ստեփորը Յեղիմեին քննադատաբար նկարագրելու համար կուրացել է, սակայն երբ գրել է, որ այն վերաբերում էր Յեղիմեի սովերին միայն, նորից սկսել է տեսնել:

Իբիկոսը թափառական երգիչ է եղել, սպանվել է նախանձողների վարձած մարդասպանների ձեռքով: Ամայի դաշտում մեռնելիս՝ նա սպանողներին ասում է, որ ոչ մի հանցանք անպատիժ չի մնում և վկա է բերում երկնքում թռչող կռունկներին: Իրոք, շատ ժամանակ անց, մարդաշատ մի հրապարակում, մարդասպաններից մեկը, ընկերոջը ցույց տալով գլխավերևում թռչող կռունկներին, ասում է. «Ահա Իբիկոսի կռունկները»: Սիրելի պոետի անունը լսելով՝ կողքին կանգնած մարդիկ հասկանում են, որ նրանց ինչ որ բան է հայտնի, ձերբակալում են և ճշմարտությունը բացահայտելով՝ մահապատժի ենթարկում:

Խմբերգային լիրիկան տարածված է եղել Յելլադայի բոլոր մարզերում և զարգացում է ապրել մինչև V դարի սկիզբը: Լավագույն օրինակներ են **Սիմոնիդեսի**, **Պինդարոսի** և **Բաքքիլիդոսի** հիմները:

Մոնոդիկ կամ մեներգային լիրիկան զարգացել է առավելապես Լեսբոս կղզում, որտեղ ապաստան էին գտել դեմոսի /ժո-

ղովրդի/ ապստամբության հետևանքով ցամաքային Յունաստանից վտարված ազնվականները: Յասկանալի է, որ այդ լիրիկան պիտի կրեր հռետեսական և փիլիսոփայական բնույթ, սակայն հոգեբանորեն տրամաբանական է սիրո և գինու զովերգությունը: Տխուր իրականությունից մտովի հեռանալու համար հիասթափված ազնվական պոետները միխթարություն էին փնտրում սիրով կամ գինով արբենալու մեջ:

Լեսբոս կղզում տղամարդիկ և կանայք առանձին ինքնամփոփ խմբակներ էին կազմում, ժամանակը անցկացնելով ընտանիքից դուրս: «Մուսաների տաճարներ» կոչվող այդ խմբակների հոգևոր առաջնորդներն էին Ալքաոսը և Սաֆոն /կամ Սապֆոն/:

Ալքաոսը պատմում է իր ճակատագրի փոփոխականության մասին, հայրենի պոլիսը նա պատկերացնում է որպես փոթորկող ծովում կործանվող մի նավ: Նրա հոգեվիճակը ողբերգական է, միայն գինին կարող է մոռացնել տալ իր վիշտը: Յայտնի են Ալքաոսի ռազմական էլեգիաները՝

*Ռազմի փայլով է ամեն ինչ շողում,
Տունս լցված է զենքերով միայն.
Օ՛, փառք Արեսին:
Սռնապաններն ահա պղնձի
Կախված են շքեղ, դիմացի պատից:
Կապարճներն ահա
Ահա և նրանց զրահը ցլուռն
Եվ վահանները՝ վառ ու ոսկեգույն
Կլոր ու ամուր:*

Սիրո երգիչ Ալքաոսը ջերմ տողեր է նվիրել Սապֆոյին՝

*Սրբատ՛ւրք Սապֆո
Քնքուշ ժպիտով Սապֆո.
Գանգուրներիդ մեջ
Կապույտ մանուշակ Սապֆո:
Շուրթերիցդ ահա
Ուզում է թռչել մի խոսք, հանդգնել
Ամոթը նրան
Չի թողնում թռչել,
Չի թողնում հնչել:*

Սապֆոն, որպես կին պոետ, հազվադեպ երևույթ է անտիկ ժամանակներում: Նա սահմանափակվում է սիրո թեմայով, սակայն

Նրա երգերը շատ տաղանդավոր և բազմազան են, գովերգում են և՛ հավատարմությունը, և՛ խանդը, և՛ մաքուր զգացմունքը, և՛ էրոտիկ սերը, և՛ մայրական ու ընկերուհիների հանդեպ քնքշանքը:

*Վեհ բարձունքից բազմազունյան գահույքի
Լռության մեջ նյութելով դավ խորամանկ՝
Մի՛ քամահրիր, իմ սրտամաշ թախծանքի
Ծնշված հոգուս քեզ աղերսող հառաչանք:
Օ՛, արի՛, ե՛կ, չէ՞ որ հին օրերին
Ունկդ արթուն՝ աղերսանքից խոնարհած՝
Շանթընկեցի ապարանքն իսկ ոսկեղեն
Դու ինձ համար լքեցիր ու եկար ցած...*

Սապֆոն համարվում է ամուսնության աստված Հիմենեոսին
մվիրված հարսանեկան երգի՝ էպիտալամի ժանրի ստեղծողը:

*Տանիքը բարձր, բարձր կառուցեք,
փառք հարսանիքին,
Ատաղծագործներ՝, ամո՛ւր կառուցեք
փառք հարսանիքին,
Գալիս է փեսան որպես մի աստված, որպես զորավար,
Նա, որ բոյով է, շքեղ է անմահ աստծու նման:
Հարսին ցնծություն, փեսին խնդություն
Դու երկար ապրես, ուրախ ապրես հարս
Դու էլ շատ ապրես, պատվարժան փեսա:*

Սապֆոն, սիրահարվելով երիտասարդ ազնվական Ֆաոնին,
նրան ուղեկցում է Սիցիլիա, որտեղ հոմանուն դավաճանությունից
հետո իրեն ժայռից նետում է ծովը:

VI դ. II կեսի փայլուն պոետներից է **Անակրեոնը**, որն ուրախ և
նրբազգաց էրոտիզմի երգիչ է: Նա իր ուշադրությունը բևեռում է մի
ակնթարթի, մի անցողիկ տրամադրության, մի զգացմունքի վրա:
Նրա սիրային լիրիկան գերծ է փիլիսոփայական մտորումներից,
ոճը պարզ է, գեղեցիկ, թեմաներն են՝ սերը և բնությունը:

*Ես հայելի կուզեմ լինել,
Որ իմ մեջը դու նայես,
Կամ պատմուճան կուզեմ լինել,
Որ ինձ հագիդ դու կրես:
Երբ մարմինդ լվանում ես,
Կուզեմ, որ ես ջուր լինեմ,*

*Կուզեմ, որ ես քեզ օժուճեմ,
Անուշահոտ խեժ լինեմ:
Կուզեմ լինել կրծքակապոյ,
Վզիդ՝ գոհար, անգին ակ,
Կուզեմ լինել ոտնամանդ,
Որ ինձ կոխ տաս ոտիդ տակ:*

Անակրեոնի հիանալի բանաստեղծությունները այնքան մեծ ազդեցություն գործեցին հետագա դարաշրջանների վրա, որ եվրոպական պոեզիայում ստեղծվեց «անակրեոնտիկա» կոչվող ուղղություն: Անակրեոնտիկայի ակնառու նմուշներ են թողել Վոլտերը, Չայնեն, Պուշկինը և ուրիշներ:

ԳՐԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

Մինչև VI դ. /մ.թ.ա./ հույների գրականության մեջ գերիշխում էր չափածո ձևը, արձակով գրվում էին միայն փաստաթղթերը, օրենքները, մրցույթներում հաղթողների ցուցակները և այլն: Արձակ գարգացում ապրեց VI դարում, հատկապես Իոնիայում, քանի որ շատ ճանապարհորդող իոնացիները հեռավոր երկրներից բերում էին մեծ քանակությամբ տեղեկություններ և դիտումներ, որոնց մշակումը դարձավ հին հունական արձակի առաջին ձևի՝ գիտականի հիմքը: Արձակ խոսքը կոչվում էր լոգոս, իսկ արձակով գրողները՝ լոգոգրաֆներ:

Լոգոգրաֆներ էին մաթեմատիկոս, երաժիշտ և փիլիսոփա Պյութագորը, առաջին դիալեկտիկ փիլիսոփա Յերակլիտեսը, որն ապացուցում էր աշխարհի գոյացումը կրակից, Թալեսը, որը ջուրն էր համարում ամեն բանի սկիզբը, նրա աշակերտ Անաքսիմանդորսը՝ Յելլադայի առաջին աշխարհագրական քարտեզի ստեղծողը և այլ հեղինակներ, որոնք փայլուն աշխատություններ են թողել բժշկության, աստղաբաշխության, մաթեմատիկայի, աշխարհագրության և, հատկապես, պատմության ասպարեզներում: Պատմագրությունը զարգացել էր երկու ուղղությունով, առաջինը՝ տեղական խրոնիկաներն են, վարքագրությունները /Սոլոնի, Կրեզոսի, Պիսիստրատի գեղարվեստական կենսագրությունները/, երկրորդը՝ կիսաաշխարհագրական բնույթի գործերը, տարբեր երկրների և ժողովուրդների նկարագրությունները: Այսպես, Գեկաթեսը գրել է երկու տրակտատ՝ «Երկրի նկարագրություն» և «Տոհմածառեր», պատմադիցաբանական մի գործ, որտեղ առասպելները բնորոշ-

վում են որպես «ծիծաղելի» և փորձ է արվում դրանց առաջացումը բացատրել բնական պատճառներով:

Գիտական արձակից բացի VI դարում ստեղծվել է նաև առակը: Քննադատությունն այդ անտիկ ժանրի ստեղծումը կապում է Փռյուզացի ստրուկ, տզեղ, սապատավոր, բայց իմաստուն փիլիսոփա Եզովպոսի /Այսոպոսի/ անվան հետ: Ըստ առասպելի նա ազատություն է ստացել, ապրել է Կրեզոս արքայի արքունիքում, դելփացի քուրմերը նրան մեղադրել են սրբապղծության մեջ և ժայռից ցած նետել:

Առակը՝ կյանքի անարդարության քննադատությունն է ժողովրդի տեսանկյունից: Հաճախ առակի հերոսները մարդկային արատներով օժտված կենդանիներ են, որոնցից ամեն մեկն ունի իր ավանդական դարձած բնութագիրը՝ առյուծը խորհրդանշում է ուժը, աղվեսը՝ խորամանկությունը, գառը՝ ամենդրությունը, անզորությունը, գայլը՝ ագահությունը, ավանակը՝ հիմարությունը և այլն: Եզովպոսի արձակ առակներից «Ագռավն ու աղվեսը», «Աղվեսն ու խաղողը», «Ճպուռն ու մրջյունը» և շատ ուրիշներ, հետագայում չափածո ձևով մշակվեցին տարբեր դարաշրջանների հեղինակների կողմից: Առավել տաղանդավոր առակագիրներից են XVII դ. ֆրանսիացի պոետ Լաֆոնտենը և XIXդ. ռուս առակագիր Կռիլովը: Հայ գրականության մեջ հայտնի են Մխիթար Գոշի, Այգեկցու, Աթաբեկ Խնկոյանի առակները:

V դԱՐ: ԱՏՏԻԿԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

VI դ.. II կեսում Իոնիան ընկավ Պարսկաստանի տիրապետության տակ և, բնականաբար, կորցրեց հունական մշակություն իր առաջնատար դերը: V դարի առաջին երկու տասնամյակում Հունաստանը շատ ծանր և քայքայող պատերազմներ մղեց Պարսկաստանի դեմ: Պատերազմի պատճառներն էին փոքրասիական ծովափնյա հունական քաղաքների աճող ազդեցությունը Արևելքում և պարսիկների հարձակումը հունական ամենահարուստ գավառի՝ Միլետի վրա: Նրանք ավերեցին քաղաքը, ոչնչացրեցին բնակչությանը, ստրկացրեցին կենդանի մնացածներին: 492 թ. պարսից թագավոր Դարեհի Հունաստան ուղարկած նավատորմն ու զորքը, մեծ կորուստներ կրելով, նահանջեցին, բայց երկու տարի անց նոր արշավանք սկսվեց: 480 թ. Դարեհի որդին Քսերքսեսը, Հելլեսպոնոսն անցավ 800 հազարանոց բանակով և հարյուրավոր նավերով: Սպարտացիները նրանց ճակատամարտ տվեցին Ֆերմոպիլի

մոտ, որտեղ Լեոնիդեսը 300 սպարտացիների հետ հերոսաբար զոհվեց, իսկ աթենացիները ջախջախեցին պարսկական նավատորմը: Մարաթոնի հաղթական ճակատամարտից հետո, արագավազ մի զինվոր ուղարկվեց Աթենք՝ լուրը հայտնելու: 42174 կմ վազելուց հետո, նա հայտնեց հայրենակիցներին, «Միլթիադեսը հաղթեց պարսիկներին» և ուժասպառ մահացավ: Այսպիսով՝ մինչև նակեդոնյան նվաճումը Հունաստանի հետագա պատմությունն անցնում է Ատտիկա մարզի կենտրոն՝ Աթենքի մշակութային ազդեցության տակ, այդ պատճառով էլ դարաշրջանը /V- IV դ.դ./ կոչվում է ատտիկական: Աթենքում գոյություն ունեին 2 կուսակցություն՝ պահպանողական և դեմոկրատական, որոնք պայքարում էին իշխանության համար: Դեմոկրատականների առավել հայտնի առաջնորդներն էին Ֆեմիստոկլեսը, Էֆիալտեսը և Պերիկլեսը: Վերջինի անվան հետ է կապվում Աթենքի քաղաքական և մշակութային վերելքը V դարի 50-30-ական թվականներին, որը հաճախ անվանում են «Պերիկլեսի դար»: Պերիկլեսը հեռատես, իմաստուն և գործունյա ղեկավար էր, նրա մտերիմ ընկերներն էին փիլիսոփաներ Անաքսագորը, Սոկրատեսը, պոետ Սոֆոկլեսը, պատմիչ Հերոդոտը, քանդակագործ Ֆիդիասը: Աթենքի հոգևոր կյանքում կարևոր դեր է խաղացել նաև Պերիկլեսի կինը՝ Նախսկինուն հետերա, զեղեցիկ, խելացի և կրթված Ասպասիան: Պերիկլեսի օրոք Աթենքում տարեկան մոտ 60 տոն էր կազմակերպվում, սակայն նրա գլխավոր վաստակը Աթենքի վերակառուցումն ու զեղազարդարումն էր, հունական ճարտարապետության գլուխգործոցների պատվիրումն ու հովանավորությունը:

Աթենքի Ակրոպոլիսի բարձունքում կանգնեցվեց Ֆիդիասի կերտած Աթենասի 11 մետրանոց փայտե արձանը, որի դեմքը, պարանոցը և ձեռքերը ծածկված էին փղոսկրով, իսկ հագուստը /1151 կգ ընդհանուր քաշով/ ոսկուց էր: 433 թ. Ֆիդիասին մեղադրեցին ոսկու մի մասի յուրացման մեջ, ոսկյա թիթեղները հանեցին և կշռեցին, սակայն դրանով միայն ապացուցվեց Ֆիդիասի անմեղությունը: Ֆիդիասի ղեկավարությամբ ճարտարապետներ Իկթինոսը և Կալլիկրատեսը կառուցեցին Աթենաս Պարթենոսին /կույսին/ նվիրված տաճարը՝ Պարթենոնը: «Հազար տալանտների սրբության» բացումը տեղի ունեցավ 438 թ.: Տաճարի դիմացի և ետնակողի ճակատներն ունեին ութ սյուն, որոնց աննշան հաստացումը և աննկատելի թեքությունը դեպի կենտրոն իդեալական ուղղահայացության և թեթևության տպավորություն էին ստեղծում: Ճակատագիրը, սակայն, անողոր է եղել Պարթենոնի նկատմամբ՝ պելոպոնեսյան պատերազմի ժամանակ այն օգտագործվել է որպես աթենական ծովային դաշինքի զանձարան, մ.թ.ա. I դարում վերածվել

Աստվածամոր քրիստոնեական տաճարի, իսկ 1456 թ. թուրքերը դարձրին մզկիթ, ավելի ուշ՝ վառողի պահեստ: 1687-88 թթ. հրանոթային արկի պայթյունից փլվեց տանիքը, պատերը, հյուսիսային և հարավային սյունաշարերը: Միայն 1930 թ. հույն ճարտարապետ Բալանոսը վերականգնեց հյուսիսային սյունաշարը: 1977թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենը դիմեց միջազգային հանրությանը Աթենքի Ակրոպոլիսի փրկության կոչով: Ավտոմեքենաների և կաթսայատների ծովերը, սակայն, շարունակում է քայքայել մարմարը, նույնիսկ բլուրի հիմքը՝ կրաքարե ժայռը:

Չկա աշխարհում այնպիսի մի վայր, որը մշակույթի զարգացման համար ավելի մեծ նշանակություն և խորհրդանշական իմաստ ունենա:

Ակրոպոլիսում կարևոր տեղ ունի Պոսեյդոնին նվիրված տաճարը՝ Երեքթոնը: Արևմտյան սյունաշարի կարիատիդները /տանիքը պահող կանացի քանդակները/ V դարի հունական արվեստի գլուխգործոցներն են: Այժմ փոխարինված են պատճեններով, իսկ մեկի օրինակը լորդ Էլդոնի անպատժելի նախաձեռնությամբ տեղափոխվեց Լոնդոնի Բրիտանական թանգարանը:

Ակրոպոլիսի հարավային լանջին գտնվում է Դիոնիսոսի թատրոնը, ավելի ուշ այստեղ կառուցվեց Նիկե Ապտերոսի տաճարը և հռոմեացիների մ.թ.ա. I դարում կառուցած Պրոպիլեն՝ մարմարե աստիճանների համակարգը:

Ատտիկական դարաշրջանում կրոնը ավելի վերացական բնույթ ստացավ: Աստվածությունը կորցրեց իր գերբնականությունը՝ մերվելով բնության և հասարակության հետ: Հունական մտքի բոլոր ասպարեզներում հակում նկատվեց դեպի պանթեիզմը, այսինքն բնության ամբողջության աստվածացումը: Մարդուն ազատելով դիցաբանական աշխարհայացքից, պանթեիզմը իր ժամանակի համար առաջադեմ երևույթ էր: Փիլիսոփաներ Քսենոֆանը և Անաքսագորը աստվածությունը փոխարինեցին «բանականությամբ», հաստատելով հավատը մարդու ուժի և մտքի հանդեպ:

Դեմոկրիտեսի ստեղծած ատոմիստիկ տեսությունը, հանդիսանալով մատերիալիստական փիլիսոփայության հիմնաքար, հաստատեց բնության ուժերը հաղթահարելու մարդու ձգտումն ու հնարավորությունը:

Արվեստը կրում էր մոնումենտալ /մեծակերտ/ բնույթ: Ստեղծագործողները մարմնի իդեալական համաչափություն էին փնտրում: Գեղարվեստական իդեալը հիմնվում էր չափի և ներդաշնականության, ազատության, բնականության և մարդասիրության սկզբունքների վրա: Չկար արևելյան վիթխարիությունը, ամեն բան համաչափ էր մարդու հետ: Գրականությունը նույնպես ուղղված էր

դեպի մարդը, անհատը՝ ցույց էր տալիս հասարակական կյանքում նրա վարքի ուղիները: V դ. գրականության մեջ իշխող ժանրը՝ դրաման է, կոնֆլիկտի պատկերումը:

Դրամայի ծագումը կապված է ծիսական խաղերի հետ, որոնց համար բնորոշ էր ծպտվելը, այսինքն՝ որևէ աստծու կամ կենդանու դիմակ հագնելը: Ամենատարածված ծիսակատարությունը տեղի էր ունենում Դիոնիսոսի պաշտամունքի ժամանակ, գարնանը, երբ աստծու երկրպագուները հավաքվում էին սրբազան պուրակում և քահերի լուսավորության տակ, գազանների մորթիներ հագած, պարերով զրգռված, պատառոտում էին հատուկ այդ օրվա համար պատրաստած այծը՝ Դիոնիսոսի սրբազան կենդանուն:

Դիոնիսոսի պաշտամունքը իր մեջ պարունակում էր վեհու-թյուն և գռեհիկություն, լրջություն ու կատակ, կրքոտություն ու դիմակահանդես, այդ նույն աղբյուրից առաջացան դրամայի երեք ձևերը՝ ողբերգությունը, կատակերգությունը և սատիրական դրաման:

VI դարում աթենական տիրան /բռնապետ/ Պիսիստրատը հիմնադրեց վեց օր տևող «Մեծ Դիոնիսական» տոնը: Այդ օրերին ստրուկները ազատություն էին ստանում, երեխաները չէին սովորում, բուլդոն իրար նվերներ էին ընծայում, պարտքերը մարում և զվարճանում էին: Առաջին օրը Դիոնիսոսի արձանը դուրս էին բերում տաճարից և հանդիսավոր թափորով շրջում էին փողոցներով ու հրապարակներով: Երկրորդ օրը կոչվում էր «գավաթների օր»՝ քաղաքացիներն իրենց պատրաստած զինին տակառներով փողոց էին հանում և ամեն ոք կարող էր անվճար հյուրասիրվել: Երրորդ օրը հատկացված էր քաղաքի հրապարակներում տարբեր հեղինակների դիֆիրամբեր կատարող լիրիկական երգչախմբերի ելույթներին: Վերջապես չորրորդ, հինգերորդ և վեցերորդ օրերը հատկացնում էին դրամատիկական ստեղծագործություններին: Ամեն օր մի հեղինակ ներկայացնում էր իր քառերգությունը /չորս մասից բաղկացած ստեղծագործություն/ մեկ ողբերգական եռերգություն /տրիլոգիա/ և մեկ սատիրական դրամա: Կատակերգությունների հեղինակները ներկայացնում էին մեկական ստեղծագործություն: Բենադորության ծախսերը հոգում էր խորեգը՝ հարուստ մի քաղաքացի, որը հավաքում էր երգչախումբը, սովորեցնում տեքստը, կարել տալիս հագուստները և վերջում խնջույք կազմակերպում: Վեցերորդ օրվա վերջում տաս հոգուց կազմված ժյուրին երեք մրցանակ էր շնորհում, ընդ որում երրորդը՝ հավասարազոր էր պարտության: Առաջին մրցանակը, այսինքն դրամական պարգևը և բաղդեղ պսակը տրվում էր հաղթող պոետին, խորեգին և պրոտագոնիստին /առաջին դերակատարին/: Նրանց անունները գրվում

էին հատուկ ակտերուն և պահվում արխիվներուն, IV դարից՝ գրվում էին մարմարյա սալաքարերի վրա:

Ներկայացումները սկսվում էին առավոտյան և տևում էին մինչև երեկո, այդ պատճառով հանդիսատեսներն իրենց ուտելիքով էին գալիս թատրոն: Քաղաքացիները պետությունից հատուկ թատերական գումար էին ստանում և զնում էին նշված տեղերով հատուկ մետաղե համարներ: Դիոնիսոսի քուրմի համար առաջին շարքում հատուկ բազկաթոռ էր դրվում:

Աթենքի թատրոնը տեղավորում էր 17 հազար հանդիսատես, Մեգապոլիս քաղաքինը՝ 44 հազար: Հունական թատրոնը բաղկացած էր երեք հիմնական մասից՝ *սկենայից, օրխեստրայից և անֆիթատրոնից*:

Սկենան դերասանների զգեստափոխման համար հատկացված մի տաղավար էր, որը սկզբում հանդիսատեսների տեսադաշտից դուրս էր գտնվում, այնուհետև տեղափոխվեց օրխեստրայի խորքը, կառուցվում էր քարից, ձևավորվում էր կամարներով, պրոսկենայով /դիմացի սյունաշարով/ և պարասկենաներով՝ կողաշենքերով /այժմվա կուլիսներով/:

Օրխեստրան՝ կլոր հարթակ էր, որտեղ տեղավորվում էր 12-15 հոգուց կազմված երգչախումբը: Աթենքի օրխեստրայի տրամագիծը 24 մետր էր: Հաճախ օրխեստրայի կենտրոնում տեղադրվում էր Դիոնիսոսի զոհասեղանը: Անֆիթատրոնը պայտաձև էր, հանդիսատեսների տեղերը սկզբում փայտից էին, V դարում փոխարինվեցին քարե նստարաններով:

Թատրոնները հիանալի ակուստիկա ունեին, անգամ շշուկով ասված բառը լսվում էր վերջին շարքում, սակայն միմիկան /դիմախաղը/, հանդիսատեսից մեծ հեռավորության պատճառով, զարգացած չէր, այն փոխարինվում էր բուռն ժեստիկուլյացիայով և դերասանների դիմակներով: Դերասանների զգեստները շատ վառ էին, ավելի բարձրահասակ երևալու համար նրանք հագնում էին բարձր գլխարկներ կամ թագեր և հատուկ կրունկներով /կոտուռներով/ կոշիկներ: Մի դերասանը մի քանի դերեր էր կատարում: Դրամայի զարգացման ընթացքում անհրաժեշտ դարձավ երկու, հետագայում և երեք դերասանի միաժամանակ մասնակցությունը, այդպիսով՝ դրամայի վերջնական կազմը ընդգրկում էր երեք դերասան և երգչախումբ: Երկրորդ դերասանը կոչվում էր դևտերագոնիստ, երրորդը՝ տրիտագոնիստ, սակայն կատակերգությունների կատարումներում երբեմն ելույթ էին ունենում նաև կին դերասաններ: Դերասանները օգտվում էին որոշ արտոնություններից, օրինակ՝ ազատվում էին հարկերից: Բեմադրությունը ավելի հետաքրքիր դարձնելու համար օգտագործվում էին տարբեր սարքավորումներ, այսպես,

տան ներսում կատարվող գործողությունը ցույց տալու համար սկենայի կամարներից դուրս էր բերվում անիվներով մի հարթակ՝ էքիկլենա, վրան նստած դերասաններով, իսկ գործող անձանց օդ բարձրացնելուն կամ իջեցնելուն ծառայում էր վերամբարձ մի կռունկ, որը կոչվում էր մաշինա /մեքենա/, իսկ գործելաձևը՝ deus ex machina:

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ /Նոխազերգություն/

Տրագեդիա բառը նշանակում է «այծի երգ» /tragos՝ այծ/: Արիստոտելը ողբերգության ակունքները փնտրում է դիֆիրամբների կատարման մեջ, երբ հերթականությամբ ելույթ էին ունենում երգիչը և խումբը: Երգիչը դառնում է դերասան, իսկ խումբը՝ երգչախումբ: Դրաման առաջացել է Պելոպոնեսում, բայց զարգացել և կատարելագործվել է Աթենքում:

Ողբերգությունները բեմադրվել են 534 թվից, իսկ կատակերգությունները՝ 488-486թթ.:

Ողբերգությունը սկսվում էր *պրոլոգից* /նախերգանքից/, որի ժամանակ պրոտագոնիստը դիմում էր աստծուն կամ մուսային, ողջյունում էր հանդիսատեսին, հակիրճ պատմում ողբերգության բովանդակությունը:

Պրոլոգին հետևում էր երգչախումբի առաջին ելույթը՝ *պարոդը*: Այնուհետև իրար էին հաջորդում *էպիսոդիները*՝ դերասանների նոր ելույթները և *ստասիմները*՝ երգչախումբի երգերը: Ողբերգությունն ավարտվում էր միասնական լացով և երգչախումբի ու դերասանների հանդիսավոր ելքով, օրխեստրայից հեռացումով՝ *էքսոդով*: Ներկայացումը կատարվում էր առանց ընդմիջումների:

Ողբերգության մեջ առաջին պլան էր մղվում ոչ թե հոմերոսյան էպիկական սխրանքը, այլ տառապանքը, կրքերը, որոնք երբեք հանդիսատեսների աչքի առաջ չէին ծավալվում, նրանց մասին հայտնում էր դերասանը, իսկ երգչախումբը երգով արձագանքում էր:

Վաղ շրջանի ողբերգությունը ժամանակի և տեղի միասնությունը չէր պահպանում, սակայն հետագայում այդ միասնությունը դարձավ պարտադիր, և առանձահատուկ նշանակություն ունեցավ XVII դարի եվրոպական կլասիցիզմի համար:

V դարի ողբերգությունից պահպանվել են այդ ժանրի ամենանշանավոր երեք ներկայացուցչի՝ Էսքիլոսի, Սոֆոկլեսի և Էվրիպիդեսի երկերը:

ԵՄՔԻԼՈՍ /525 – 456 թ.թ./



Հունապարսկական պատերազմների և աթենական պետականության ձևավորման դարաշրջանի պոետ Եսքիլոսը համարվում է «ողբերգության հայրը»: Նա ծնվել է Էլևսին քաղաքում, ազնվականի ընտանիքում, մասնակցել է 480 թ. Սալամինի ճակատամարտին, 472 թ. երիտասարդ Սոֆոկլեսի հետ մրցույթում պարտվելուց հետո հեռացել է Աթենքից և վերջին տարիներն անցկացրել Սիցիլիայում:

Եսքիլոսի գրած 70 ողբերգություններից և 20 սատիրական դրամաներից մեզ են հասել 7 ողբերգություն և մոտ 400 հատված: Դրամատիկական մրցույթներում Եսքիլոսը տարել է ըստ տարբեր աղբյուրների 13 կամ 28 հաղթանակ: Արիստոտելը Եսքիլոսին է վերագրում երկոորդ դերասանի, ճոխ զգեստների, դիմակների, կոտուրների և տեխնիկական սարքերի ներմուծումը: Նա օգտագործել է պարային տարրեր, որոնց համար բեմադրական խորհուրդներ էր տալիս: Եսքիլոսը առաջին հեղինակն էր, որի ողբերգություններում հանդես են եկել աստվածները և մահացածների ստվերները:

Եսքիլոսի եռերգությունները կապակցված են, բեմադրման ժամանակ ավարտվում էին սատիրական դրամայով:

«*Աղերսողուհիներ*»: Երկի հիմքն է հանդիսանում Ջևսի սիրուհի Իոյի և նրա հետնորդների մասին արգոսական ասքերից մի դրվագ: Եգիպտոս և Դանայոս եղբայրները գժտված էին իրար հետ, սակայն Եգիպտոսի 50 որդիներն ուզեցին ամուսնանալ Դանայոսի 50 դստրերի հետ, որոնք որոշեցին փախչել իրենց նախնիների հայրենիքը՝ Արգոս:

Ողբերգությունը սկսվում է Դանայիդների /Դանայոսի դստրերի/ Արգոս ժամանումով: Ժողովրդի համաձայնությամբ Պուլասգոս արքան ապաստան է տալիս կույսերին: Եգիպտիդների ուղարկած դեսպանը պահանջում է վերադարձնել նրանց հարսնացուներին, սպառնալով հակառակ դեպքում պատերազմ հայտարարել: Գրականության պատմության մեջ առաջին անգամ է դրվում հետազայում դասական ողբերգության համար պարտադիր դարձած պարտքի և զգացմունքի միջև պայքարի հիմնախնդիրը, որը դրական հերոսների կողմից լուծվում է ի օգուտ պարտքի: Այսպես՝ Պելասգոսը, որին թագավորական պատասխանատվությունը թույլ չի տալիս վտանգի ենթարկել իր քաղաքը, գերադասում է խախտել

Դանայիդներին տված խոստումը և նրանց հանձնել Եգիպտոսիցներին:

Ըստ առասպելի, առաջին ամուսնական գիշերը Դանայիդներից 49-ը թունավորում են իրենց ամուսիններին, միայն մեկը՝ Զիպերմնեստրեն, խղճալով ամուսնուն՝ Լինկետսին, չի սպանում: Այդ հանցանքի համար Դանայիդները պատժվում են ստորերկրյա աշխարհում, նրանք դատապարտվում են հավիտյան ջուր լցնելու տակ չունեցող տակառի մեջ:

Ողբերգության մեջ գործողությունը շատ սակավ է, գործող անձանց բնավորությունները միակուռ են և սխեմատիկ, առանց զարգացման: Անգամ Դանայիդների երգչախումբը չի գործում, միայն անհանգստանում է, վախենում, պաշտպանություն աղերսում: Ողբերգության գաղափարը ազատ կամքով ամուսնանալու իրավունքն է: Հատուկ ուշադրության է արժանի նաև ժողովրդավարության սկզբունքը /Պելասգոսի իր ժողովրդի հետ խորհրդի տեսաբանում/:

472 թ.բեմադրվել է Եսթիլոսի «Պարսիկներ» ողբերգությունը, միակը, որ գրվել է ոչ թե դիցաբանական, այլ պատմական սյուժեով: Գործողությունը կատարվում է Պարսկաստանի մայրաքաղաք Սուզիում, Սալամինի ճակատամարտից հետո: Տոհմավագների երգչախումբը, լսելով Քսերքսես արքայի մոր՝ Ատոսսայի պատմած չարագուշակ երազը, անհանգստանում է պարսկական զորքի ճակատագրով: Մունետիկը հայտնում է, որ Սալամինում օջախջախվել է պարսկական նավատորմը: Երևում է Քսերքսեսի հոր՝ Դարեհ արքայի ստվերը, որը մեղադրում է որդուն և կանխագուշակում նոր կորուստներ: Վերջապես վերադառնում է վիատ, ընկճված Քսերքսեսը, որը երգչախմբի հետ դառը լացով արտահայտում է իր վիշտը:

Հույն հեղինակը, շարունակելով Հոմերոսի ավանդույթը, կարեկցանքով և հարգանքով է նկարագրում թշնամիներին, առավել ևս պարտված թշնամիներին: Նա մեղադրում է պարսիկներին, որոնք պատժվեցին իրենց ոտնձգությունների համար: Եսթիլոսի համոզմունքով հույները պետք է հաղթեն, որովհետև պաշտպանում էին իրենց հայրենիքը: Արևելյան բռնապետությունը հակադրելով հունական ժողովրդավարությանը, Եսթիլոսը փառաբանում է վերջինիս առավելությունները:

«Յոթն րնդդեն Թերեի» 467 թ. բեմադրված ողբերգության գործողությունը կատարվում է Թերե քաղաքում, որը պաշարված է յոթ թագավորների զորքերով, Էդիպ արքայի որդի՝ Պոլինիկոսի առաջնորդությամբ: Թերեն պաշտպանում է Պոլինիկոսի եղբայր Էթեոկլեսը: Ողբերգությունը բաժանված է յոթ մասերի և ավարտ-

վում է երկու եղբայրների մահով, որին հետևում է ընդհանուր մեծ ողբը: Էթեոկլեսի կերպարը առաջին դրամատիկական հակասական բնավորությունն է. նա՝ նվիրված է աստվածներին, և՛ անարգում է նրանց, հիշելով իր տոհմական նգովքը: Էթեոկլեսը հայրենասեր է, հեռատես, սառնարյուն, բայց և դաժան է՝ ատուում է եղբորը: Մոտալուտ մահվան նախագագացումը ողբերգականություն է հաղորդում նրա կերպարին: Չնայած գործողության սակավությանը, ողբերգության լարվածությունը գնալով ուժեղանում է, տրամաբանորեն ավարտվելով եզրափակիչ ողբով:

Եսքիլոսի ամենահայտնի ողբերգությունն է «Շղթայված Պրոմեթևսը», մարդկության այդ մեծ բարեկամի մասին գրված եռերգության միակ պահպանված մասը: Առաջին և երրորդ ողբերգություններն էին համապատասխանաբար՝ «Պրոմեթևս կրակաբերը» և «Ազատագրված Պրոմեթևսը»: Եռերգության ստեղծման տարեթիվը հայտնի չէ, այն բեմադրվել է 460-ական թվականների վերջում: Տիտան Պրոմեթևսի մասին առասպելը առաջին անգամ շարադրվել է Զեսիոդոսի «Աշխատանքներ ու օրեր» պոեմում, որտեղ Պրոմեթևսը ոչ միայն մարդկության բարերարն է, այլև առաջին մարդու կերտողը:

Եսքիլոսի վեց մասից բաղկացած «Շղթայված Պրոմեթևսը» ողբերգության պրոլոգում, Զեփեստոսը Ջևսի հրամանով Պրոմեթևսին շղթայակապում է Կովկասյան ժայռին: Նրան ուղեկցում են Իշխանության և Բռնության աստվածուհիները: Ինքը՝ Զեփեստոսը կարեկցում է Պրոմեթևսին, բայց գերադասում է ստրկաբար ծառայել Ջևսին, որն օժտված է բռնակալին բնորոշ գծերով՝ նա անշնորհակալ է, անողորմ, վրիժառու: Պրոմեթևսը պատմում է, թե ինչպես է Ջևսին օգնել գահնկեց անելու նրա հորը՝ տիտան Քրոնոսին և դառնալու աստվածների թագավոր: Մոռանալով այդ ծառայությունը, Ջևսը ահավոր տանջանքների է մատնում Պրոմեթևսին:

*Երբ որ Ջևսը գահ բարձրացավ հաղթաբար՝
Անմիջապես աստվածներին նա բաժանեց
Առատածեռն ամեն տեսակ ծոխ պարագաներ:
Եվ այդպիսով իշխանությունն իր հաստատեց:
Բայց անտեսեց նա մարդկային ցեղն անբախտ,
Մարդկանց ոչինչ չչնորհեց և ավելին՝
Ուզեց ջնջել, ոչնչացնել ողջ մարդկությունն
Եվ փոխարեն ստեղծել նոր մի սերունդ:
Ոչ ոք դրան, բացի ինձնից, չընդդիմացավ
Այլ միայն ես փրկեցի ցեղը մարդկանց,
Թույլ չտվի, որ նա իջնի տունն Զադեսի:*

*Եվ փոխարենն ես շահեցի տանջանք, պատիժն այս ահեղ,
Որը տեսնելն է զարհուրանք, իսկ կրելը էլ՝ ավելի...*

Օվկիանոսի դուստրերի երգչախումբը կարեկցում և մխիթարում է հպարտ տիտանին, նրանք պատրաստ են բաժանել նրա ճակատագիրը: Ծեր Օվկիանոսը առաջարկում է Պրոմեթևսին հաշտվել Ջևահի հետ, հայտնելով նրան իշխանությանը սպառնացող զաղտնիքը: Երևում է խայթող բռնից փախչող ջրահարս Իոն, որին խանդոտ Չերան սպիտակ կով էր դարձրել: Պրոմեթևսը նրան խորհուրդներ է տալիս և կանխագուշակում է նրա հետնորդներից մեկի՝ Չերակլեսի օգնությամբ իր ազատագրումը: Վերջապես երևում է Չերմեսը, որը նոր տանջանքներ սպառնալով, պահանջում է հայտնել Ջևահի կործանման զաղտնիքը: Չպարտ Պրոմեթևսը նորից հրաժարվում է և ժայռի հետ միասին անդունդ է գլորվում: Ողբերգությունն ավարտվում է Պրոմեթևսի «Տեսե՛ք ինչպես տառապում են ես անարդար...» բառերով:

Ի տարբերություն Չեսիոդոսի, Էսքիլոսը չի գտնում, որ կյանքը վատթարանում է, քանի որ Պրոմեթևսի տված ընծան՝ լույսը, գիտությունը, արհեստները, ոչ միայն փրկեց, այլև բարելավեց մարդկանց գոյությունը: Երգչախումբային դերը սեղմ է, դրամատիկական զարգացումը թույլ, կերպարները միակուռ, ստատիկ են, սակայն Պրոմեթևսի զեղեցիկ, վեհ կերպարը ճակատագրի ու հերոսական կամքի հակադրության դասական օրինակ է:

Մեզ հասած միակ ամբողջական եռերգությունը Էսքիլոսի «Օրեստականն» է, որտեղ արդեն մասնակցում է երրորդ դերասանը: «Օրեստականը» բաղկացած է երեք մասից՝ «Ազամեմնոն», «Խոեֆորներ» և «Էվմենիսներ»:

I. «Ազամեմնոն»: Պատկերում է Կլիտեմնեստրեյի ոճրագործությունը: Յունաստանի լեռնագագաթներին վառած կրակները հաղորդում են Տրոյայի անկման մասին: Ողբերգության երանգը հենց սկզբից մռայլ է, անխուսափելի դժբախտության նախազգացումը լսվում է և՛ խմբի երգերում, և՛ Կլիտեմնեստրեյի երկիմաստ խոսքերում ու մութ ակնարկներում Իփիգենյայի զոհաբերության, նույնիսկ արքայի մոտենալու մասին մունեստիկի հաղորդման մեջ: Չաղթակառքի վրա մուտք է գործում Ազամեմնոնը, նվաճված Տրոյայի արքայադստեր՝ Կասսանդրայի հետ, հանդիսավորությամբ տուն մտնում: Չարագուշակ մթնոլորտն ամենաբարձր լարվածության է հասնում Կասսանդրայի գուշակության տեսարանում: Տաններսից լսվում է Ազամեմնոնի մահամերձ մերձիմ աղաղակը: Կլիտեմնեստրեն անուսնուն կացնի հարվածով սպանելուց հետո սպանում է նաև Կասսանդրային: Այսուհետև Արգոսում թագավորելու է

Կլիտենմեստրեն ու նրա սիրած Էգիսթոսը, խուճբը սպառնում է նրանց Օրեստեսի ապագա վրիժառուքյամբ՝

.....Թագավորին դու
Սպանեցիր, մենակ նյութեցիր ոճիր.
Գիտցի՛ր, սակայն, դու չես փրկվի ժողովրդի
Դատաստանից: Եվ կպատժես դու, թշնամի:

II. «Խոնջորներ» /գերեզման օրհնողուհիներ/: Օտարության մեջ մեծացած Օրեստեսը վերադառնում է Արգոս, որպեսզի վրեժ լուծի Ագամեմնոնի մահվան համար, բայց այդ պարտականությունը նոր սոսկակի ոճիր է պահանջում՝ մոր սպանությունը: Ողբերգության սկիզբը տեղի է ունենում Ագամեմնոնի գերեզմանի մոտ՝

Չայրենի տունն են եկել ես:
Եվ գերեզմանի վրա աղերսում են հորս
Լսել, ականջ դնել ինձ: Օրեստն է կանգնած քո դեմ,
քո զավակը:
Որդուդ վտարել է մայրն արքայական տնից,
Չափշտակել ժառանգությունը: Եվ օտար երկրում
Փոկիացոց երկրում մեծացա ես:
Բայց եկա ես, որ հրամանը
Կատարեն ես Ֆերոսի և հորս մահվան վրեժը լուծեն:

Այստեղ Օրեստեսը հանդիպում է իր վշտաբեկ քրոջը՝ Էլեկտրային և ստրկուհիների խմբին: Կատարվում է «ճանաչելու» տեսարանը: Պալատ թափանցելով իբրև օտարական, որն եկել էր Օրեստեսի մահը հաղորդելու, Օրեստեսը սպանում է Էգիսթոսին, այնուհետև Կլիտենմեստրեին, բայց նրան համակում է խելագարությունը, նա փախչում է, հետապնդվելով Էրինիաների /վրիժառուքյան աստվածուհիների/ կողմից:


III. «Եվմենիսներ». պատկերում է աստվածների պայքարն Օրեստեսի մեղավորության հարցի շուրջը: Էրինիաները, որոնք մարմնավորում էին արյան վրիժառուքյան տոհմային սկզբունքը, պահանջում են պատժել Օրեստեսին առանց գործի որևէ քննության, բայց Աթենասը սպանության դրդապատճառների հարցն է առաջ քաշում, պարտադրում դատական քննություն: Հին աստվածուհիները բախվում են «կրտսեր աստվածների»՝ Աթենասի և Ապոլլոնի հետ, այդ պայքարը Եսքիլոսը ներկայացնում է որպես պայքար հայրիշխանության և մայրիշխանության միջև: Օրեստեսը արդարացված է, իսկ Էրինիաները այսուհետև պաշտվելու են որպես

պտղաբերության բարեհաճ աստվածուհիներ «Էվմենիսներ» անունով:

Եսքիլոսի ողբերգության առանձնահատկությունները՝

1. Հայրենասիրությունը
2. Վիթխարակերտությունը /մոռումենտալիզմ/
3. Պաթետիկան
4. Անհատականության խորացված բնութագրի բացակայությունը
5. Դրամատուրգիական կառուցվածքի պարզունակությունը
6. «Համր վշտի» /բեմում երկարատև լռության/ ներմուծությունը
7. Ողբերգության կենտրոնացումը մեկ իրադրության շուրջը
8. Հանդիսավորություն և փառապանծություն
9. ա. Առաջին պիեսներում /«Պարսիկներ», «Աղերսողուհիներ»/ երգչախմբային տեսարանների գերադասությունը, երկրորդ դերասանի համեստ մասնակցությունը, կերպարների վերացականությունը
բ. Ստեղծագործական միջին շրջանում /«Յոթն ընդդեմ Թեբեի», «Շղթայված Պրոմեթևս»/ հերոսի կենտրոնական կերպարի հայտնվելը, երկխոսության և պրոլոգների զարգացումը, էպիզոդիկ կերպարների հստակությունը
գ. Երրորդ շրջանում /«Օրեստական»/ բավականին բարդ կառուցվածքը, դրամատիզմի զարգացումը, երեք դերասանի մասնակցությունը, բազմաթիվ երկրորդական կերպարների ներմուծումը
10. Հիմնական պրոբլեմատիկան է՝ աստվածային կամքի և մարդու գիտակցական վարքի հարաբերակցությունը
11. Ստեղծագործությունների դիցաբանական հիմքը /Եսքիլոսի արտահայտությամբ՝ «Հոմերոսի խնջույքների փշուրներ»/

ՍՈՖՈԿԼԵՍ /496 – 406 թ.թ./



Եթե Եսթիլոսը աթենական դեմոկրատիայի ծնունդ առնելու ժամանակի պոետն էր, Էվրիպիդեսը՝ ճգնաժամինը, ապա Սոֆոկլեսը՝ Աթենքի ծաղկման, «Պերիկլեսի» դարի պոետը: Սոֆոկլեսի հայրենիքը Կոլոնն էր /Աթենքի արվարձանը/, որը պոետը հռչակավոր է դարձրել մահվանից առաջ գրած «Էդիպը Կոլոնում» ողբերգությամբ:

Նա ծագումով պատկանում էր ունևոր շրջաններին, ստացել էր ավանդական մարմնամարզական և երաժշտական կրթություն: Ժամանակակիցների սիրելի պոետն էր, մահվանից հետո դասվել էր «հերոսների» կարգը, նրա գերեզմանի վրա ամեն տարի զոհեր էին մատուցում: Գրել է 123 պիես, մրցույթներին 24 անգամ ստացել է առաջին մրցանակ, և ոչ մի անգամ վերջին տեղը չի գրավել: Մեզ հասել է միայն 7 ամբողջական ողբերգություն:

I. Էլեկտրա: Գրված է Եսթիլոսի «խեթֆորների» սյուժեով, բայց այստեղ գլխավոր դեմքը Էլեկտրան է, որը տարիներ շարունակ միայնակ է կրել Կլիտեմնեստրեյի և Էգիսթոսի դեմ բողոքը և ենթարկվել նրանց հետապնդումներին: Էլեկտրայի անհանդուրժողականությանը հակադրված է Սոֆոկլեսի հորինված, Էլեկտրայի և Օրեստի քրոջ՝ բարեհամբույր Քրիսոթեմիսի հնազանդությունը:

Սոֆոկլեսի Էլեկտրան ավելի կենդանի կերպար է, քան Եսթիլոսինը, նրա կրքոտ բնավորությունը արտահայտվում է վշտի, ցասունի, ուրախության բազմազան տեսարաններում: Իսկ Օրեստի կերպարը ավելի մարդկային է Եսթիլոսի ողբերգության մեջ, որտեղ, մոր սպանությունից առաջ, նա մոլորված հարցնում է ընկերոջը. «Պիլադ, ի՞նչ անեն»: Սոֆոկլեսի Օրեստը անողոք է նա կատարում է Ապոլլոնի կամքը: Կլիտեմնեստրեյի կերպարը այստեղ զրկված է Եսթիլոսյան ողբերգական վսեմությունից:

II. Փիլոկլետոս /409 թ.: Քննարկվում են խորամանկության, նենգամիտ իմաստության և ազնիվ ուղղամտության հակադրության, ինչպես նաև անհատի և պետության շահերի բախման հարցերը: Գլխավոր հերոսը՝ Տրոյական պատերազմի մասնակից Փիլոկլետոսը, օձի խայթոցից առաջացած վերքի գարշահոտության պատճառով արքորվել է ամայի Լեմնոս կղզին, որտեղ անցկացրել է տաս տարի: Աստվածները հայտնում են հույներին, որ նրանց հաղթանակը հնարավոր կլինի միայն Փիլոկլետոսի մոտ գտնվող Յերակլեսի աղեղի առկայության դեպքում: Ողիսսը առաջարկում է

խորամանկությամբ խլել աղեղը, սակայն Աքիլլեսի որդի՝ ազնիվ Նեոպտոլեմը հայտնում է Փիլոկտետոսին ճշմարտությունը: Նրան միանում է Յերակլեսի ստվերը և Փիլոկտետոսը հանձնում է աղեղը: Աստվածները, գնահատելով Փիլոկտետոսի անձնվեր հայրենասիրությունը, բուժում են նրա վերքը, և նա միանում է մարտնչող հայրենակիցներին:

Այսպիսով՝ մարդու երջանկությունը կայանում է ո՛չ թե անձնական շահերի բավարարման, այլ հայրենիքին ծառայելու մեջ՝ դա է ողբերգության հիմնական գաղափարը:

III.«Տրախինուկիներ»: Եվս մի ողբերգություն, որտեղ հերոսը հանցանք է կատարում անգիտությամբ: Յերակլեսի կողմից սպանված կենտավրո՝ Նեսսը, մահից առաջ խորհուրդ է տալիս Յերակլեսի կնոջը՝ Դեանիրեին, Յերակլեսի թիկնոցը թաթախել իր արյան մեջ, որն իբր սիրահարույց դեղ է: Իրականում այն թույն ու ժահր էր: Դեանիրեն, միամտաբար հավատալով Նեսսին, թունավոր թիկնոցը ուղարկում է սիրեցյալ ամուսնուն: Չդիմանալով ամտանելի տանջանքներին, Յերակլեսը իրեն նետում է կրակը, Դեանիրեն նույնպես ինքնասպան է լինում:

IV.«Այաքս»: Սոֆոկլեսի վաղ ողբերգություններից մեկն է: Ազնիվ և խիզախ ռազմիկ Այաքսը, իմանալով որ հույներն Աքիլլեսի զրահները շնորհել են Ոդիսևսին, վիրավորվում և որոշում է վրեժխնդիր լինել: Գիշերը նա, սուրը ձեռքին, ուղևորվում է դեպի Ատրիդների և Ոդիսևսի վրանները, սակայն աստվածների կամքով, խելագարության մոլուցքի մեջ, ոչնչացնում է ցուլերի և գառների հոտեր: Լուսաբացին սթափվելով, ամաչում է իր հակահայրենասիրական մտադրությունից և «պառկում է սրի վրա»: Ողբերգությունը վերջանում է Այաքսի թաղման մասին վեճով՝ Ագամեմնոնի կարծիքով Այաքսը արժանի չէ պատվավոր թաղման, սակայն հաղթում է Ոդիսևսը, որը հայտարարում է, որ մահը վերջ է դնում թշնամանքին, իսկ դիակի անպատվումը «աստվածային» օրենքների խախտում է:

V.«Էդիպ արքան»: Ողբերգության սյուժեն վերցված է Թեբեական շարքից: Թեբեի արքա Լայոսը զուշակներից իմանալով, որ սպանվելու է որդու ձեռքով, հրամայում է մի ստրուկի շամփրել նորածին որդու ոտքերը և թողնել Կիֆերոն սարի վրա: Սակայն ստրուկը խղճալով մանուկին, նրան տալիս է Կորինթոսի մի ստրուկի, որն էլ իր հերթին հանձնում է Կորինթոսի անգավակ թագավորին: Պոլիբոս արքան Էդիպին /որի անունը նշանակում է ուռած ոտքեր/ դաստիարակում է որպես հարազատ որդու: Մի օր, մի հարբած նավաստի նրան «ընկեցիկ» է անվանում: Ջարմացած Էդիպը դիմում է գուշակին և իմանում, որ նրան վիճակված է սպա-

նել հորը և ամուսնանալ մոր հետ: Սարսափահար էղիպը թողնում է «ծնողներին» և հեռանում Կորինթոսից:

Թեբե քաղաք տանող ճանապարհին նա, վեճի բռնվելով մի ծերունու հետ, սպանում է նրան և նրա թիկնապահներին: Հասնելով Թեբե, էղիպը հանդիպում է մարդակեր Սֆինքսին, որը սարսափի մեջ է պահում թեբեացիներին: Լուծելով Սֆինքսի առաջարկած հանելուկը, էղիպը ստիպում է նրան հեռանալ Թեբեի դարպասներից: Երախտապարտ թեբեացիները էղիպին առաջարկում են դառնալ Թեբեի թագավոր, ամուսնանալով իրենց այրի թագուհու հետ: Այսպիսով՝ էղիպը ամուսնանում է Թեբեի թագուհի Իոկաստեի հետ, նրանից ունենում է չորս զավակ /երկու որդի՝ Պոլիմիկոս և Էթեոկլես, և երկու դուստր՝ Անտիգոնե և Իսմենե/ և, վայելելով ժողովրդի սերը, 16 տարի թագավորում է Թեբեում:

Սոֆոկլեսի ողբերգությունը սկսվում է հանդիսավոր թափորով, թեբեացիները աղերսում են էղիպին նորից փրկել քաղաքը, այս անգամ սարսափելի ժանտախտից: Էղիպը Իոկաստեի եղբայր Քրեոնին ուղարկում է Դելֆի, հարցում անելու պատգամախոսին: Վերադառնալով՝ Քրեոնը հայտնում է, որ ժանտախտի պատճառը Լայոսին սպանողի Թեբեյում գտնվելն է: Էղիպը հետաքննություն է ձեռնարկում, կույր գուշակ Տիրեսիոսը հայտնում է, որ Լայոսին սպանողը ինքը՝ էղիպն է: Այդ ժամանակ հայտնվում են երկու ստրուկ, մեկը՝ պատահամա՞ր փրկված Լայոսի թիկնապահը, վկա է եղել նրա սպանությանը, մյուսը՝ Կորինթոսից գալով, հայտնում է, որ իրենց թագավորը մահացել, կորինթոսցիները հրավիրում են էղիպին հաջորդել նրան: Տեսնելով էղիպի վիշտը, ստրուկը նրան հանգստացնում է, ասելով, որ նա Պոլիքոսի որդին չէ և պատմում է, թե ինչպես է բերել ոտքերը շամփրած մանկանը, հանձնել իր թագավորին: Իոկաստեն, հասկանալով, թե ինչպիսի հանցանք է գործել՝ լինելով հարազատ որդու կինը, ինքնասպանություն է գործում: Էղիպը, ցնցված, իրեն կուրացնում է և հեռանում Թեբեից: Նրան հետևում է միայն Անտիգոնեն:

VI «Անտիգոնե»: Մշակում է մարդկային օրենքների և բարոյականության «չգրված օրենքների» կոնֆլիկտը: Անտիգոնեի երկու եղբայրների սպանվելուց հետո Թեբեի թագավոր Քրեոնը հրամայում է համապատասխան մեծարանքով թաղել Էթեոկլեսին, իսկ Թեբեի դեմ պատերազմող Պոլիմիկոսի մարմինն արգելում է հողին հանձնել, սպառնալով մահվան ենթարկել հրամանը չկատարողին: Ողբերգության նախերգանքում Անտիգոնեն հաղորդում է Իսմենեին Քրեոնի արգելքի և եղբորը թաղելու իր մտադրության մասին:

*Եղբայրներից միայն մեկին թաղման ծեսով
Կրեոնն հարգեց: Մինչ մյուսն, ահավասիկ՝
Պատվագուրկ է և անարգված: Էտեոկլեսին
Արդարացի և օրենքի պատշաճությամբ
Թաղեց արդեն, ուստի այնտեղ, անդրաշխարհում
Էտեոկլեսին պատիվ ու փառք է վիճակված,
Մինչ դին Պոլիսիկի մնաց անթաղ, անարգ:*

Այս էպիգրոդում Սոֆոկլեսը դիմում է իրեն բնորոշ ոճաձևին՝ խիստ և մեղմ հերոսների հակադրմանը: Երկչոտ Իսմենեն համակրում է անհողողող թրոջը, բայց տատանվում է գործակցել նրան: Անտիգոնեն Պոլիսիկեսի մարմինը ծածկում է հողի բարակ շերտով, այսինքն՝ կատարում է սիմվոլիկ թաղում, որը ըստ հունական պատկերացումների բավական էր մեռածի հոգին հանգստացնելու համար: Իմանությունը սպառնող վտանգ, և երբ նրա մոտ են բերում Անտիգոնեին, որին բռնել էին երկրորդ անգամ Պոլիսիկեսի դին այցելելու ժամանակ, Անտիգոնեն բացատրում է իր գործողության իրավացիությունը, վկայակոչելով արյան պարտականությունը և աստվածային օրենքների անասանությունը: Քրեոնի որդի և Անտիգոնեի փեսացու Յեմոնեսն իզուր է մատնանշում հորը, որ Թեբեի ժողովրդի համակրանքը Անտիգոնեի կողմն է: Քրեոնը Անտիգոնեին մահվան է դատապարտում քարե դամբարանում: Կույր գուշակ Տիրեսիոսը հաղորդում է Քրեոնին, որ նրա վարմունքը զայրացրել է աստվածներին և նախագուշակում է սոսկալի աղետներ: Քրեոնը ուղևորվում է Պոլիսիկոսին թաղելու, այնուհետև Անտիգոնեին ազատելու, սակայն բանբերը հաղորդում է, որ Անտիգոնեն դամբարանում կախվել է՝

*Կախված էր նա յուր հագուստի ոլոր գոտու օղակից,
Իսկ Յեմոնը յուր գրկի մեջ նրան բռնած,
Անիծում էր յուր գետնատակ հարսանիքն այդ դառնակսկիծ,
Վճիռն ահեղ յուր ծնող հոր և կործանումն ահեռլի:*

Յեմոնեսը հոր աչքի առաջ իր հարսնացուի դիակի մոտ իրեն սրախողող է անում: Քրեոնի կինը, լսելով որդու մահվան լուրը, վերջ է տալիս կյանքին, անիծելով որդեսպան ամուսնուն: Քրեոնը խելագարվում է: Աստվածային արդարությունը, այսպիսով, հաղթանակում է, սակայն առանց աստվածային ուժերի մասնակցության:


VII. «Էդիպը Կոլոնում»: Սոֆոկլեսի վերջին ողբերգությունն է, որը բեմադրվել է նրա մահից հետո: Այստեղ Սոֆոկլեսը փորձեց մեղմացնել մարդկային ճակատագրի այն մռայլ պատկերը, որը նկարագրված է «Էդիպ արքայում»: Կույր վտարանդին, որի անուցից ցնցվում են բոլոր նրան հանդիպողները, մահանում է աստվածների ընտրյալի հիասքանչ մահով և լիության աղբյուր է հանդիսանում այն երկրի համար, ուր նա իր վերջին ապաստանն է գտնում: Սոֆոկլեսի հերոսները վառ կերպով արտահայտված անհատականությամբ անձիք են, բայց պատկերելով մարդու վեհությունը, մտավոր և բարոյական ուժերի հարստությունը, Սոֆոկլեսը դրա հետ միասին նկարագրում է նրա տկարությունը, մարդկային հնարավորությունների սահմանափակությունը: Սոֆոկլեսի հիմնական արժանիքներից մեկը՝ կերպարների բնութագրության արվեստն է: Նրա հերոսները մարդկային են, նրանց հոգեկան կյանքը ավելի հարուստ է, քան Էսքիլոսի հերոսներիինը, գործողությունը նույնպես ավելի բարդ է շնորհիվ հերոսների տատանումների և ապրումների:

Սոֆոկլեսը հաճախ դիմում է հերոսների կոնտրաստային հակադրմանը, որի արտահայտություններից մեկը «ճառերով մրցելն» է: Մեծ ուշադրություն է հատկացնում կանացի կերպարներին: Սոֆոկլեսը հանդես բերեց երրորդ դերասանին, այսպիսով ավելի բազմազան դարձրեց գործողությունը: Սոֆոկլեսի նորմուծությունը ընկալեց Էսքիլոսը և օգտագործեց «Օրեստականում»: Խումբը, որի թվական կազմը Սոֆոկլեսը ավելացրեց, հասցնելով 15 երգիչների, միայն օժանդակ դեր է խաղում: Էսքիլոսյան ողբերգության վսեմությունից հրաժարվելը Սոֆոկլեսի ողբերգություններում արտահայտվել է նաև լեզվի պարզեցմամբ:

Սոֆոկլեսի ողբերգական արվեստը մեծ ազդեցություն ունեցավ նոր ժամանակի գրականության վրա՝ Կոռնելյ, Վոլտեր /«Էդիպ»/, Ռասին /«Թեբեական»/, Աեռիմանմիստներ /Յեզելն «Անտիգոնեն» անվանում էր «ողբերգության բացարձակ օրինակ»/, XX դ. Անույի «Անտիգոնեն», Ստրավինսկու «Էդիպ արքա» օպերան և այլն:

Ի տարբերություն Էսքիլոսի, Սոֆոկլեսի ողբերգություններում աստվածները միշտ իրավացի են, հերոսներն՝ ավելի մարդկային և ինքնուրույն իրենց որոշումներում, ողբերգականությունը կապված է ոչ թե տոհմի, այլ անհատի ճակատագրի հետ, եռերգության մասերի սյուժեները շաղկապված չեն, ամեն ողբերգությունը ինքնուրույն ստեղծագործություն է, դրամատուրգիական կառուցվածքը ավելի հստակ է:

ԷԿԻԿՈՒՂԵՍ /480-406 թ.թ./



V դարի երրորդ ողբերգական բանաստեղծն է: Ծնվել է 480 թ. Սալամին կղզում: Հայրը, ըստ Արիստոֆանի, եղել է կանաչի վաճառող, սակայն հայտնի է նաև, որ նա ստացել է փայլուն կրթություն եղել է փիլիսոփա Անաքսագորի աշակերտը և, ըստ ժամանակակիցների վկայության, նրան, ինչպես և Անաքսագորին, ոչ ոք ժպտալուց չի տեսել: Էկիպիղեսը սովորել է նաև սոփիստ Պրոտագորի մոտ, որի հիմնական դրույթը՝ «մարդն է ամեն ինչի չափանիշը», մեծապես ազդել է Էկիպիղեսի կերպարների ստեղծման վրա: Արիստոտելն իր «Պոետիկայում» գրել է, որ Սոֆոկլեսը մարդկանց կերտում է այնպես «ինչպիսին նրանք պետք է լինեն, իսկ Էկիպիղեսն՝ ինչպես որ նրանք կան»:

Հին վարքագրություններում շատ են չարախոսությունները Էկիպիղեսի հասցեին՝ բացի պլեբեյական ծագումից նրան վերագրվում են ֆիզիկական արատներ, մռայլ բնավորություն, ընտանեկան դժբախտություններ և մահվան երկու վարկած՝ իբր հոշոտել են կամ գազազած շները, կամ ստեղծած կանացի կերպարներից վիրավորված կանայք: Հայտնի է նաև, որ Էկիպիղեսը այդ դարաշրջանի համար հազվադեպ մեծ գրադարան է ունեցել, և այսօր էլ Սալամին կղզում կարելի է այցելել այն քարանձավը, որտեղ ստեղծագործել է մեծ պոետը:

Էկիպիղեսի երկերը խիստ դատապարտության էին արժանանում ժամանակակից հասարակության կողմից և անընդհատ ծաղրի առարկա դառնում V դ. կատակերգության համար: Քսան անգամ Էկիպիղեսը մասնակցել է ողբերգության մրցույթներին, բայց միայն հինգ անգամ է արժանացել առաջին մրցանակի: Նա մահից հետո, ուշ անտիկ շրջանում, դարձավ հույների ամենասիրելի ողբերգական պոետը: Նրա գրած 92 դրամաներից մեզ է հասել 19-ը /«Ռեսի» հեղինակությունը կասկած է առաջացնում/:

1.«Մեղես» /431 թ./: Սյուժեն վերցված է արգոնավորների մասին միթոսից: Կախարդ Մեղեսան, Կոլխիդայի թագավոր Էտի դուստրը և Հելիոս աստծո թռչունային սիրահարվում է Յասոնին, սպանում եղբորը, դավաճանելով հայրենիքը՝ օգնում է Յասոնին տիրանալ ոսկե գեղմին, և մեկնում է Հունաստան:

Ողբերգության սյուժեն վերաբերվում է այն ժամանակաշրջանին, երբ Մեղեսան Յասոնի և երկու զավակի հետ ապրում է Կորին-

թոսում և իմանում է, որ Յասունը որոշել է ամուսնանալ Քրեոնթ թագավորի դստեր՝ Քրեոսի հետ:

Պրուլոզը հանդիսատեսին ծանոթացնում է Մեդեայի հոգեվիճակին. բեմի ետևից լսվում են Մեդեայի հառաչանքները, անեծքներն ու սպառնալիքները Յասունի և նրա ժառանգների հասցեին: Մեդեայի մենախոսությունը արտահայտում է ընտանիքում կնոջ և տղամարդու անհավասար իրավունքները, անարդար բարոյական ավանդույթները: Էվրիպիդեսի Մեդեան հպարտ կին է, որը մտադիր չէ ներել Յասունին, հաշտվել նրա հետ, հակառակը՝ նրա միակ նպատակը վրեժխնդությունն է, Յասունի տոհմի ոչնչացումը՝

*Բայց ես նրան, կամքով անմահ աստվածների,
Կվճարեմ չար վրեժով, կկործանեմ նրա սերունդն,
Ջավակներին, ինձնից ծնված, նա կենդանի չի տեսնի,
Եվ չի ծնի նրան զավակ նորապսակ նրա կինն,
Որը, իբրև ամենաանողոք և դավաճան տարփածու,
Կխորտակվի դաժան մահով, թույնից իմ ժանտ և անխուսափ:*

Մեդեան, իր որդիների միջոցով, թունավորված հարսանեկան զգեստ է ուզարկում Քրեոսին, որն անմիջապես փորձում է և մահանում: Թունավորվում է նաև նրան գրկող հայրը: Բանբերը հաղորդում է արքայադստեր և Քրեոնի տանջալից մահվան մասին և, հասկանալով, որ զայրացած կորինթոսցիները վրեժխնդիր կլինեն իր զավակներից, Մեդեան ուժ է գտնում ի կատար ածելու սկզբնական մտադրությունը՝ սպանելու զավակներին: Վերջին բեմական էֆեկտը հետևյալն է՝ Մեդեայի աստվածային պապ Յելիոսը, նրան թևավոր վիշապներ լծած երկնային կառք է ուղարկում, որի վրա նա իր զավակների դիակները գրկին, հեռանում է /նշենք, որ առասպելում Մեդեան իր զավակներին չի սպանում/:

2. Սիրո թեման օգտագործվում է Էվրիպիդեսի մյուս շատ հայտնի «Իպոլիտոս» /428 թ./ ողբերգության մեջ: Աթենքի արքա Թեսևսի կինը՝ Ֆեդրան, սիրահարվում է իր խորթ որդի Իպոլիտոսին, ինչը և խոստովանում է դայակին՝

*Դայակ. - Այդ ի՞նչ ասացիր, սիրասուն զավակ,
Սիրահարվա՞ծ ես: Ասա. ու՞մ արդյոք:
Փեդրա. – Ով էլ որ լինի՝ ամազոնից է նա աշխարհ եկել:
Դայակ. – Յիպոլի՞տն արդյոք:
Փեդրա. - Դու անվանեցիր, ինձնից չես լսել:*

.....

*Թող որ կործանվի ամենադաժան մահով անողորմ
Այն կինն անիծյալ, որն օրինական մահիճն ամուսնու
Մի այլ մարդու հետ խայտառակ պղծեց առաջին անգամ:*

Իպոլիտոսը, որը մոլի որսորդ է և պաշտում է կույս Արտեմիս աստվածուհուն, խուսափում է սիրուց և կանանցից: Իպոլիտոսից մերժում ստանալով, Ֆեդրան նամակ է թողնում ամուսնուն, որտեղ մեղադրում է Իպոլիտոսին իրեն բռնաբարելու փորձի համար: Չայրացած Թեսևսը խնդրում է Պոսեյդոնին պատժել անառակ որդուն՝

*Հիպոլիտը՝ իմ զավակը մեծագույլ,
Փորձ է արել, զարհուրելի, բռնի մի փորձ՝
Ավաղ, պղծել իմ անկողինն:
Կանչում եմ քեզ, ո՛վ Պոսիդոն, իմ մեծ հայր.
Մի ժամանակ ինձ խոստացար,
Որ կատարես ցանկություններն իմ երեք,
Արդ, կատարիր դու իմ փափագը վերջին,
Հայր, սպանիր այս զազրելի իմ զավակին...*

Պոսեյդոնը ուղարկում է հրեշավոր մի ցուլ, որը սարսափ է ազդում Իպոլիտոսի մտուզների վրա, և նա մեռնում է, դիպչելով ժայռին: Հանդիսատեսները չընդունեցին ողբերգությունը, որը հակաբարոյական թվաց, և Էվրիպիդեսը ստիպված եղավ ներկայացնել «Իպոլիտոսի» նոր խմբագրությունը, որը և հասել է մեզ: Նոր Ֆեդրան տառապում է սիրո կրքից, որն ապարդյուն կերպով ջանում է հաղթահարել: Նրա դայակը տիրուհու գաղտնիքը հայտնում է Իպոլիտոսին: Հետագայում Ֆեդրայի պատիվը փրկելու համար, նա է զրպարտում Իպոլիտոսին: Այսպիսով երկրորդ խմբագրության մեջ գայթակղիչ Ֆեդրան դառնում է զոհ: Հռոմեական ողբերգական պոետ Սենեկան իր «Ֆեդրայում» դիմեց Էվրիպիդեսի առաջին խմբագրությանը, իսկ Ռասինի «Ֆեդրայի» համար, որը ֆրանսիական կլասիցիզմի լավագույն ողբերգություններից մեկն է՝ նյութ ծառայեցին երկու խմբագրությունները:

3. «Էլեկտրա» /413 թ./: Էվրիպիդեսը վերամշակում է միթոսը, նրա հերոսները միայն աստվածների կամքը կատարողներ չեն, ինչպես Էսքիլոսի մոտ, ոչ էլ Սոֆոկլեսի հերոսների նման օրենքների ջաթագով են, պարզապես դժբախտ զավակներն են մի մոր, որը մոռացել է նրանց հանուն սիրեկանի: Կլիտեմնեստրեն իր և Էգիսթոսի իշխանությունը ապահովելու նպատակով Էլեկտրային ամուսնացնում է մի ավտուրգի /գյուղական աշխատողի/ հետ:

Էվրիպիդեսը այստեղ հրաժարվում է «ճանաչման տեսարանում» իր նախորդների օգտագործած միամիտ մանրամասնություններից՝ Օրեստեսի մագերի խոպոպից, ոտնահետքից: Օրեստեսը և Էլեկտրան վրեժխնդրության համար չեն գնում թագավորական պալատ, այլ լուր ուղարկելով Կլիտեմնեստրեին Էլեկտրայի սկսվող ծննդաբերության մասին, խաբեությամբ նրան կանչել են տալիս ավտուրգի խրճիթը, որտեղ և սպանում են: Օրեստեսը չարախնդորեն սպանում է Էգիսթոսին, սակայն մոր սպանության պահին ահավոր տանջվում է /Էսքիլոսի մոտ միայն տատանվում է/, և երբ Էլեկտրան, տեսնելով եղբոր տառապանքները, նախատում է նրան, Օրեստեսը, դեմքը թիկնոցով ծածկելով, ի վերջո հասցնում է սրի մահացու հարվածը: Ողբերգության վերջում հայտնվում են Կլիտեմնեստրեի եղբայրները՝ Դիոսկուրները, և ներում են շնորհում մայրասպաններին:

4. «Օրեստես» /408 ք./: «Էլեկտրայի» շարունակությունն է, պատմում է մոր սպանությունից հետո Օրեստեսի հոգեկան տառապանքների մասին:

5. «Իֆիգենիան Ավլիդում» /406 ք./, բեմադրվել է հեղինակի մահից հետո, արժանացել է առաջին մրցանակի: Էվրիպիդեսին հաջողվել է բարբարոսական զոհաբերությունը վերածել անձնագոհության սխրանքի: Երբ աստվածները Տրոյական պատերազմից առաջ Ավլիդ նավահանգստում հավաքված հունական զորքին հանընթաց քամի ուղարկելու համար պահանջեցին զոհաբերել Ագամեմնոնի դստերը՝ Իֆիգենիային, Ագամեմնոնը ստիպված եղավ նրան Արգոսից հրավիրել Ավլիդ, Աթիլլեսի հետ ամուսնացնելու պատրվակով: Իմանալով իր ժամանելու իրական պատճառը՝ Իֆիգենիան հուսահատության մեջ է ընկնում, ողբում, աղերսում կյանքը չխլել: Նրան պաշտպանում են Աթիլլեսը և մայրը՝ Կլիտեմնեստրեն, որն անիծում է Ագամեմնոնին, երդվում է վրեժխնդիր լինել: Սակայն լուսաբացին Իֆիգենիան ինքնական պատրաստականություն է հայտնում կյանքը զոհաբերել հանուն հայրենիքի հաղթանակի: Միամիտ, վախեցած աղջնակը դառնում է հերոսական անձնագոհ կերպար: Էվրիպիդեսի այս ողբերգության սյուժեն օգտագործել է XVII դարի ֆրանսիական մեծ կլասիցիստ Ռասինը իր «Իֆիգենիան Ավլիդում» ողբերգության համար:

6. «Իֆիգենիան Տավրիդում» /413 ք./: Գործողությունը կատարվում է տավրերի երկրում, որտեղ հայտնվում է Իֆիգենիան զոհաբերությունից հետո: Կույսերի հովանավոր Արտեմիսը վերջին պահին զոհասեղանը մշուշով էր պատել և Իֆիգենիային փոխարինել սրբազան եղնիկով: Տավրերի երկիրն այցելողներին Իֆիգենիան պարտավոր էր զոհաբերել Արտեմիսի տաճարում: Այստեղ է

հայտնվում Օրեստեսը, որն ընկերոջ՝ Պիլադի հետ եկել էր փնտրելու Արտեմիսի կուրքը: Կատարվում է ավանդական «ճանաչման տեսարանը», Իֆիգենիան օգնում է եղբորը գտնել կուռքը, նրանք միասին վերադառնում են Յունաստան:

7. «Յերակլես» /423-421թթ./
8. «Աղերսավորներ» /416 թ./
9. «Անդրոնաքե» /423-421 թթ./
10. «Գեկաքե» /423 թ./
11. «Տրոյուհիներ» /415 թ./
12. «Յերակլիդներ» /427 թ./
13. «Փյունիկուհիներ» /410-408 թթ./
14. «Ալկեստա» /438 թ./
15. «Յեդիներ» /412 թ./
16. «Իոն» /415 թ./
17. «Քարսոսուհիներ» /406 թ./
18. «Կիկլոպ» /սատիրական դրամա/

Մեդեայի և Ֆեդրայի կերպարները Էվրիպիդեսի հակառակորդները օգտագործեցին «կնատյացի» համբավ ստեղծելու համար: Բայց նրա երկերում նշանակալի տեղ են գրավում նաև անձնագոհի հերոսուհիների կերպարները, որոնք իրենց կյանքն են տալիս հարազատներին փրկելու կամ հայրենիքի բարօրության համար: Նրանց թվին է պատկանում «Իֆիգենիան Ավլիդում» ողբերգության հերոսուհին, «Տրոյուհիներ» ողբերգության հերոսուհիները և ուրիշներ:

Էվրիպիդեսի ստեղծագործությունը վերջավորեց հին հունական ողբերգությունը: Դիցաբանական սյուժեների մեջ նա հաճախ փոփոխություններ է նտցնում, ի տարբերություն Էսքիլոսի և Սոֆոկլեսի՝ չի հավատում աշխարհը կառավարող բարի ուժերին: Կասկածամտորեն է վերաբերվում պատգամախոսություններին և գուշակություններին: Էվրիպիդեսի ողբերգությունների կառուցվածքում մեծ դեր է խաղում պատահականությունը: Հաճախ օգտագործվում է դրամայի վերջաբանում աստօժ հանկարծակի հանդես գալը, որը հայտնի է լատինական “deus ex machina” անունով /աստված մեքենայից/: Մեմախոսությունները ծավալված են, արտացոլում են հերոսի հոգում կատարվող ներքին պայքարը: Լեզուն ավելի պարզ է, քան նախորդներինը: Էվրիպիդեսը հին հունական ողբերգության մեջ առաջինն էր, որ նկարագրեց զգացմունքների պայքարը և ներքին գժտությունը:

Ի տարբերություն Էսքիլոսի և Սոֆոկլեսի, Էվրիպիդեսը չի ընդունում, այլ քննադատում է միթոսը, խումբը ավելի դրվագային

դեր է խաղում, կերպարները հոգեբանորեն ավելի բարդ են, նրանց հոգում ծավալվող պայքարի արդյունքում հաղթում է ոչ թե պարտքը, այլ կիրքը, ավելի մեծ տեղ է տրվում երաժշտական տարրին:

Էվրիպիդեսը նշել է երկու ուղղություն, որոնցով և ընթանում է հետագա հունական դրաման՝ մի կողմից՝ պաթետիկ, ուժեղ, բացառիկ, երբեմն էլ նույնիսկ պաթոլոգիկ կրքերի դրամայի ուղիւն, մյուս կողմից՝ հասարակ կերպարներով կենցաղային դրամային մոտենալը: Այդպիսի դրաման ըստ անտիկ տերմինոլոգիայի կոչվում էր կատակերգություն:

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Կոմեդիա /komoidia/ նշանակում է «կոմոսի երգ»: «Կոմոսը»՝ անհոգ խրախճանասերների խումբն է, որը խնջույքից հետո շրջում է և երգեր երգում: Կոմոսի դերը կատակերգության մեջ կատարում է դիմակավորվածների խումբը, որը փառաբանում է, իսկ ավելի հաճախ պախարակում այն անձնավորությանը, որի դեմ է ուղղված կատակերգությունը: Komedia–ն սկիզբ է առնում Դիոնիսոսին նվիրված պտղաբերության տոնակատարությունների երգերից և խաղերից, բայց V դարում դրա մասին վկայում են միայն խմբի զգեստները, որոնք և որոշում էին կատակերգության անվանումը՝ «Այծեր», «Կրետներ», «Թռչուններ», «Գորտեր» և այլն: Ի տարբերություն խմբերի մասնակիցների՝ դերասանի զգեստը մինչև IV դ. նույնն էր՝ հաստ փոր, հաստ նստուկ և կաշվե ֆալլոս: Դեմքին դիմակ էր հագնում: Կատակերգության առանձնահատկություններն են՝

1. Խմբերգը
2. ագոնը՝ /երկու կիսախմբերի վեճը/
3. պարաբասան խմբերի դիմումը հանդիսատեսին
4. դիմակները՝ /կանաչ, դարչնագույն, դեղին, կարմիր/
5. «բոմոլոխի» կերպարը՝ /ազնիվ միամիտ մեկը, որը ծաղրում է վաճառականներին, բժիշկներին, ամբոխավարներին/
6. սյուժեում ընդգրկված խնջույքի, սիրային արկածների, հարսանիքի եպիզոդները
7. եզրափակիչ մասում՝ ջահերով շքերթը
8. Ողբերգության մեջ, ըստ Արիստոտելի, գլխավոր դեր է խաղում վախը և կարեկցանքը, ինչպես նաև «կատարսիսը», այսինքն՝ այն ինքնամաքրումը, որն ապրում է հանդիսատեսը, մոռանալով առօրյա հոգսերը և հաղորդակցվելով կյանքի վեհ ու դաժան օրենքներին: Կատակերգության ժամանակ հանդիսատեսը

անհոգ ծիծաղում է հերոսների կեղծ տառապանքների վրա: Կատակերգությունը ստեղծվել է գյուղերում և մեծապես տարբերվում է քաղաքային մշակույթից:

VII դ. Սիցիլիայում ստեղծվեց «միմոսը»՝ ժողովրդական առօրյա կյանքի տեսարանների, ծիծաղելի իրադրությունների, չարածնի կերպարների ներկայացումը: Ժողովրդական միմոսի հիմքի վրա Սիցիլիայում ստեղծվել էր *Սոֆրոնեսի* և *Քսենարքոսի* արձակ երկխոսության ձև ունեցող գրական միմոսը: Դրա ընդօրինակումներն են Թեոկրիտեսի «Սիրակուզուհիներ» իդիլիան, Պլատոնի որոշ երկխոսությունները: Դրամատիկական ֆաբուլա ունեցող առաջին գրական կատակերգությունն է *Էպիքարմոսի* սիցիլիական կատակերգությունը /520 – 500 թթ./: Նա օգտագործել է ինչպես կենցաղային, այնպես էլ դիցաբանական սյուժեներ: Արիստոտելը հատուկ ընդգծում է Էպիքարմոսի նշանակությունը կատակերգության գարգացման ասպարեզում: Եգիպտոսում գտնվել են պապիրուսի վրա գրված հատվածներ, Էպիքարմոսի «Ողիսաը փախստական» կատակերգությունից, որը հիմնված է Ողիսասի Տրոյա թափանցելու մասին Յոմերոսի պատմության վրա, սակայն Էպիքարմոսի մոտ Ողիսաը կոմիկական կերպար է՝ նա վախկոտ է և, Տրոյա չհասնելով, թաքնվում է մի փոսում, որտեղ հորինում է հույներին հետազայում պատմած իր արկածները: Էպիքարմոսի կենցաղային պիեսներում հայտնվում է «պարասիտի» /ձրիակերի/ կերպարը և փրկիսոփայական տեսությունների, օրինակ՝ Յերակլիտեսի դիալեկտիկայի «ամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոփոխվում է» հիմնական դրույթի ծաղրը: Էպիքարմոսը չէր օգտագործում երգչախումբը, անտիկ քննադատները նրա պիեսները անվանում էին դրամաներ, քանի որ բացակայում է կոմոսը: Դրանց ծավալը մեծ չէր՝ մոտ 400 տող: Արևմտյան Յունաստանում ստեղծվել են փոքր միմիկական տեսարաններ՝ *ֆլիակներ*:

Հին ատտիկական կատակերգություն: Ամենաբարձր զարգացումը կատակերգությունն ապրել է Ատտիկայում՝ կրելով ողբերգության որոշ ազդեցություն: Հաստատվեցին դերասանների թիվը, բնահատուկ դիմակները, հունվար ամսին անցկացվող «լենենյերը» տոնի ժամանակ երեք կոմիկական հեղինակների մրցույթը, և վերջապես, կատակերգությունը տեղ գտավ Մեծ Դիոնիսականում: Երգչախումբը կազմված էր 24 հոգուց, թռչկոտում էր, կոտրատվում, բուռն և խելահեղ պարում: Դեկորացիաները չէին փոխվում: Կանանց թույլատրվում էր դերասան լինել:

Կատակերգության կառուցվածքն է՝

1. պրոլոգ՝ Տալիային դիմումը, բովանդակության բացատրությունը
2. պարող՝ երգչախումբի մուտքը
3. ազոն՝ մրցում, վեճ
4. պարաբասա՝ դիմումը հանդիսատեսին, կազմված էր երկու մասից՝ առաջինում խմբերգը հայցում էր հանդիսատեսի բարեհաճությունը, երկրորդը՝ բաժանվում էր չորս մասի՝
 - ա. օդա՝ առաջին կիսախմբի լիրիկական երգը
 - բ. էպիռեմա՝ առաջին կիսախմբի առաջնորդի մենախոսությունը
 - գ. անտօդա՝ երկրորդ կիսախմբի լիրիկական երգը
 - դ. անտէպիռեմա՝ երկրորդ կիսախմբի առաջնորդի մենախոսությունը

5. էպիսոդիների և ստասիմների հերթագայությունը

6. էքսոդ՝ պարող և երգող երգչախումբի ելքը:

Ատտիկական կատակերգությունն ուներ քաղաքական և մերկացուցիչ բնույթ: Նրա առանձնահատկություններն են՝ առանձին անձանց ծաղրելու ազատությունը, ծաղրածուական տարրերը, գրեհիկ արտահայտությունները, զգեստների խայտաբղետությունը: Առաջին ազոնը Մեծ Դիոնիսականի ժամանակ տեղի ունեցավ 486 թ., ելույթ ունեցան երեք կամ հինգ հեղինակ, ներկայացնելով մեկական կատակերգություն:

ԱՐԻՍՏՈՖԱՆ /450 – 384 թթ./

Արիստոֆանի 44 կատակերգությունից պահպանվել է 11-ը: Նրա բարձր գեղարվեստական արժեք ունեցող կատակերգությունները հանդիսանում են դարաշրջանի քաղաքական և պատմամշակութային կյանքի մասին տեղեկությունների աղբյուր: Արիստոֆանը արտահայտում է գյուղացիության տրամադրությունները՝ դժգոհությունը պատերազմից, իշխող դեմոկրատական կուսակցության հարձակվողական քաղաքականությունից:

1. «Աքարնանիացիներ» /425 թ., առաջին մրցանակ/ հակապատերազմական թեմայով:

2. «Չեծյալներ» /424 թ., առաջին մրցանակ/: Ուղղված է դեմոկրատական կուսակցության առաջնորդ Կլեոնի դեմ, այն էլ նրա ժողովրդականության շրջանում՝ սպարտացիներին ջախջախելուց անմիջապես հետո: Կլեոնի հակառակորդն էր «հեծյալների» արիստոկրատական կուսակցությունը: Գործողությունը կատարվում է խուլ ծերունի Դեմոսի /ժողովուրդ/ տան առաջ: Դեմոսը իր տան կա-

ռավարունը վստահել է Կաշեգործին /Կլեոնի հոր մասնագիտությունը/: Պրոլուզում երկու ստրուկ՝ Նիկիոսը և Դեմոսթենոսը /Պելոպոնեսյան պատերազմին մասնակցած զորավարների անուններն են/, որոշում են գողանալ Կաշեգործի գուշակին, որը հայտնում է, որ Կաշեգործը պետք է իշխանությունը զիջի ավելի «ցածր» մասնագիտության ներկայացուցչի՝ Երշիկագործին: Խմբերգը բաժանվում է երկու մասի և սկսվում է ագոնը: Կաշեգործն ու Երշիկագործը քծնում են Դեմոսին, Երշիկագործը կերակրում է նրան Կաշեգործից գողացած մապաստակով և Դեմոսը նրան է հաղթող ճանաչում: Երշիկագործը Դեմոսին եփում է եռման ջրի մեջ, այսպիսով նրան վերադարձնելով երիտասարդությունը: Վերջում գալիս են 30-ամյա խաղաղությունը մարմնավորող ուրախ գեղեցկուհիներ: Սկսվում է անսանձ ուրախությունը: Արիստոֆանը ստիպված եղավ խաղալ Կլեոնի դերը, քանի որ նշանակված դերասանը վախեցավ հանդիսատեսների ծեծից:

3. «Անպեր» /Երրորդ մրցանակ/: Ծաղրի է ենթարկվում Սոկրատեսը, սոփեստությունը, կեղծ իմաստությունը և վեճերում խաբեության հմտությունը: Գյուղացի Ստրեպսիադեսի որդի Ֆիդիպիդեսը խճճվել է պարտքերի մեջ, պարտքատերերը պահանջում են իրենց գումարները: Փրկելու համար անառակ որդու պատճառով վտանգված հարստությունը՝ Ստրեպսիադեսը որոշում է զնալ Սոկրատեսի «դպրոցը», որտեղ սովորեցնում են «թույլը ուժեղ դարձնել, սուտը՝ ճշմարտություն»՝

*Ասում են, որ էդ խելք ծախողները
Երկու տեսակ խոսք ունեն՝ սուտ և ճշմարիտ:
Սուտ ասելով ամեն մարդ, ամեն տեղ և միշտ
Կհաղթանակի, թեկուզ և գլխովին անարդար լինի:
Ուրեմն, եթե սուտ ասելը սովորես,
Բոլոր պարտքերից, որի պատճառը դու ես միայն,
Ես նույնիսկ մի գրոշ էլ չեմ տա:*

Իրական Սոկրատեսը ամբողջ ժամանակն անցկացնում էր Աթենքի հրապարակում, բայց Արիստոֆանի մոտ նա նստած է մի զամբյուղում, որը ճոճվում է անպերի մեջ: Սոկրատեսի ուսմունքից հիասթափվելով /աշակերտներից մեկը պարզում էր, թե մոծակն իր մարմնի որ մասում է տզզում, մյուսը՝ չափում էր լուի թռիչքների երկարությունը/ և ոչինչ չհասկանալով՝ Ստրեպսիադեսը հուսահատված վերադառնում է տուն: Ֆիդիպիդեսը որոշում է, որ ինքը ծանոթանա Սոկրատեսի ուսմունքին և արագորեն տիրապետում է բոլոր անհրաժեշտ խորամանկություններին, բայց սոփեստական արվեստ-

տը ուղղում է հոր դեմ և գազազած ծերուկը հրդեհում է Սուրաստեսի «իմաստնարանը»:

4.«Կրետներ» /422 թ./: Ծաղրի է ենթարկում դատական համակարգը:

5.«Խաղաղություն» /421 թ., երկրորդ մրցանակ/: Գովերգում է Նիկիոսի խաղաղության կնքումը:

6.«Թռչուններ» /414 թ./: Երկու ծեր աթենացիներ ուղևորվում են երջանկության երկիրը փնտրելու, դիմում են հոպոպին, որին առաջարկում են ստեղծել թռչունների քաղաք: Այն, գտնվելով երկրի և երկնքի միջև, ծնկի է բերելու և՛ մարդկությանը, և՛ աստվածներին: Ի վերջո աթենացիներից մեկն ամուսնանում է Ջևսի դստեր հետ, և հաշտություն է կնքվում:

7.«Լիսիստրատես» /411 թ./: Աթենքի և Սպարտայի կանայք հոգնել են ամուսինների վարած Պելոպոնեսյան պատերազմից: Աթենացի Լիսիստրատեսն /պատերազմ դադարեցնող/ առաջարկում է կանանց չկենակցել տղամարդկանց հետ, մինչև որ նրանք չդադարեցնեն պատերազմը: Շուտով հաստատվում է խաղաղություն:

8.«Կանայք Ֆեսմոֆորիներ տոնելիս» /411 թ./: Կատակերգությունը ուղղված է Էվրիպիդեսի դեմ:

9.«Գորտեր» /405թ. առաջին մրցանակ/: Պիեսում ծաղրի է ենթարկվում Էվրիպիդեսը: Դիոնիսոսը, մտահոգված ողբերգության բեմի դատարկությամբ, Էվրիպիդեսի և Սոֆոկլեսի 406 թ. մահվանից հետո ուղևորվում է դեպի մեռյալների արքայություն իր սիրեցյալ Էվրիպիդեսին դուրս բերելու համար: Գորտերի զգեստներ հագած խումբը ուղեկցում է Դիոնիսոսի նավակը: Հասնելով ստորերկրյա աշխարհը՝ Դիոնիսոսը մրցում է կազմակերպում Էսքիլոսի և Էվրիպիդեսի միջև՝

Էսքիլոս

Փոքրիկներին բարություն և ուղի է ուսուցանում ուսուցիչը, իսկ հասակավորներին ուսուցանում են պոետները: Մենք գեղեցիկի մասին միշտ պետք է խոսենք: Ինքը՝ անհրաժեշտությունը հրամայում է մեզ վեհ մտքերին և գործերին վեհ լեզու տալ:

Էվրիպիդես

Ես խոսել եմ պարզ, սովորական և տնային բաների մասին: Ինձ ստուգել կարող է ամեն ոք: Ես չեմ խաբել, չեմ պոռոտախոսել, Չեմ փքվել հնդուհավի նման, չեմ խաբել քաղաքացիներին...

*Չմտորեն սովորեցրել են նրանց,
Ցույց տվել կյանքի օրինակ,
Պոեզիայի մեջ ներդրել գիտություն
Եվ առողջ դատողություն: Այժմ ամենքն
Ընդունակ են դատել ամեն բանի մասին
Թե պետության մեջ, թե տանը:*

Եսքիլոսը հաղթում է և Դիոնիսոսը նրան է երկիր տանում:

10. *Օրենսդիր կանայք* /392 թ.առաջին մրցանակ/: Ծաղրի են ենթարկվում պետության մասին տարբեր ուսմունքները, հատկապես Պլատոնի «Պետության» դրույթները /քաղաքացիների բաժանումը երեք դասի՝ արհեստավորների, զինվորների և փիլիսոփաների, մասնավոր սեփականության և ընտանիքի վերացումը և այլն/: Կատակերգության մեջ կանայք զավթում են իշխանությունը և հռչակում են ամուսինների ընդհանրությունը:

11. «*Հարստություն*» /388 թ.: Աղքատ Քրեմիլը գերի է վերցնում հարստության աստված Պլուտոսին, բուժում է նրա կուրությունը, և աղքատ մարդիկ սկսում են ապրել լիության մեջ, իսկ բանասարկուն և հարուստ պառավը, որը փողով երիտասարդ սիրեկան էր պահում, սնանկանում են: Ազոնում ելույթ է ունենում Աղքատությունը և ապացուցում է, որ ո՛չ թե հարստությունն ու անբանությունը, այլ կարիքն ու աշխատանքն են հանդիսանում մշակույթի աղբյուրները: Աղքատությունը տալիս է բոլոր ուտոպիաների համար մահացու հարցը. «Իսկ ո՞վ է աշխատելու, եթե բոլորը հարուստ լինեն»: Մշտական պատասխանն է՝ ստրուկները: Բայց «ո՞վ է նրանց վաճառելու»: Պատասխան չկա: «Դու ինձ չես համոզի, նույնիսկ եթե համոզես», բացականչում է Քրեմիլը և վճռում է Աղքատությանը: Սնանկանում են նաև աստվածները, քանի որ մարդիկ նրանց զոհեր չեն մատուցում: Չերմեսը և նույնիսկ Ջեսը ստիպված իջնում են Օլիմպոսից և դառնում են Քրեմիլի ստրուկները:

Արիստոֆանի կատակերգությունների ոճը չափազանց արտահայտիչ է, լեզուն քաղաքային՝ ատտիկական, բայց կենդանի և պարզ, երբեմն գռեհկացված: Չետազայում ատտիկական կատակերգության քաղաքական բնույթը վերացավ, երգեցիկ խմբի դերը թուլացավ, զարգացավ կենցաղային և սիրային կատակերգությունը, որը IV դարում կոչվեց «նոր ատտիկական»:

Արիստոֆանի ստեղծագործությունը եզրափակում է հունական մշակույթի պատմության ամենափայլուն դարաշրջաններից մեկը: Այն տալիս է Աթենքում դեմոկրատիայի ճգնաժամի ժամանակաշրջանի քաղաքական և մշակութային վիճակի համարձակ, երգիծական պատկերը:

V - IV դԱՐԵՐԻ ԱՐՉԱԿԸ

Պատմագրություն: IV դարում, դեմոկրատիայի պայմաններում, զարգանում է դատավարական, քաղաքական և էպիդիկտիկ /հանդիսավոր/ ճարտասանությունը, հունական հռետորական արվեստը /րիտորիկա/, այսինքն՝ ճարտասանության և համոզիչ փաստարկման արվեստը, ինչպես նաև քաղաքականության և էթիկայի հիմքերի մատչելի շարադրումը: Հռետորական կրթությունը մատչելի էր միայն բարձր խավին: Ստեղծվեց նոր ժանր՝ գեղարվեստական ճառ, ինչպես նաև գեղարվեստափիլիսոփայական շարադրանքի գրավոր ձև՝ փիլիսոփայական երկխոսություն: Ամենանշանավոր հռետորներն են՝ *Լիսիուսը* /դատավարական/, *Իսկրատեսը* /հռետորության ուսուցիչ/ և *Դեմոսֆենը*՝ Իսկրատեսի հակառակորդը, հայտնի «Պանեգիրիկի» հեղինակը: Ժամանակակիցների վկայությամբ նա իր կակազելը հաղթահարեց բերանում քարեր պահած ճառեր արտասանելով:

Գեղարվեստական պատմագրության առաջին ներկայացուցիչն է *Հերոդոտը* /484-425 թթ./: Օճվել է Գալիկառնասում: Նրա աշխատությունը կոչվում է «Պատմություն»: Բաղկացած է իննը գրքից, ըստ Մուսաների թվի: Առաջին չորս գրքում շարադրվում է Պարսկաստանի, Ասորեստանի, Եգիպտոսի, Սկիֆիայի և Հայաստանի, իսկ 5-9-ում՝ հունապարսկական պատերազմների պատմությունը:

II- *Ֆուկիտիդեսը* Աթենքից /460 – 399 թթ./: Իր պատմության ութ գրքերում շարադրել է Պելոպոնեսյան պատերազմը, նշելով ստրուկների մասնակցությունը:

III – *Քսենոֆոնտը* /430 – 354 թթ./: Ավելի մակերեսային պատմագիր է, մասնակցել է պարսից արքա Արտաքսերքսեսի դեմ Կիռոս Կրտսերի 401 թ.արշավանքին: Հույների տաս հազարանոց զորքի հետ Բաբելոնից Քրդստանով և Հայաստանի սարերով նահանջել է դեպի Տրապիզոն: Քսենոֆոնտի աշխատություններն են՝ «Անաբասիսը», անավարտ «Հելլենիկան» և «Կիրոպեդիան»:

Փիլիսոփայություն. *Պլատոնը* /427–347 թթ./ հին արիստոկրատական տոհմից է, *կալոզակատիայի*, այսինքն՝ ֆիզիկական և բարոյական գեղեցկության զուգակցության կրող, դրամատուրգ, պոետ, երաժիշտ, նկարիչ, ատլետ: Նրա ուսուցիչն էր Սոկրատեսը՝ համեստ հազմված, ոտաբոբիկ, միշտ ընկերներով և աշակերտներով շրջապատված: Սոկրատեսը երբեք ոչինչ չի գրել, հարցեր է տվել և պատասխանել: Պլատոնը նրան հանդիպեց 407 թ. և մոռացավ բոլոր իր զբաղմունքները, բացի փիլիսոփայությունից: 399 թ.

ավանդական կրոնի քննադատության և երիտասարդության վրա վնասաբեր ազդեցության համար, իշխանությունների հրամանով, Սոկրատեսը ինքնասպան եղավ /թույն խմեց/: Երիտասարդ Պլատոնը, շատ ազդված ուսուցչի մահից, Սոկրատեսին դարձնում է իր բոլոր ստեղծագործությունների /բացի «Օրենքներից»/ հերոսը: Պլատոնը Աթենքում հիմնեց փիլիսոփայական դպրոց՝ Ակադեմիա /հերոս Ակադեմի պուրակում/:

Պլատոնի փիլիսոփայությունը օբյեկտիվ իդեալիզմի առաջին ուսմունքն է, գեղեցիկի նրա փնտրումը՝ առաջին էսթետիկան: Միայն կորցնելով բանականությունը, ընկնելով խենթության /mania/ մեջ, պոետը կարող է ըմբռնել իդեալական գեղեցկությունը, դառնալ ստեղծագործող: Գեղեցկության բարձրագույն մարմնավորումը՝ տիեզերքն է: Մարդը ծգտում է այդ բարձրագույն գեղեցկության և ներդաշնակության և այդ ծգտումը Պլատոնն անվանում է Էրոս: Պլատոնի ստեղծագործությունների ձևը՝ երկխոսությունն է: Հաճախ օգտագործվում է ճառը /«խնջույք»/: Ոճը բազմազան է՝ հուճկո, երգիծանք /«Իոն», «Պրոտագոր»/, դրամատիկ իրադարձություններ, ողբերգականություն /Սոկրատի դատապարտությունը «Ապոլոգիայում»/: Իր ստեղծագործություններում Պլատոնը նկարագրում է իր բանտարկությունը /«Կրիտոնում»/, կնոջ և ընկերների հրաժեշտը, վերջին գրույցը, կապանքների հանումը, աշակերտների վիշտը, թույնով թասը, թույնի ազդեցության սառնասիրտ դիտումը, վերջին խոսքը մահից առաջ /«Ֆեդոնում»/:

Արիստոտելը /384 –322 թթ./ Քսան տարի եղել է Պլատոնի աշակերտը, երեք տարի /342-339 թթ./ Ալեքսանդր Մակեդոնացու դաստիարակը: 335 թվականին Աթենքում հիմնել է իր դպրոցը՝ Լիկեյը: Արիստոտելի ամենահայտնի ստեղծագործությունը՝ «Պոետիկան» /«կատարսիսի» տեսությամբ/, ոչ ծավալուն, բայց շատ բովանդակալից է: Հատկապես կարևոր է «Պոետիկայի» 6-րդ գլուխը՝ ողբերգության մասին ուսմունքը: Արիստոտելին են վերագրում երեք միասնությունների օրենքը /որը առաջին անգամ ձևակերպել է իտալացի Կաստելվետրոն 1570 թ./, բայց իրականում նա պահանջում էր միայն գործողության և ժամանակի միասնությունը: Ողբերգության մեջ գլխավորն են ֆաբուլան և բնավորությունները: Ֆաբուլայում պետք է անպայման լինեն *պերիպետիներ* /իրադարձությունների անցումը հակառակին երջանկությունից դժբախտությանը, կատակերգության դեպքում՝ հակառակը/: Բնավորությունները պետք է լինեն վեհ ու ազնիվ:

Ի տարբերություն Պլատոնի, Արիստոտելը գեղեցիկը տեսնում է իրերի բուն ձևի և նրանց տեղադրման մեջ: Արվեստը նա համարել է բնության և գոյի ստեղծագործական ընդօրինակում

/mimesis/: Արիստոտելի մյուս հայտնի ստեղծագործությունը՝ «Ռիտորիկան» բաղկացած է երեք գրքից և նվիրված է հռետորության արվեստին, որը ներկայացվում է որպես համոզելու արվեստ և հիմնվում է դիալեկտիկայի վրա:

Արիստոտելը եղել է նաև բնագիտության ուսուցիչ: Նրա “*De animalibus*” աշխատությունը պարունակում է կենդանիների մոտ 500 ձևի նկարագրություն:⁴

ՀԵԼԼԵՆԻՉՄ


Պոլիսի քայքայման հետ նկատվեց միապետության և զինվորական դիկտատուրայի ձգտում: Թուլանում է ավանդական կրոնը, շարքային հույնի համար բարձրագույն ուժ է դառնում հաջողության, փոփոխական երջանկության աստվածուհի Տիքեն /հռոմեական Ֆորտունան/:

Արվեստը կորցնում է ժողովրդականությունն ու վիթխարակերտությունը: Գարտարապետության մեջ գերիշխող է դառնում մասնավոր պատվերը, հարուստների համար շքեղ տների կառուցումը: Աթենքը փորձեց նվաճել Սիցիլիան, Սպարտան, դիմեց պարսից արքա Դարեհի օգնությանը: Նրա խորհրդականն էր աթենացի Ալկվիվիադեսը, որը ծառայում էր Սպարտային, բայց ուզում էր վերադառնալ Աթենք: Ալկվիվիադեսի դավաճանության շնորհիվ 395-387 թթ. Կորինթական պատերազմում Աթենքը հաղթեց, Սպարտան պարտվեց, արդյունքում Զունաստանը մասնատվեց:

Զունաստանի կենտրոնացումը սկսվեց Մակեդոնիայից, որի արքան՝ միակնանի Ֆիլիպը, տարբեր քաղաքական, ռազմական ուղիներով, նյութական և բարոյական աջակցությամբ և կաշառումով, իրեն էր ենթարկում Զունաստանի մարզերը: 338 թ. Զունաստանում հաստատվեց մակեդոնական գերիշխանությունը՝ Խերոնեի ճակատամարտում Ֆիլիպը հաղթեց Դեմոսֆենի ստեղծած հունական դաշնակցային զորքը, նույն թվականին հրավիրեց համահունական վեհաժողով, որտեղ իրեն հայտարարեց ո՛չ թե *բասիլևս* /թագավոր/, այլ՝ *գեգեմոն* /առաջնորդ/: Նա բաժանվում է Դեմետրայի հիասքանչ քրմուհուց՝ Ալեքսանդրի մորից, ամուսնանում է երիտասարդ Կլեոպատրայի հետ և մահանում 336 թվին: Մակեդոնիայի թագավոր է դառնում նրա կաղ որդին՝ քսանամյա

⁴ Մի անգամ նա գրել է, որ ճանճը ունի ութ թաթիկ: Արիստոտելի հեղինակությունը այնքան բարձր էր, որ մոտ 2 հազար տարի այդ փաստը ոչ ոք չի ստուգել և միայն XVII դարում պարզվեց, որ ճանճը ունի վեց թաթիկ:

Ալեքսանդրը: Տաղանդավոր, փառասեր, արդար և փայլուն կրթություն ստացած այս զորավարը թագավորության տասնմեկ տարիների ընթացքում իրեն ենթարկեց հսկայական նոր տարածքներ՝ ընդհուպ Նեղոսի և Սև ծովի ափերը: Նրա պետությունը ընդգրկում էր Հունաստանը, Սիրիան, Պերզամը և Եգիպտոսը, նա նվաճեց Պարսկաստանը, և իր հայտնի Բուցեֆալ անունով մտլոգով հասավ Հնդկաստան: Պարսկական ազնվականության բարեհաճությունը շահելու համար նա կնության է առել բակտրիացի կուսակալի դստերը՝ Ռոկսանային: 333 թվականին, ճակատամարտի ժամանակ



պարսից արքա Դարեհ III դիմեց փախուստի՝ ճամբարում թողնելով իր աղեղը, կառքը, կնոջը, մորը, դուստրերին և հարեմը: Ալեքսանդրը նրանց պատվով վերադարձրեց: Տասնմեկ տարում Ալեքսանդրը կառուցեց 70 քաղաք, որոնք կրում էին իր անունը: Նոր հսկայական պետության մայրաքաղաքը դարձավ Եգիպտոսում հիմնված Ալեքսանդրիան: Հնդկական արշավանքի նախօրեին Ալեքսանդրը մահացավ: Ամմիջապես սկսվեց նրա *դիդադոխների* /զորավարների/ պայքարը տարածքների համար: Եգիպտոսին տիրացավ Պտղոմեոսը /Պտղոլեմեյը/, Սիրիային՝ Սելևկը, Մակեդոնիային և Հունաստանին՝ Անտիպատրը: /Որոշ ժամանակ իշխանությունը պատկանում էր ավագ դիադոխին՝ Պերդիկկային, որը կառավարում էր Ալեքսանդրի անչափահաս որդու անունից/:

Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Պարսկաստանի նվաճումից /334-330 թթ./ մինչև Հռոմի՝ Հունաստանի նվաճումը⁵ ընկած դարաշրջանը կոչվում է *հելլենիզմ*: Այդ տերմինը, որն առաջարկել է ակադեմիկոս Դրոյզենը 1833 թ.՝ միակողմանի է, քանի որ ենթադրում է միայն հունական մշակույթի տարածվելը և ներգործությունը Արևելքի մշակույթի վրա, բայց ոչ պակաս նշանակություն ունեցավ և հակառակ ազդեցությունը: Այսպիսով՝ *հելլենիզմ* տերմինով կոչվում է մ.թ.ա. III – I դարերի ընդհանուր՝ հունաարևելյան մշակութային դարաշրջանը:

Հասարակության լուսավորյալ մասը խոսում էր նոր հունարենով՝ *կոյնեով*: Նախքան գրերի գյուտը Հայաստանում պետական լեզուն կոյնեն է հանդիսացել: Հայերը կրթություն էին ստանում Աթենքում և Ալեքսանդրիայում: Հայկական դրամների վրա գրվում

⁵ Մակեդոնիան՝ 148 թ., Պերզամը՝ 133 թ., Սիրիան՝ 64 թ. և, վերջապես, Եգիպտոսը՝ 31 – 30 թթ.:

եր հունական տառերով, հայկական այբուբենը V դարում դասավորվել է հունարենի կարգով:

Ստրուկների աշխատանքը իդեալական պայմաններ էր ստեղծում ազատ քաղաքացիների ստեղծագործ աշխատանքի համար: Բոլոր ասպարեզներում նկատվում էր հսկայական ծաղկունք: Գիտության մեջ Արիստարքոս Սանոսացին ստեղծում է արեգակնակենտրոն տեսությունը, որը մոռացության մատնվեց մինչև XVI դ. Կոպեռնիկոսի հայտնագործությունը: Ստեղծվում են Եվկլիդեսի երկրաչափությունը, Արքիմեդեսի տեսական մեխանիկան, Թրակիացի Դիոնիսիոսի քերականությունը, կազմվում են առաջին *գլոսսարիները* /բառարանները/, III դարում Սիրակուզում կառուցվում է առաջին աստղադիտարանը, աշխարհագրագետ Էրատոսֆենը չափում է երկրի շրջանագիծը, ինչի ճշգրտությունը հաստատվել է XV դ.: Վասկո դա Գամայի շուրջերկրյա ճանապարհորդության ժամանակ: Բժշկության մեջ թույլատրվեց դիակների հերձումը: Պտղոմեոսի ստեղծած *Մուսեյում* /մուսաների տաճարում/ հավաքված էր կես միլիոն գիրք /հանրահայտ Ալեքսանդրյան գրադարանը, որը հրկիզվեց 47 թ. Յուլիոս Կեսարի օրոք/: Անտոնիուսը Ալեքսանդրիա տեղափոխեց Պերգամի հարուստ գրադարանը: Մուսեյը նաև բոլոր հունական գիտնականների աշխատավայրն էր: Նրանց տարեկան վարձատրումը կատարվում էր թագավորական գանձարանից:

Արվեստի բնագավառում ստեղծվել է աշխարհի երեք հրաշալիք՝ *Մավսոլէյը* /Մավսոլ թագավորի քառակուսի մարմարե դամբարանը/, Ռոդոսի կոլոսսը /Գելիոս աստծո ոսկեպատ արձանը Ռոդոս կղզում/ և Ալեքսանդրիայի փարոսը: Ոմն Յերոստրատի ձեռքով մի գիշերվա ընթացքում իսպառ այրվեց Արտեմիսի տաճարը Էֆեսում: Դաժան խոշտանգումների ենթարկված Յերոստրատը խոստովանեց, որ ուզում էր անմահացնել իր անունը: Որպես պատիժ արգելվեց արտասանել այդ անունը, սակայն Յերոստրատի անունը հիշվեց:

Հելլենիզմի դարաշրջանում գոյություն ուներ չորս փիլիսոփայական դպրոց՝

Էպիկուրեիզմ. փիլիսոփա **Էպիկուրը** Աթենքի մոտ այգի ուներ, որտեղ և համախմբում էր աշակերտներին: Դպրոցը հայտնի էր «Էպիկուրի այգի» անունով, կանայք և ստրուկները այնտեղ հավասար իրավունքներ ունեին: Էպիկուրը մատերիալիստ էր, ատոմիստիկ թեորիայի հիմնադիր: Մարդկային կյանքի նպատակը երջանկությունն է, բարձրագույն նպատակը՝ *ատարաքսիան* /անվրդովություն/, այսինքն՝ տանջանքի բացակայությունը, հաճույքը, անխռով կյանքը, մահից չվախենալը: Էպիկուրի

ուսմունքը գռեհկացվել է հակառակորդների կողմից՝ նրան վերագրել են հաճույքներով լի կյանքի ձգտում, բայց նա նկատի ուներ ոչ թե անառակների զգայական հաճույքները, այլ մարմնային տառապանքներից և հոգեկան հուզմունքներից զերծ լինելը:

Ստոյիցիզմ. հիմնադիր **Ջենոնի** դպրոցը գտնվում էր «Բագմագույն ստոյայում» /սյունասրահում/, այստեղից և անունը: Ստոյիկների գերագույն իդեալը հանդիսանում է առաքինությունը, հաճույքը չի կարող լինել մարդկային կյանքի նպատակը: Իմաստունը պետք է ունենա ուժեղ կամք և իմացություն, անկիրք և անտարբեր լինի, ցավը և ընդհանրապես ֆիզիկական տանջանքներն ու հաճույքները չպետք է որոշեն իմաստունի վարքը, կյանքը գոհաբերելով կարելի է փրկվել տառապանքից: Ուստի պետք է հրաժարվել կրքերից, լինել արի, միատեսակ հանգստությամբ տանել կյանքի և՛ ծախողությունները, և՛ հաջողությունները, չվախենալ մահից: Ստոյիկներին է վերագրվում «լոգիկա» բառի հորինումը:

Սկեպտիցիզմ. ըստ դպրոցի առաջնորդ՝ **Պիրհոնոնի**՝ զգացության միջոցով մեր ձեռք բերած ըմբռնումները հարաբերական են, ուստի գոյություն չունի ո՛չ լավը, ո՛չ վատը, ո՛չ արդարացին, ո՛չ անարդարացին՝ ամեն ինչ ենթակա է կասկածանքի: Ոչ մի բանի մասին չպետք է վստահորեն արտահայտվել:

Կինիզմ /ցինիզմ/. փիլիսոփայության հիմնադիր **Դիոգենեսին** /որն, ըստ առասպելի, ապրել է տակառում/, անվանել են «Կինիկոս» /կծող շուն/: Կինիկները գերադասում են հոգևորը մարմնականից, քարոզում են հրաժարվել մարդկային քաղաքակրթությունից, անուսնությունից, կրոնից, և վերադառնալ բնական պարզ կյանքին: Սոկրատեսի աշակերտներից մեկը ասել է Դիոգենեսին. «Եթե դու սովորեիր շողոքոթել, ստիպված չէիր լինի սնվել ոսպե ապուրով»: «Եթե դու սովորեիր բավարարվել ոսպե ապուրով,- պատասխանել է Դիոգենեսը,- ստիպված չէիր լինի շողոքոթել»: Ըստ առասպելի՝ նույնիսկ Ալեքսանդր Մակեդոնացին է հիացել Դիոգենեսի փիլիսոփայությամբ:

Ժողովրդական կրոնը զգալիորեն թուլանում է, նկատվում է հունական և արևելյան աստվածությունների միացումը, այսինքն ստեղծվում է սինկրետիկ կրոն, օրինակ՝ Դեմետրան նույնանուն է եգիպտական Իզիդայի, Դիոնիսոսը՝ Օզիրիսի հետ: Հունաստանում կառուցվում են արևի տաճարներ՝ էքֆրասիներ:

Գրականության մեջ, ի տարբերություն ճարտարապետության վեհակերտության, նկատվում է հիմնախնդիրների նեղացում, հետաքրքրություն՝ «փոքր» մարդու ճակատագրի նկատմամբ, թեմատիկան դառնում է բացառապես կենցաղային: Գրականության

հիմնական ժանրերն են՝ նոր ատտիկական կատակերգությունը, ավեքսանդրյան պոեզիան և հելլենիստական արձակը:

ՆՈՐ ԱՏՏԻԿԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Նոր ատտիկական կատակերգության անվանումը հակադրում է «նոր» կատակերգությունը «հին», արիստոֆանյան ատտիկական կատակերգությանը: Հասարակության ճաշակի համաձայն IV դ. կատակերգությունը արծարծում է սիրո և ընտանեկան հարաբերությունների թեման: Կատակերգությունը բաղկացած էր հինգ գործողությունից, որոնց միջև ելույթ էր ունենում երգչախումբը, որը գործողությունից դուրս էր մնում և որի երգերի տեքստը սովորաբար չէր մտնում կատակերգության տեքստի մեջ: Ողբերգության և կատակերգության տարբերությունը որոշվում էր դերերի բնույթով: Ողբերգության մեջ, որտեղ ըստ Արիստոտելի ներկայացվում են «հերոսական ճակատագրի փոփոխականությունները»՝ հերոսները աստվածներ, թագավորներ, զորավարներ են: Եթե դրամայի հերոսները հասարակ մարդիկ են, առօրյա զգացմունքներով, դա՝ կատակերգություն է, նույնիսկ եթե չկա հումոր, երգիծանք, պարոդիա, ծիծաղ: Ավարտը պիտի լինի բարեհաջող, երբեմն՝ նույնիսկ հուզիչ: Սյուժեները բավականին միատեսակ են՝ վաղուց կորցրած զավակի ճանաչումը, երիտասարդ զույգի փոխադարձ սերը բազմաթիվ, բայց հաղթահարվող արգելքներով և այլն: Հին Հունաստանում սիրով ամուսնությունը հազվադեպ երևույթ էր՝ կինը ընտանիքի հավասարաիրավ անդամ չէր, հարսնացուի համար տրվում էր գլխագին, հաճախ ցուլերով /մինչև 100/, ընտանիքում ծնվող աղջիկներին անվանվում էին «ցուլ բերող»:

Սյուժեում կարևորագույն դեր էր խաղում պատահականությունը: Սյուժեների միատեսակությանը համապատասխանում էր դիմակների միատեսակությանը՝ մի երիտասարդ, օրիորդ կամ հետերա, կավատ կամ կավատուհի, ծեր հայրեր, աղախին կամ դասակ, պարասիտ, խոհարար:

Պարասիտի և հետերայի կերպարները նոր էին գրականության մեջ: Հետերաները մեծ դեր էին խաղում հասարակության, հատկապես կրթված տղամարդկանց կյանքում: Պտղլեմեի մայրը՝ Արսինոյան, Ֆիլիպ Մակեդոնացու սիրուհին, հետերա է եղել: Կավատները գնում էին 6 – 8 տարեկան գեղեցիկ աղջիկներ և մեծ զումարներ էին ծախսում նրանց կրթության վրա: Հետերաները պետք է իմանային տարբեր գործիքներ նվագել, բանաստեղծություններ գրել, պարել, երգել, գիտության տարբեր ոլորտներից տեղյակ լինել և տիրապետել սիրո արվեստին: Հետերայի տան

մուտքի մոտ գրվում էր երեք տառ՝ օմեգա, քսի, էպսիլոն և հետերայի անունը: Նրան առաջարկում էին դրան /տալանտ/, բայց նա իրավունք ուներ մերժել, չստորագրելով ժամադրության առաջարկը: Հետերաները գեղեցիկ էին, շքեղ էին հագնվում, կարող էին կրել պերիսցելիդներ՝ ոտքի ապարանջան: Ի տարբերություն ամուսնացած պատվարժան կանանց, հետերաների մազերը կարճ պիտի կտրված լինեին:

Պարասիտը՝ ազատ քաղաքացու կերպար է, որը չի ուզում աշխատել, շողոքորթելով հարուստ քաղաքացիներին՝ ապրում է նրանց նպաստներով:

Նոր ատտիկական կատակերգության առաջին հեղինակն է Ֆիլեմոնը, որի 97 կատակերգություններում արդեն չկա երգչախումբ, սյուժեն ընտանեկան է:

Երկրորդ հեղինակը **Սենանդրոսն** է /342 – 292 թթ./, ում վերագրվում է մոտ 100 կատակերգություն: Եղել է զինվոր, ճակատագիրը նման է Էվրիպիդեսին: 1905 թ. Եգիպտոսում գտնվել են Սենանդրոսի կատակերգությունների ձեռագրերով պապիրուսներ: Եղել է Էպիկուրի հասակակիցը, մերժել է Պտղեմեի Ալեքսանդրիա տեղափոխվելու առաջարկը: Պահպանվել է նրա երեք կատակերգությունները՝ «Միջնորդ դատարանը» /2/3-ով/, «Կտրած ծամը» /1/2-ով/ և «Մարդատյացը» /ամբողջովին/:

«Միջնորդ դատարանը». Երիտասարդ Խարիսիոսը տոնախմբության ժամանակ հարբած վիճակում բռնաբարում է Պամֆիլային և կորցնում մատանին: Հետագայում, չճանաչելով Պամֆիլային, նրան կնության է առնում: Հինգ ամիս անց, Խարիսիոսի բացակայության ժամանակ, Պամֆիլան ծննդաբերում է, երեխայի բարուրի մեջ դնում նրա հոր մատանին և տալիս է մի ստրուկի, որը նորածնին թողնում է անտառում: Խարիսիոսը, իմանալով կնոջ անհավատարմության մասին, հիասթափվում է և վերադառնում նախկին սիրուհու՝ Գաբրոտոնոն անունով հետերայի մոտ, որտեղ և երկար արկածներից հետո հայտնվում է Պամֆիլայի զավակը: Գաբրոտոնոնը ճանաչում է Խարիսիոսի մատանին, այդ մասին հայտնում է սիրեցյալին: Երջանիկ ընտանիքը վերամիավորվում է, Գաբրոտոնոնի տիրոջը փրկանք տալով, հետերային ազատություն են պարգևում:

ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ ՊՈՆՉԻԱ

Այսպես կոչված Ալեքսանդրյան պոեզիան կրթված էլիտայի արվեստ է, որին օտար են հասարակական և քաղաքական շահերը, փիլիսոփայական վեճերը: Հետաքրքրությունը կենտրոնանում է

անհատի ինտիմ կյանքի, բնության զգայական ընկալման, անցողիկ տրամադրությունների և, իհարկե, սիրո թեմայի վրա: Ալեքսանդրյան պոեզիային բնորոշ է նաև «գիտականությունը», այսինքն՝ հին հեղինակներից մեջբերումները, դիցաբանական ակնարկները, բժշկական, բնագիտական, աստղագիտական գիտելիքների վկայությունները:

Ալեքսանդրյան պոեզիայի ամենատարածվածը «փոքր» ձևն է՝ էլեգիան, էպիգրամը, որոնք երբեմն համախմբվում էին *անտոլոգիաների* /ծաղկաքաղերի/ մեջ:

«Ալեքսանդրյան» տերմինը պայմանական է, քանի որ մ.թ.ա. III դարի առաջին կեսի հելլենիստական պոեզիայի ծաղկումը կապված է ոչ միայն Ալեքսանդրիայի հետ՝ նրա ակնառու ներկայացուցիչներն ապրում էին հելլենիստական աշխարհի տարբեր անկյուններում, բայց ճանաչում ու զովերգում էին իրար: Ալեքսանդրյան պոեզիայի կենտրոնական դեմքն է Կիրենացի *Կալլիմաքոսը* /310-240 թթ./ Պտղոմեոսների արքունական պոետը: Նրա գլխավոր ստեղծագործությունն է «Պատճառներ» /*Aitia*/ էլեգիաների ժողովածուն, որի եզրափակիչ «Բերենիսի հոպոպը» հայտնի է Կատուլլոսի լատինական թարգմանությամբ: *Կալլիմաքոսը* գրել է նաև էպիգրամներ, օրհներգեր և յամբեր:

«Փոքր» ձևի վարպետ Կալլիմաքոսի աշակերտ և հետագայում հակառակորդ *Ապոլոնիոսը*, որը Կալլիմաքոսի հետ թշնամության պատճառով տեղափոխվել էր Ռոդոս կղզի և հայտնի է Ռոդոսցի անունով, հելլենիստական պոեզիայի ամենածավալուն ստեղծագործության՝ «Արգոնավտիկայի» հեղինակն է: Հին հայտնի առասպելը նա շարադրել է նոր ոճով՝ զգացմունքների և տրամադրությունների լայնածավալ նկարագրությամբ, էնոցիոնալ լարվածությամբ, դետալների նրբությամբ, շարունակելով զարգացնել Էվրիպիդեսյան «կրքերի հոգեբանությունը»: Առաջին երկու գրքում պատմում է արգոնավորողների ժամանումը Կոլխիդա, Երրորդում, որը մեծ ազդեցություն է գործել Վերգիլիոսի վրա՝ Մեդեայի և Յասոնի սերը, չորրորդում՝ արգոնավորողների վերադարձը:

Ալեքսանդրյան պոեզիայի մեծ ներկայացուցիչ է Թեոկրիտեսը Սիրակուզից /Սիցիլիա/, որն ամենավառ կերպով արտահայտեց ալեքսանդրյան պոեզիայի կարևորագույն բացահայտումները՝ բնության զգայական ընկալումը, սիրո տառապանքները, ինտիմ և կենցաղային մանրամասնությունների հանդեպ հետաքրքրությունը: Թեոկրիտեսը իդիլիայի /*Eidillion*/ ժանրի ստեղծողն է /*eidos* նշանակում է և՛ երգ, և՛ տեսարան/: Նրա իդիլիաների մեծամասնությունը «բուկոլիկ» է /*bukolos*՝ տավարած/, հիմնված է սիրահարված սրնգահար հովիվների մասին հին երգերի վրա, առավել հայտնի է

Դաֆնիսի մասին իդիլլիան: Թեոկրիտեսի իդիլլիաները երբեմն գրված են մենախոսական կամ երկխոսական *միմերի* /տեսարանների/ ձևով, հանդիպում են նաև զավեշտական տարրեր, օրինակ՝ ջրահարս Գալատեսային սիրահարված Պոլիֆեմի մասին XI իդիլլիան:

Թեոկրիտեսի անվրդով կյանքի նկարագրությունը մեծապես ազդել է նոր եվրոպական գրականության մեջ տարածված իդիլլիայի ժանրի վրա, որի բնորոշ հատկանիշներն են մնում ծաղկած ծառերը, քջքացող աղբյուրները, կանաչապատ մարգագետինները, ծաղիկները, թռչունները, արածող հոտերը, միշտ հանդարտ ծովը:

Մ.թ.ա. III դարի ծաղկունից հետո հելլենիստական պոեզիան անկում է ապրում և արձակի զարգացման պայմաններում մնում է երկրորդ պլանում: Հելլենիստական դարաշրջանի հունական ռիթմիկայի նորամուծությունը՝ հանգը, դարձավ համաշխարհային պոեզիային թողած նրա վերջին ժառանգությունը:

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՐՉԱԿ

III դ. ճարտասանությունը կորցնում է իր նշանակությունը քաղաքական և դատական ոլորտում, շարունակում է զարգանալ *էպիդիկտիկը* /հանդիսավորը/ հատկապես՝ «պանեգիրիկը» /թագավորի գովերգումը/, որի ցայտուն հեղինակներից է Իսոկրատեսը:

ճարտասանությունը դասավանդվել է դպրոցներում՝ երկու ուղղություններով՝ /ասիանիզմ և ատտիկիզմ/ և հինգ բաժնիներով՝

1. Ճառի համար նյութի ընտրությունը՝ տիպիկ գաղափարների, հայացքների
2. Ընտրած նյութի դասավորությունը լավագույն տպավորության ստեղծման նպատակով
3. Ոճի մասին ուսմունքը՝ գոյություն ունեւ երեք հիմնական ոճ՝ բարձր, միջին և ցածր
4. Պատրաստվող ճառը հիշելու կանոններ
5. Ճառի հռետորական արտասանության միջոցներ

Փիլիսոփայական արձակում տարածում է գտնում էպիկուրցիների և ստոյիկների «*ուղերձը*», ինչպես նաև կինիկների «*դիատորիքան*» /վեճը/, որը հետագայում դառնում է քրիստոնեական քարոզի հիմք: Կինիկները գրել են նաև «*սատիրաներ*», որոնց փայլուն հեղինակներից է Մենիպպոսը /III դ./: Գրականության մեջ մնացել է «մենիպպյան ժանր» հասկացությունը՝ արձակի և բանաստեղծությունների մեջընդմիջումը:

ՀՈՒՄԵԱԿԱՆ ՆՎԱՃՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մ.թ.ա. II – I դարերը Հռոմի դեպի Արևելք բռնագավթման դա-
րաշրջանն է: Հունական հասարակության հարուստ խավը ընդու-
նում էր հռոմեական կարգերը, քանի որ հռոմեական լեզուները
նրան պաշտպանում էին ցածր խավից, որը, հռոմեացիներին հա-
կառակ, սատարում էր Պոնտի արքա Միհրդատին: Հռոմեական
հանրապետությունը դաժանորեն շահագործում էր իր գավառները,
որոնք կառավարվում էին ամեն տարի փոխվող «պրոկոնսուլի»
/կուսակալի/ կողմից: Միայն նախկինում հայտնի պոլիսները՝ Աթեն-
քը և Սպարտան, հատուկ կարգավիճակ ունեին և պահպանում էին
ինքնավարության հին ձևը:

Հունական մշակույթի գործիչները տեղափոխվում էին Հռոմ,
հունարենը դարձել էր Հռոմի բարձր խավի լեզուն: Հելլենիստական
աշխարհի միակ գիտական կենտրոնը մնում էր Ալեքսանդրիան,
իսկ I դարից արվեստի կենտրոն էր դարձել Ռոդոս կղզին: Եզիպտոսի
անկումից /մ.թ.ա. 30 թ./ և Հռոմեական կայսրության հաստատու-
մից հետո հելլենիստական աշխարհի արևելյան մարզերում որոշ
վերելք է նկատվում /«I դարի հունական վերածնունդ»/: Տարած-
վում է նոր՝ քրիստոնեական կրոնը, որը սկզբնական շրջանում
խառնվում է ապաքինող աստվածների, փրկիչների, աստվածածին
կանանց /Տեոտոկոս՝ աստվածամայր/ մասին հելլենիստական առ-
ասպելների հետ:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ /46 – 120 թթ./

Ծնվել է Բեոտիայի Հերոնե քաղաքում, կրթությունը ստացել է
Աթենքում, ընկերների և աշակերտների կողմից ստեղծած Ակա-
դեմիան գոյատևել է նրա մահից հետո մոտ 100 տարի: Պլուտար-
քոսի հռոմեական կապերն ու ռոմանաֆիլ համոզմունքները ապա-
հովեցին կայսրերի՝ Տրայանի և Ադրիանի բարյացկամությունը և
վերջին տարիներին Աքայայի պրոկուրատորի պաշտոնը: 95 թ.
նրան շնորհվեց դելֆական քուրմի կոչումը: Հերոնեի եկեղեցում
այսօր էլ կարելի է տեսնել «Պլուտարքոսի մարմարե աթոռը»:

Պլուտարքոսի 227 ստեղծագործությունից պահպանվել է
150, որի մի մասի հեղինակությունը, սակայն, կասկածելի է: Նրա
ստեղծագործությունները ընդունված է բաժանել երկու մասի՝
moralia /բարոյագիտական տրակտատների/ և վարքագրություննե-
րի:

Moralia տերմինը ներառում է տարբեր թեմաներ՝ կրոն, փիլիսոփայություն, մանկավարժություն, քաղաքականություն, հիգիենա, կենդանիների հոգեբանություն, երաժշտություն, գրականություն: Հետաքրքիր են Պլուտարքոսի դատողությունները էթիկական հարցերի շուրջ՝ շատախոսության, հետաքրքրասիրության, կեղծ անոթխածության, էրոսի, գայրույթի և այլն:

Պլուտարքոսի անանց նշանակությունը հիմնված է նրա «Ջուզահեռ վարքագրություններ» ստեղծագործության վրա, որն իրենից ներկայացնում է հույն և հռոմեացի գործիչների զույգ կենսագրությունների շարք: Մեզ է հասել 23 զուգահեռ վարքագրություն:

Պլուտարքոսը կենսագրական ժանրի մեծագույն ներկայացուցիչն է: Արտահայտելով անտիկ դարաշրջանին բնորոշ անձի ստատիկ ընկալումը՝ Պլուտարքոսի հերոսները կենդանի են, իրական, իրենց թուլություններն ու արժանիքներն ունեցող կայացած բնավորություններ են: Նրա կարծիքով կենսագրության մեջ արտացոլված իրադարձությունները ավելի լավ են ներկայացնում հերոսի բնավորությունը, քան նկարագրությունը:

Նախաբանում Պլուտարքոսը զգուշացնում է, որ գրում է ո՛չ թե պատմություն, այլ կենսագրություն: Աննշան արարքը, խոսքը կամ կատակը երբեմն ավելի արտահայտիչ են, քան ճակատամարտերն ու պաշարումները: Այդ պատճառով նրա վարքագրություններում տեղ են գտնում և՛ պատմական անեկդոտները, և՛ հերոսների խոսքերը, որոնք Պլուտարքոսի շնորհիվ դարձան թևավոր, և՛ նույնիսկ բանբասանքները: Անգնահատելի է Պլուտարքոսի դերը եվրոպական գրականության, հատկապես, պատմական և կենսագրական ժանրերի զարգացման մեջ: Նրա վարքագրությունները հիմք են դարձել Էռազմի, Ռաբլեի, Շեքսպիրի, Մոնտեմի, Կոռնեյլի, Ռասինի, Ռուսսոյի և այլ մեծ հեղինակների ստեղծագործությունների համար:

ԼՈՒԿԻԱՆՈՍ /120 – 180 թթ./

Մեծ երգիծաբանի ստեղծագործություններում արտահայտվել և քննադատության են ենթարկվել անտիկ հասարակարգի գաղափարական անկման բոլոր հատկանիշները՝ փիլիսոփայական մտքի մանրացումը, սնահավատությունների աճը, գրականության անբովանդակությունը:

Լուկիանոսը իր «Երազ» ստեղծագործության մեջ նկարագրում է իր մանկությունը՝ ծնվել է Սիրիայում, Սամասաթ քաղաքում, աղքատ արհեստավորի ընտանիքում, քանդակագործություն է սովորել հորեղբոր մոտ, բայց մարմարյա սալաքար կտրելուց

հետո դաժան ծեծի է ենթարկվել և դիմել փայտուստի: Հունաստանում, համառ աշխատանքի շնորհիվ, դառնում է հայտնի փաստաբան, «Ճարտասանության Պրոմեթևս» և վերադառնում Արևելք: Կյանքի վերջին տարիները Լուկիանոսը անցկացրել է Եգիպտոսի կուսակալի գրասենյակում, ծառայելով Հռոմին:

Աթենքում Լուկիանոսի փիլիսոփայության ուսումնասիրությունները քննադատական բնույթ են կրում՝ նա ընդօրինակում է իր հայրենակից Մենիպպոսին, որին երբեմն իր ստեղծագործություններում գործող անձ է դարձնում: Նա մեկ իջնում է հանդերձյալ աշխարհի /«Ճանապարհորդություն դեպի ստորերկրյա աշխարհ»/, մեկ երկինք է ճախրում /«Իկարոմենիպպոս»/: Հայտնի են Լուկիանոսի հակակրոնական և հակափիլիսոփայական սատիրաները, կյանքի վերջում նա դառնում է Էպիկուրական և սկսում է ծաղրել կինիկներին /«Կյանքերի վաճառք», «Ձկնորսը», «Խնջույք», «Աշխատավարձով ապրողների մասին»/:

Լուկիանոսի երգիծանքը խոր չէ՝ սրամիտ է, նրբագեղ և բազմազան: Նա չի ընդունում ո՛չ փիլիսոփաների մեծությունը, ո՛չ աստվածների հզորությունը:

Լուկիանոսի կերպարները, սյուժեները, հատկապես ոճը, մեծ ազդեցություն են գործել եվրոպական հեղինակների վրա՝ նրա «Լուկիոսը կամ Ավանակը» հայտնի է Ապուլեի լատինական մշակմամբ, Լուկիանոսի սյուժեով է գրված Գյոթեի «Կախարդի աշակերտը» բալլադը, նրա «Ճշմարիտ պատմությունը» օրինակ է ծառայել Ռաբլեի և Սվիֆտի համար, Սերվանտեսն իրեն համարել է Լուկիանոսի աշակերտը:

III դարում հունական գրականությունը զարգանում է երկու ուղղությամբ՝

1. Պատմագրական /իրական և «կեղծ»/ արձակ
2. Արկածային վեպ

Իրական պատմագրությունը զարգանում է հելլենիստական ավանդույթներով, դրան նպաստում էին Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները, քաղաքական գաղափարների և աշխարհագրական սահմանների ընդլայնումը, ինչպես նաև թագավորների և զորավարների կողմից պատմիչների հովանավորումը:

«Կեղծ» պատմագրությունը /pseudohistoria/ իր մեջ պարունակում է՝

1. *Ֆանտաստիկ արձակ, ուտոպիաներ* /օրինակ՝ պատմիչ Ֆլեգոնտի «Ջարմանալի պատմությունները» հսկաների, ուրվականների, հրեշների մասին: Մահացած աղջկա ուրվականի և նրա ծնողների հյուրի միջև սիրո պատմությունը դարձել է Գյոթեի «Կորինթոսցի հարսնացուն» բալլադի հիմքը/,

2. *արետալոգիա* /հետազայում քրիստոնեական սրբերի վարքագրությունների հիմք դարձած մեռնող և հարություն առնող աստվածների մասին առասպելներ/ և

3. *միստիֆիկացիաներ*, օրինակ՝ իբր Ներոնի դարաշրջանում գտնված «Տրոյական պատերազմի օրագիրը», որը վերագրվում է արշավի մասնակից Դիոխիսին, կամ տրոյացի Դարետոսի «Տրոյայի անկման պատմությունը»: Երկու ստեղծագործություններն էլ շատ հայտնի էին միջնադարում, նրանց վրա է հիմնված Բենուա դը Սենտ-Մորի «Տրոյայի վեպը»:

Ջարգանում է *նովելի* «ցածր» ժանրը, որը ընդմիջարկվածից դառնում է ինքնուրույն գրական ժանր, օրինակ՝ Միլետցի Արիստիդեսի սիրային նովելների ժողովածուն:

Արկածային վեպը մեկ կամ երկու գլխավոր հերոսների արկածների մասին պատմող ժանր է: Լավ է պահպանվել հատկապես ամբողջովին մեզ հասած խարիտոնի «Յերեյոսը և Կալիբրոյեն» /I-II դդ./, Լոնգի «Դաֆնիսը և Զլոյեն» /II-III դ.դ./, Յելիոդորի «Եթովպականը» /III դ./, Աբիլոս Տատիուսի «Լևկիպան և Կլիտոֆոնտը» /III դ./: Մասամբ հասել են էֆեսցի Քսենոֆոնտի «Էֆեսական վիպակը» /II դ./ և Յամբլիքոսի «Բաբելոնյան վիպակը»: Սյուժեները միատիպ են՝ երիտասարդ սիրահարները ծնողների կամքին հակառակ գաղտնի ամուսնանում կամ նշանվում են և դիմում փախուստի: Հանգամանքները նրանց բաժանում են, մեկը գերի է ընկնում ծովահենների մոտ, մյուսը՝ նրան փնտրում է: Արկածները ստանդարտ են՝ փոթորիկ, նավի խորտակում, գերություն, ստրկություն, առևանգում, հարազատների «ճանաչում», «կեղծ մահ», բնության նկարագրություն: Վեպերն ավարտվում են երջանիկ հանդիպումով և սիրո հաղթանակով:

Հունական գրականության նշանակությունը պայմանավորված է ոչ միայն իր անզուգական արժանիքներով՝ անգնահատելի է ազդեցությունը համաշխարհային գրականության վրա՝ սիմվոլներ դարձած դիցաբանական կերպարները կենդանի են առ այսօր: Հուներոսյան վեհակերտությունը, լիրիկական ժանրերը, ողբերգության և կատակերգության ավանդույթները, պատմագրության և վեպի առանձնահատկությունները օրինակ են դարձել տարբեր դարաշրջանների և երկրների գրականությունների համար, որոնցից առաջինը՝ Հին Հռոմի գրականությունն է:

ԲԱԺԻՆ II
ՀՈՒՄԵԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ





Հունական «ոսկեդարից» 200 տարի անց՝ հելլենիստական մշակույթի ծաղկման դարաշրջանում՝ մ.թ.ա. III դարում, Իտալիայում սկսում է զարգանալ անտիկ հասարակարգի II գրականությունը՝ հռոմեականը: Ապենինյան թերակղզին բնակեցնող ցեղերը միավորվում են լատինների կենտրոն Հռոմի շուրջը, որտեղ և սկսում են ստեղծել

իրենց գրականությունը լատինական լեզվով:

Հռոմեական հասարակությունն անցնում է հիմնականում զարգացման նույն փուլերը, ինչ հունականը, սակայն ստրկատիրության հակասությունները ավելի սուր ձև են ստանում, ինչը և բերում է անտիկ հասարակարգի փլուզմանը: Բացի դրանից, ավելի ուշ զարգանալով, Հռոմը իր հարցերին պատրաստի պատասխաններ է գտնում հունական մշակույթում և իր ճաշակին ու պահանջներին հարմարեցնելով՝ անվանափոխում, փոխառում է կրոնը, փիլիսոփայությունը, արվեստն ու գրականությունը: Այսպիսով՝ Հունաստանը նվաճելուց հետո Հռոմն է դառնում այն օղակը, որը կապում է անտիկ և եվրոպական միջնադարյան մշակույթները՝ մինչև XVIII դարի «նեոհունանիզմը» եվրոպական գրականությունը հիմնվում է միայն իրեն ծանոթ հռոմեական օրինակների վրա:

Հռոմեական գրականությունն ընդունված է բաժանել հետևյալ փուլերի՝

1. հնագույն /մինչև մ.թ. ա. 240 թ./
2. արխայիկ /մ.թ.ա. 240- 81 թթ., մինչև Ցիցերոն/
3. «ոսկեդար» /Ցիցերոնի ժամանակների արձակը 81-43 թթ. և Օգոստոսի ժամանակների պոեզիան 43 - մ.թ. 14 թթ./
4. «արձաթե դար» /մինչև Տրայանոսի մահը 14 – 117 թթ./
5. ուշ կայսերական դարաշրջան /117 – 476 թթ./

Կարելի է նաև առանձնացնել Հանրապետության /մինչև մ.թ.ա. 30 թ./ ու Կայսրության /մ.թ.ա. 30 – մ.թ. 476 թ.թ./ դարաշրջանները:

Հռոմեական գրականության երեք աղբյուրներն են՝ *դիցաբանությունը, բանահյուսությունը /ֆոլկլորը/ և հունական գրականությունը:*

Դիցաբանություն. Հունական հարուստ դիցաբանությունից հռոմեացիները ընտրել և ընդունել են 12 աստվածների՝

1. Պանթեոնը գլխավորում է որոտի և կայծակի աստված Յուպիտերը, որին նվիրվում է հինգշաբթին և «*հղաները*» /ամեն

ամսվա 13 – 15- րդ օրերը/։ Յուպիտերի քրմերը անվանվում էին *պոնտիֆիկներ* և *ֆլամիններ*։

2. *Սատուրնը* մարդկանց սովորեցրել է հող մշակել, նրան նվիրված տոները տևում էին յոթ օր և կատարվում էին տարվա վերջին /17 – րդ/ ամսվա կեսերին։

3. *Յունոնան* հովանավորում էր երիտասարդ կանանց և ծննդաբերությունները, նրան նվիրված տոները՝ *մատրոնալիները*, կատարում էին ամուսնացած կանայք։

4. *Սարսը* ոչ միայն պատերազմի աստվածն էր, այլ նաև Հռոմուլուսի և Հռեմուսի հայրը, առնական ուժի մարմնավորումը և, քանի որ նրան նվիրված էր տարվա III ամիսը՝ մարտը, համարվում էր գարնան աստված։ Պատերազմի աստվածուհի էր նաև նրա քույրը կամ դուստրը՝ Բելլոնան /Լատինական *bellum*՝ պատերազմ բառից/։ Մարսի քրմերը կոչվում էին *սալիներ*։

5. *Վեներային* նվիրվում էին ապրիլի կալենդաները /առաջին երեք օրը/։ Լինելով էնեասի մայրը, նա հանդիսանում էր հռոմեացիների նախամայրը։ Վեներայի ամենաշքեղ տաճարը կառուցվել է Հուլիոս Կեսարի հրամանով, տաճարի առաջ կանգնեցվել էին դիցուհու և Կլեոպատրայի ոսկեգօծ արձանները։

6. *Ֆլորան* ծաղիկների աստվածուհին էր, ֆլորալիները նշվում էին ապրիլի 23-ից մինչև մայիսի 3-ը, այդ օրերին կանանց թույլատրվում էր հագնել մյուս օրերին խստիվ արգելված գունավոր զգեստներ։

7. *Բաքսոս կամ Լիբեր* /Լիբերները կատարվում էին մարտի 17-ին/

8. *Վեստա* /հունիսի 9-ին/

9. *Վուլկան*

10. *Պանը* անտառների, պուրակների և դաշտերի բարի ու կատակասեր աստվածն է /տոնը նշում էին մայիսի 1-ին և դեկտեմբերի սկզբին/։

11. Հռոմեացիների կյանքում մեծ դեր էին խաղում ճակատագրի աստվածուհի *Սնանկեն* և նրա երեք դուստրերը՝ *Սոլա-ները*։

12. *Վերտունը*՝ տարվա եղանակների փոփոխման աստվածը և նրա կին *Պոմոնան*՝ այգիների աստվածուհին։

Նշանավոր էր հռոմեական *Յանուսը*՝ խաղաղության, ամեն ինչի սկզբի և դռների աստվածը։ Նոր տարին սկսվում էր Յանուսի օրվանից /հունվարի *կալենդայից*՝ ամսի մեկից/։ Այդ օրը հռոմեացիները աղ էին ցանում իրենց շեմին ի նշան առատության և հյուրընկալության։ Յանուսը երկդեմ էր՝ աչքերի մի զույգը նայում էր դեպի

ապագան, մյուսը՝ դեպի անցյալը: Նրա աջ ձեռքին գրված էր CCC /300/, ձախից՝ LXV /65/, տարվա օրերի թիվը:

Հռոմեացիներին պահպանող աստվածություններն էին *լարտերը, պենատները և մաները*: Լարտերը տան բարի ոգիներն էին, ապրում էին օջախում, սնվում էին կերակուրների հոտերով և սիրում էին գովեստի, երախտագիտության խոսքեր /հակառակ դեպքում նրանք դառնում էին լեմուրնե՝ չար ոգիներ/: Պենատները նույնպես բարի էին, նրանց պատկերները պահվում էին պահարաններում, որոնք բացվում էին տոն օրերին: Ի տարբերություն լարտերի, պենատներին կարելի էր տեղափոխել: Մաները՝ մահացած մախնիների հետմահու դիմակների փշուրները, հռոմեացիներին պահպանում էին ճանապարհորդությունների կամ պատերազմի ժամանակ /այստեղից՝ թալիսման բառը/:

Հույներից փոխառելով կրոնադիցաբանական ընդհանուր համակարգը՝ հռոմեացիները ստեղծել են նաև մի շարք սեփական առասպելներ՝

- *Տարպեա անունով մի աղջկա մասին*, որն իր հոր ամրոցը դավաճանաբար հանձնել է թշնամուն /հմնտ. Թունամյանի «Թմկաբերդի առումը»/,
- *Մուցիուս Սցուլայի մասին*, որն այրել է իր ձեռքը, քանի որ սխալմամբ Հռոմի թշնամիների թագավորի փոխարեն սպանել է մեկ ուրիշին,
- *Էթնա հրաբխի մասին*. Միներվան էթնա սարը զցել է աստվածների դեմ ըմբոստացած մի հսկայի վրա, որը մինչ օրս երբեմն փորձում է ազատվել,
- *Հռոմ քաղաքի հիմնադրման մասին*.



Ալբա Լոնգա քաղաքի թագավոր Նումիտորի եղբայր Ամուլիուսը գահազրկում է նրան, Վեստայի տաճար է տալիս նրա դստերը՝ Հռեա Սիլվիային, որը Մարս աստծուց ունենում է զույգ զավակներ: Այդ իմանալով՝ Ամուլիուսը հրամայում է մանուկներին սպանել: Ստրուկը, սա-

կայն, նրանց գամբյուղով նետում է Տիբրոս գետը, և նրանք հայտնվում են Պալատին բլուրի մոտ: Նրանց գտնում և կերակրում է մի էգ գայլ, հետո դաստիարակում է մի հովիվ, որը տալիս է Հռոմուլուս և Հռեմուս անունները: Մեծանալով և իմանալով իրենց ծագումը՝ նրանք գալիս են Ալբա Լոնգա, սպանում են Ամուլիուսին, գահը վերադարձնում են իրենց պապ Նումիտորին, ապա գնում են Տիբրոսի ափ, որտեղ նրանց գտել էր էգ

գայլը և այդ տեղում կառուցում են նոր քաղաք: Կառուցման ընթացքում նրանք վիճում են, Հռոմուկուսը սպանում է Հռեմուսին և նոր քաղաքը իր պատվին անվանում է Հռոմ /Roma/:

• *Սաբինուհիների առևանգման մասին*. Հռոմում սկզբնական շրջանում բնակվում էին հիմնականում տարբեր բնակավայրերից եկած աղքատ, շրջնուիկ տղամարդիկ՝ *պլեբեյներ* /pleo՝ լցնել բառից/, որոնք հրավիրեցին հարևան սաբինների ցեղին, արբեցրին տղամարդկանց և առևանգեցին երիտասարդ աղջիկներին: Այդ աղջիկները հոժարական մնացին Հռոմում և կասեցրին հայրերի ու ամուսինների պատերազմը:

Այսպիսով՝ հռոմեացիները հույներից փոխառել են հիմնականում *կոսմոգոնիկ* միթոսներ /սուլար, լունար, աստրալ/, մինչդեռ իրենցը՝ հռոմեականները հիմնականում *անտրոպոգոնիկ* են: Բոլոր միթոսների ստեղծման պատճառը *էթնոլոգիզմն* է, այսինքն ծագման պատճառը, այստեղից սեփական պատմությունը, թագավորների կերպարները, քաղաքների ստեղծումն առասպելականացնելու ձգտումը:

Բանահյուսություն /Ֆոլկլոր/. Հռոմի բնակչությունը՝ /ուներբեր, էտրուսկներ, հույներ/ ստեղծել է ֆոլկլորի ավանդական ձևեր՝

1. հիմներ
2. ծիսական երգեր /նեմիաներ՝ ողբ, ֆեսցենիներ՝ ծաղր, տրիունֆալ, խնջույքային/
3. ծիսական խաղեր: Ծագել են Ատելլայում, դերասանները՝ հիստրիոնները խաղում էին մի գործողությամբ փոքր պիեսներ, որոնք կոչվում էին «ատելլանա»: Ատելլանան ուներ ավանդական չորս դիմակ՝ Մակկուս /հիմար շատակեր/, Բուկկոն /bucca՝ այտ բառից, սնափառ շատախոս/, Պապպուս /խարդախ գիտնական/, Դոսսենուս /dorsum՝ սապատ բառից, չար ծերուկ/:
4. փոքր ձևեր /ասացվածքներ, առածներ/:

Պոեզիան գոյություն ուներ միայն բանավոր ձևով, իսկ արձակը /հիմնականում՝ գործնականը/ VI դարից գրի էր առնվում /օրինակ՝ «տասներկու աղյուսակների օրենքը» պատրիցիների և պլեբեյների միջև ամուսնության արգելքի մասին/:

Հռոմեական գրականության առաջին նմուշները ստեղծվել են մ.թ.ա. III-II դարերում: Դրանք են *Կատոնի* «Հողագործության մասին» գյուղատնտեսական տրակտատը, առաջին պոետների փորձերը և կատակերգությունը:

Առաջին պոետներն են Լիվիուս Անդրոնիկուսը և Գնեուս Նեվիուսը:

Լիվիուս Անդրոնիկուսը, ազգությամբ հույն, եվրոպական գրականության առաջին թարգմանիչն է, նա կրճատումներով և բացատրություններով լատիներեն թարգմանել է Դոմեթոսի «Ողիսականը», որը հունական կատակերգություններ:

Գնեուս Նեվիուսը հռոմեացի էր, «շատ ազատամիտ» կատակերգությունների պատճառով նա կանգնեցվել է անարգանքի սյունին և վտարվել Դոմնից: Գնեուս Նեվիուսն իր կատակերգություններում առաջին անգամ օգտագործել է *կոնտամինացիան*՝ մի կատակերգության մեջ տեղափոխելով տեսարաններ ուրիշ կատակերգություններից: Նրան է պատկանում նաև յոթ գրքից բաղկացած «Փյունիկյան պատերազմ» պատմական էպոսը, որը հետագայում Վերգիլիուսը օգտագործել է «Էնեականը» ստեղծելիս:

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Հռոմեական վաղ շրջանի կատակերգությունը իրենից ներկայացնում է վերամշակված հունականը, պահպանում է սյուժեները, կերպարները և հերոսների անունները: Այդ պատճառով այն կոչվում է *comoedia palliata* /*pallium* հունական թիկնոցի անունով/: Բուն հռոմեական կատակերգությունը ստեղծվել է շատ ավելի ուշ և կոչվել է *togata* /*toga*՝ հռոմեական թիկնոցի անունով/:

ՏԻՏՈՒՍ ՄԱԿՅԻՈՒՍ ՊԼԱՎՏՈՒՍ

TITUS MACCUS PLAVTUS /254-180 թթ./

Կատակերգության առաջին հեղինակը՝ ծագումով ստրուկ Տիտուս Մակկուսը, Պլավտուս /հարթաթաթ/ մականունով, եղել է ատելլանայում Մակկուսի դերակատարը: Հռոմեացի գիտնական Վարոնը /I դար/ նրան վերագրում է 21 կատակերգությունների հեղինակությունը: Պլավտուսը ստեղծել է միայն պալլիատաներ, որոնք գրել է հունարեն և որոնց բնագրերը չեն պահպանվել, ավելացնելով ակրոբատիկա, բուֆոնադ և ֆարս: Նա օգտագործել է կոնտամինացիա, բացառիկ հումոր և ժողովրդական լեզու: Նրա սիրված կերպարն է ճարպիկ և խորամանկ ստրուկը: Կատակերգությունների նախերգանքները՝ *արգումենտաները*, գրված են աքրոստիքով:

Անապարծ գինվորը /Miles gloriosus, 204 թ./: Կատակերգության գլխավոր հերոսը Պիրգոպոլիսիկոսն է /շատ ամրոց նվաճող/,

ալ կարմիր զգեստով, փետուրներով, փարթամ հոպոպներով, հսկայական սրով, միամիտ և սնապարծ: Նա մեծ հաճույքով լսում է պարասիտ Արտոտրոգի /հաց կրծող/ հնարած պատմությունները «կատարած» սխրանքների, հատկապես կանանց գերելու մասին:

Արտոտրոգոս

*Ես գիտեմ քո հաղթանակները...
Դեռ Հնդկաստանում մի հարվածով ջարդեց իր փղի մի ձեռքը
Այդ գիտե ողջ աշխարհը.
Աշխարհում դու մի հատիկ ես
Ե՛վ քաջությամբ, և՛ քո ոյութիչ գեղեցկությամբ.
Հաղթանակների մեջ չկա քեզ հավասար ոք.
Քեզ սիրում են բոլոր կանայք - և իրավացի.
Դու այդպես գեղեցիկ ես, այ, օրինակ, երեկ
Ինձ կանգնեցրին քո թիկնոցի պատճառով...
Նրանցից մեկը հարցրեց՝ դու Աքիլլեսը չե՞ս
«Ո՛չ, նրա եղբայրն է»: Մի ուրիշը՝ թե. «Ինչ գողեցիկ է նա,
Ինչ նրբագեղ է նա»: Ինչպես սազում են նրան զանգուրները:*

Պիրզոպոլիմիկոս

Սարսափելի դժբախտություն է գեղեցիկ լինելը...

Պարասիտը և խորամանկ ստրուկը որոշում են միացնել բաժանված սիրահարվածներին և, օգտվելով Պիրզոպոլիմիկոսի միամտությունից ու գոռոզությունից, նրա աջակցությամբ առևանգում են իր իսկ ստրկուհուն: Կատակերգությունը լի է զգեստափոխություններով, ծեծկռտոցներով, ուրախ ինտրիգներով: Հռոմեացի դերասանները դիմակ չէին կրում, բնականաբար մեծ դեր էր խաղում դիմախաղը և դերասանական տեխնիկան:

Պիրզոպոլիմիկոսի կերպարը օգտագործել է Շեքսպիրը իր «Տասներկուերորդ գիշեր» կատակերգության մեջ, Ֆալստաֆի կերպարում:

Կճուճը /Aulularia/. Օջախի բարի աստվածություն Լարը գիշերը ծեր Էվկլիոնին երազում հայտնում է, որ նրա օջախում ոսկով կճում է թաքցրած: Նույն գիշերը Էվկլիոնը գտնում է կճուճը և դատերը՝ Ֆեդրային օժիտ տալու փոխարեն որոշում է թաղել այգում: Հարևանի ստրուկը, նկատելով նրա գործողությունները, Էվկլիոնի հեռանալուց հետո գողանում է կճուճը և հանձնում իր

տիրոջը՝ Լիկոնիդին, որը մի տոնական գիշեր բռնաբարել էր Ֆեդրային և, իմանալով, որ նա հղի է, որոշել էր ամուսնանալ հետը:

Լուսաբացին նկատելով կճուճի կորուստը՝ գլուխը կորցրած ծերուկը դիմում է հանդիսատեսի օգնությանը.

*Կորած եմ ես: Ես խորտակվեցի: Մեռած եմ ես: Ո՛հ,
Ո՞ւր փախչեմ և ո՞ւր չփախչեմ: Կանգնի՛ր, բռնի՛ր:
Ո՞վ, ո՞ւմ: Չգիտեմ, չեմ տեսնում, կույր եմ ես:
Բայց ո՞ւր կորչեմ: Ո՞րտեղ եմ ես: Ո՞վ եմ ես:
Չեմ կարող հասկանալ: Օգնեցե՛ք, աղերսում եմ:
Ցույց տվեք նրան, ով գողացել է այն:
Ի՞նչ ասացիր դու: Պատրաստ եմ քեզ հավատալու:
Դու լավ մարդ ես, երևում է երեսիցդ:
Այս ի՞նչ է: Ծիծաղու՞մ եք: Բոլորիդ ճանաչում եմ:
Մեծ մասը գող եք, կասկած չկա...*

Իմանալով կճուճի տեղը՝ հարևանից պահանջում է վերադարձնել այն: Լիկոնիդը, վաղուց սիրահարված լինելով Էվկլիոնի դստերը՝ Ֆեդրային, խնդրում է ձեռքը: Այդ երկխոսությունը գրված է մեծ վարպետությամբ, քանի որ մեկը նկատի ունի կճուճը, մյուսը՝ Ֆեդրային: Այդ միջոցը կոչվում է *qui pro quo* /մեկը մյուսի փոխարեն/: Էվկլիոնի կերպարը ստեղծված է կատակերգական մեծ տաղանդով՝ հատկապես հերոսի ժխտությունը արտահայտող մանրամասների բազմազանությամբ /քննելուց կապում է բերանը, որ շունչը իզուր դուրս չգա, լվացվելուց լաց է լինում, որ ջուրն իզուր թափվում է, վարսավիրի մոտ կտրած եղունգները հավաքում, տուն է բերում և այլն/:

Պլավտոսի ստեղծած Էվկլիոնի կերպարը հիմք է ծառայել XVII դարի մեծ դրամատուրգ Մոլիերի «Ժլատը» կատակերգության համար:

Երկվորյակներ /Menaechmi/: Երիտասարդ Մենեխմը գալիս է մի քաղաք, որտեղ վրան է հարձակվում իրեն անծանոթ մի կին իր թիկնոցը գողանալու և սիրուհուն նվիրելու մեղադրանքով: Տեսնելով, որ Մենեխմը չի ճանաչում իրեն, կինը օգնության է կանչում հորը, զանգատվելով, որ ամուսինը ծաղրում է: Մենեխմը, սակայն, «աներոջն» էլ չի ճանաչում: Նրան հիվանդ համարելով՝ հայրը բժիշկ է հրավիրում: Այդ ժամանակ հայտնվում է Մենեխմի երկվորյակը: Ստրուկ Մեսենիոսի միջամտությամբ պարզվում է, որ երկվորյակներից մեկը կորել էր հոր հետ ճանապարհորդության ժամանակ, հայրը վշտից մահացել էր, իսկ երեխային գտել և որդեգրել էր մի հարուստ վաճառական: Մյուս եղբայրը մեծացել է հարազատ

քաղաքում՝ Սիրակուզում, մի օր որոշել է գնալ եղբորը փնտրել, և հասնելով Էպիդամնոս գտել է նրան:

Շեքսպիրը իր «Սխալների կատակերգության» համար օգտագործել է Պլավտուսի «Երկվորյակների» սյուժեն՝ երկվորյակ տերերի զույգին ավելացնելով երկվորյակ ծառաների զույգ:

Պլավտուսի գրչին են պատկանում նաև «Ամփիտրիոն» /Amphitrio/, «Խաբեբա» /Pseudolus/, «Գերիներ» /Captivi/ և այլ կատակերգություններ, որոնց սյուժեները փոխառնված են նոր աստիկական հեղինակներից: Պլավտուսը, տիրապետելով բեմական արվեստին, նրանց հռոմեական շունչ է հաղորդել:

ՊՈՒՐԼԻՈՒՍ ՏԵՐԵՆՑԻՈՒՍ ԱՖԵՐ

PUBLIUS TERENTIUS AFER /195 – 159 թթ./

Հռոմի երկրորդ կատակերգուն է Տերենցիուսը, որին մանուկ հասակում որպես ստրուկ Կարթագենում զնել և Հռոմ է բերել սենատոր Տերենցիուս Լուկանը: Նկատելով բացառիկ ընդունակությունները՝ տերը նրան ուսման է տալիս և ազատություն շնորհում: Դառնալով Հռոմի գրական խմբակներից մեկի մասնակից՝ նա օգտվում է հայտնի քաղաքական գործիչ Սկիպիո Աֆրիկացու հովանավորությունից: Վերջին տարիներին մեկնում է Հունաստան, սակայն հետադարձ ճանապարհին ծովում նավը խորտակվում է՝ հետը տանելով նրան և Մենանդրոսի կատակերգությունների իր թարգմանությունները:

Տերենցիուսի կատակերգությունները պալլիատաներ էին, մեզ հասած վեց կատակերգությունից չորսը գրված են Մենանդրոսի սյուժեներով: Առավել հայտնի են նրա «Սկեսուր» և «Եղբայրներ» կատակերգությունները:

«Սկեսուր» /165 թ./: Սյուժեն նույնությամբ կրկնում է Մենանդրոսի «Միջնորդ դատարանը»: Այստեղ նույնպես գլխավոր հերոս Պամֆիլոսը կնության է առնում Ֆիլունենային, որին ինը ամիս առաջ հարբած վիճակում բռնաբարել էր, բայց ի տարբերություն հունական տարբերակի, նաև գողացել էր աղջկա մատանին: Հետաքրքիր է սկեսուրի կերպարը, որը, չիմանալով հարսի տնից գնալու պատճառը, իրեն է մեղադրում և անգամ պատրաստակամություն հայտնում երիտասարդների երջանկության համար հեռանալ քաղաքից: Կատակերգության ավարտը բնականաբար բարեհաջող է. ազնիվ հետերան հայտնում է, որ Պամֆիլի իրեն նվիրած մատանին պատկանում է Ֆիլունենային, ճշմարտությունը բացահայտվում է, երջանիկ Պամֆիլը ընդունում է կնոջն ու նորածին

երեխային, շնորհակալություն է հայտնում հետերային, սակայն նրա ազատության համար փրկանք չի վճարում:

«Եղբայրներ» /160 ք./: Կատակերգության մեջ քննարկվում է դաստիարակության հիմնախնդիրը: Դեմեա և Միկիոն եղբայրները տարբեր սկզբունքների կողմնակից են՝ Միկիոնը, որը, զավակ չունենալով, որդեգրում է եղբոր որդիներից մեկին, ազատամիտ քաղաքացի է և քանի որ դաստիարակվել է հունական ոգով ու հարում է էպիկուրյան փիլիսոփայությանը, որդուն դաստիարակում է վստահության, ազատության սկզբունքով: Դեմեան, որը ներկայացնում է հռոմեական գյուղական մտածելակերպը, իր որդուն դաստիարակում է խստության և վախի մթնոլորտում: Միկիոնի որդի Եսքինոսը սիրահարվում է աղքատ մի աղջկա և ստանում է հոր համաձայնությունը: Այդ ժամանակ պարզվում է, որ նա առևանգել է ուրիշ մի աղջկա: Բարձրացած աղմուկը ստիպում է Եսքինոսին խոստովանել, որ հանցանքը կատարել է հանուն եղբոր, որը հորից վախենալով չէր կարող հանդիպել սիրած աղջկան: Տեսնելով իր սկզբունքների տապալումը, Դեմեան զղջում է իր արարքների համար.

*...Նրան, ուրիշին անվաստակ տրվում են
Չայրական ողջ բարիքները, նրան սիրում են բոլորը,
Ինձնից խորշում ամենքը, նրան հավատում են,
Բոլոր մտքերը, նրան հարգում, նրա հետ են երկուսը,
Իսկ ես մենակ, արհամարհված նրանցից:
Արի փորձեն կկարենա՞ն ես էլ քնքուշ ու սիրալիիր
Չրուցել:
Ես էլ կուզեմ այժմ սիրվել և մեծարվել:*

Ի տարբերություն Պլավտուսի, Տերենցիուսը իր կատակերգություններում չի օգտագործում ակորբատիկա, բուֆոնադ, զավեշտական իրադրություններ, կոմիկական կերպարներ, գռեհկաբանություն: Նրա կենցաղային և ընտանեկան դրամաները կատակերգություն են համարվում միայն բարեհաջող ավարտ ունենալու պատճառով: Եթե Պլավտուսի կատակերգությունների նախերգանքները նպատակ ունեին հանդիսատեսին ծանոթացնելու ներկայացվող պիեսի բովանդակությանը, ապա Տերենցիուսի նախերգանքները ավելի տեսական բնույթ են կրում. դերասանների բանավեճի միջոցով հեղինակը ներկայացնում է իր կարծիքը կոնտամինացիայի և այլ գրական միջոցների մասին: Դերասանները գործողության ընթացքում չեն դիմում հանդիսատեսին: Տերենցիուսի կատակերգությունները հեղինակի օրոք ժողովրդականու-

թյուն չեն վայելել /Յուլիոս Կեսարը նրան նույնիսկ անվանել է «կիսամենամորոս», նկատի ունենալով ոչ օրիգինալ սյուժեները/, սակայն XVII դարում Մոլիերը օգտագործել է «Ֆորմիոնը» և «Եղբայրները» իր «Սկապենի խարդախությունները» և «Ամուսինների դարոց» կատակերգությունների համար, իսկ XVIII դարում Տերենցիուսի պիեսները օրինակ են ծառայել «Լալկան» կատակերգության և «Քաղթենիական» դրամայի հեղինակների համար:

Մ.թ.ա. I դարը Հռոմի պատմության ամենաբուռն և ամենափայլուն դարաշրջանն է, որը համարվում է հռոմեական արվեստի «ոսկեդար»: Հռոմը դառնում է անտիկ աշխարհի մշակութային կենտրոն, որտեղ հավաքվում է հանճարեղ պոետների, հռետորների, ճարտարապետների, գիտնականների մի ամբողջ համաստեղություն:

Հռոմեական պոեզիայում ակնհայտորեն երևում է հունական, հատկապես ալեքսանդրյան ազդեցությունը: Այսպես՝ **Կատուլուսի** /Caius Valerius Catullus, 87–54 թթ./ նրբակերտ բանաստեղծությունները գրված են բազմազան ոճով՝ վերամբարձ սիրային խոստովանություններից և ընկերներից նվիրված ջերմ ուղերձներից մինչև թշնամիների դեմ ուղղված քինոտ էպիգրամներ: Հունական ազդեցությունը /Սապֆո, Միմներմ/ արտահայտված է անուններով /Լեսբիա/, ավանդական համեմատություններով, բանաստեղծությունների կառուցվածքով և հունական դիցաբանության կերպարների դիմումով: Սիրային բանաստեղծությունները նվիրված են Կլոդիա անունով մի կնոջ, որը հայտնի էր Հռոմում իր գեղեցկությամբ և թեթև վարքով և որին Ցիցերոնը անվանել է «բոլորի բարեկամ»: Կատուլուսը նրան կոչել է Լեսբիա և նվիրել բազմաթիվ և բազմաբնույթ բանաստեղծություններ: Նա առաջին պոետն է, որն այդ չափ անկեղծ, առանց հեզմանքի և հունորի արտահայտել է սիրո, կարոտի, հիասթափության, քնքշության, բուռն կրքի, տառապանքի զգացմունքները:

*Դու հարցնում ես, Լեսբիա, քանի՞ համբույր
Քո անձկալի շուրթերից կհագեցնի սիրտն իմ տոչորուն:
Դու լիբիական ավազը համրիր անհամար,
Համրիր աստղերը դու երկնի:*

*Այո: Ատում եմ, բայց և սիրում: «Ինչպե՞ս կարելի է» -
հարցնում ես դու:*

*Չեմ բացատրի: Բայց այդ եմ զգում մահու չափ
տառապելով:*

*Թշվա՛ռ Կատուլուս, հերիք խենթանաս:
Ինչ անցել է վաղուց, համարի՞ր անցյալ:
Երբեմն շողում էին աստղերը քեզ համար,
Բերկրանքով թռչում էիր դու սիրելիի քաղցր կանչին:
Այն ժամանակ շողում էին աստղերը քեզ համար,
Այժմ նա քեզ չի սիրում, դու նույնպես մի սիրիր:*

Կատուլուսից մեզ հասած ժողովածուն կազմված է հետևյալ ձևով՝ սկզբում փոքր լիրիկական բանաստեղծություններ են, հետո «Ատտիս» և «Պելևսի և Թետիսի հարսանիքը» ծավալուն պոեմները, եղբոր մահվանը նվիրված էլեգիան, հարսանեկան բանաստեղծությունն ու վերջում՝ էպիգրամները:

ՏԻՏՈՒՄ ԼՈՒԿՐԵՑԻՈՒՄ ԿԱՌՈՒՄ TITUS LUCRETIUS CARUS /98 – 55 թթ/

Դարաշրջանի մյուս մեծ պոետն է: Նրա «*Իրերի բնության մասին*» /*De rerum natura*/ հռչակավոր պոեմը ց' այսօր զարմացնում է գրական և գիտական հանճարի զուգակցությամբ: Պոեմի գաղափարը ծնվել է հայրենակիցներին էպիկուրի փիլիսոփայության հետ ծանոթացնելու ցանկությունից, սակայն էպիկուրի ուսմունքի երկու՝ գիտական և բարոյական ուղղությունից, Լուկրեցիուսը զարգացնում է գիտականը:

Պոեմը կազմված է վեց գրքից:

Առաջինը նվիրված է ատոմիստիկ տեսությանը: Երկրորդ գրքում արտահայտվում է աշխարհի հավերժ շարժումից ստեղծման գաղափարը՝

*Նրանք որոնք անգետ են բնավ մատերիայի հատկության
Կարծում են, մեզ հակառակ, առանց աստվածների կամքի
Բնությունն անընդունակ է
Փոխել տարվա եղանակները և հացահատիկներ աճեցնել
Եվ մյուս բոլորն ստեղծել... Սակայն նրանք այդ մտքերով,
Ինձ թվում է, շատ հեռու են առողջ մտքից, որովհետև
Եթե անգամ անհայտ մնա ինձ տակավին*

*Նախասկիզբն իրերի, և այն ժամն էլ երկնային երևույթներով,
Ինչպես և շատ այլ բաներով, ես կխիզախես ստույգ համարել,
Որ ոչ մեզ համար և ոչ բնավ աստվածային կամքով ստեղծված է
Ողջ գոյող աշխարհը մեր:*

Երրորդ գիրքը նվիրված է հոգու և ոգու տեսությանը: Այն սկսվում է Էպիկուրի գովքով, որին Լուկրեցիուսը անվանում է «հայր» և «փառք ու պարծանք Յելլադայի»: Ըստ Լուկրեցիուսի և՛ հոգին, և՛ մարմինը «ունեն մարմնական բնություն», հոգին, բաղկացած լինելով ատոմներից, մահանում է մարմնի հետ: Այսպիսով Լուկրեցիուսը մերժում է հոգու անմահությունը և Պլատոնի առաջարկած հոգիների տեղափոխության գաղափարը: Ոգին Լուկրեցիուսի համար հոմանիշն է բանականության, խելքի, որը գտնվում է մարդու կրծքավանդակում: Ոգին, ինչպես մարմնի բոլոր այլ մասերը, ենթակա է հիվանդության և մահվան, որն անխուսափելի է, սակայն դրանից պետք չէ վախենալ, քանի որ ոչ մի տարտարոս չկա, մահից հետո մարդը ոչինչ չի զգում:

Չորրորդ գրքում քննարկվում են զգացողությունները՝ որպես իրական աշխարհի նյութական արտացոլումներ:

Հինգերորդ, ամենաբովանդակալից գիրքը նվիրված է երկրի և մշակույթի պատմությանը, պետության և լեզվի գոյացման տեսությանը: Այստեղ նկարագրվում է քաղաքակրթության կայացումը նախնադարյան ժամանակաշրջանից, երբ մարդը սկսել է ճանաչել աշխարհը, օգտագործել կրակը, ստեղծել նոր իրեր և հարաբերություններ մինչև հողագործության, մետաղների հայտնագործման և արվեստի դարաշրջանը: Իսկ բնության գրկում ապրող մարդու երջանիկ, անխռով կյանքը գովերգելը Լուկրեցիուսին դարձրեց հռոմեական գրականության առաջին հովվերգական պոետը:


Վեցերորդ, անավարտ գրքում բացատրվում են ամպրոպի, երկրաշարժի, փոթորկի երևույթները:

Հանրապետական դարաշրջանում սոցիալական հակասությունների սրման պայմաններում առանձնահատուկ դեր է խաղում քաղաքական ճարտասանությունը /հռետորությունը/, որն ուներ երկու ուղղություն՝ ասիանիզմ և ատտիկիզմ: Ասիանիզմը, որն առաջացել է Փոքր Ասիայում, ի տարբերություն ատտիկիզմի, ընդունում էր լեզվի պերճություն, գեղեցկություն և անսպասելի էֆեկտներ: Հռոմեական հռետորության ամենավառ ներկայացուցիչ Ցիցերոնը հարել է այդ երկու ուղղություններին:

ՄԱՐԿՈՒՄ ՏՈՒԼԼԻՈՒՄ ՑԻՑԵՐՈՆ

MARCUS TULLIUS CICERO

/106 – 43 թթ./



Ծնվել է Լացիումում, Արպինա փոքր քաղաքում, երիտասարդ հասակում տեղափոխվել է Ղոն, որտեղ ստացել է փիլիսոփայական, հռետորական, իրավագիտական և գրական փայլուն կրթություն: Յուներենից թարգմանել է բազմաթիվ չափածո ստեղծագործություններ: 80 թ. հայրասպանության կեղծ մեղադրանքով դատապարտված ոմն Սեքստ Ռոթիուսի պաշտպանությամբ սկսվում է Ցիցերոնի փաստաբանական կարիերան: 63 թ. Ղոնում տեղի ունեցած մեծ ապստամբության ժամանակ կոնսուլ Ցիցերոնի ելույթը վճռական դեր խաղաց ազնվական Կատիլինային և ապստամբության մյուս առաջնորդներին մահապատժի ենթարկելու որոշման մեջ, որից հետո Ցիցերոնը դարձավ պետության ղեկավար: 59 թ. նա հրաժարվեց համագործակցել տրիումվիրատ /եռիշխանություն/ կնքած Յուլիոս Կեսարի, Պոմպեյի և Կրասսոսի հետ, որոնք և 58 թ. նրան վտարեցին Ղոնից: 51 թ. Ցիցերոնը Կիլիկիայի կուսակալ է նշանակվում, բայց 44 թ. Յուլիոս Կեսարի սպանությունից հետո վերադառնում է Ղոն: Խորաթափանց Ցիցերոնը, կանխատեսելով Օկտավիանուսի կայսերական ապագան, դարձավ նրան կողմնակից և նրա թշնամի Անտոնիուսի դեմ արտասանեց տասնչորս մերկացուցիչ ճառ: Սակայն երբ 43 թ. Օկտավիանուսը, Անտոնիուսը և Լեպիդը կնքեցին երկրորդ տրիումվիրատը, Ցիցերոնը ստիպված եղավ փախչել Ղոնից: Չիչաչար Անտոնիուսի ուղարկած զինվորները հետապնդում և սպանում են Ցիցերոնին:

Ցիցերոնի գրած տրակտատները /«Ղոներոսի մասին», «Բրուտուս», «Ղռետոր», «Պետության մասին», «Օրենքների մասին», «Թուկուլանյան զրույցներ», «Պարտականությունների մասին»/ բոլոր ժամանակներում ուսումնասիրվել և ընդօրինակվել են, ինչպես և նրա փայլուն ճառերը, որոնք ց` օրս հռետորական վարպետության օրինակ են մնում:

Ըստ Ցիցերոնի հռետորական ճառը պետք է ունենա երեք նպատակ՝

1. ներկայացնել սեփական տեսակետը /ինչը պետք է արվի հանգիստ տոնով/,
2. ունկնդիրներին հաճույք պատճառել /ոճի պատշաճ նրբագեղությամբ/,
3. համոզել և ստիպել ընդունել սեփական դրույթները /ինչի համար անհրաժեշտ է հուզված և պաթետիկ տոնը/:

ՕԳՈՍՏՈՍԻ ՊՐԻՆՑԻՊԱՏԻ ԴՐԱՎՆՈՒԹՅՈՒՆԸ



Մ.թ.ա. 27թ. Օկտավիանուսը դառնում է *princeps senatus* /I սենատոր/, ստանում է Օգոստոսի պատվավոր տիտղոսը և 23 թ. զավթում է տրիբունի իշխանությունը, այսինքն սենատի որոշումների վրա վետո դնելու իրավունքը: Օգոստոսին հաջողվում է բազմազան թռչակներով և անձնական հովանավորությամբ շահել կայսրության հայտնի գործիչների բարեհաճությունը: Օգոստոսի մտերիմ ընկեր Գայուս Ցիլնիուս Մեկենասը մեծ դեր է խաղացել մ.թ.ա. I դարի արվեստների և գրականության զարգացման գործում, նա իր տանը ռեցիտալիներ /ընթերցումներ/ էր կազմակերպում, որոնց մասնակցում էին ժամանակաշրջանի մեծագույն պոետները, գրողները և հռետորները: Մեկենասից ստացած պարգևների և ընծաների համար երախտապարտ ստեղծագործողները նրա պատվերով հաճախ գրում էին «աստվածային» Օգոստոսին գովերգող երկեր՝ ազդարարելով Հռոմի նոր՝ «ոսկեդարի» գալուստը:

Օգոստոսի կարևորագույն նվաճումը խաղաղության հաստատումն էր, ինչը բնականաբար նպաստեց մշակույթի զարգացմանը և քաղաքի վերակառուցմանը: Նրա հրամանով Հռոմը զարդարվում է պուրակներով, նորակառույց տաճարներով, ակվեդուկներով, ճոխ վիլլաներով: Օգոստոսի վկայությամբ նա «Հռոմը գտել է կավե, թողնում է մարմարե»:

«Ոսկե» դարի մեծագույն պոետներն են Վերգիլիուսը, Հորացիուսը և Օվիդիուսը:

ՊՈՒՐԼԻՈՒՄ ՎԵՐԳԻԼԻՈՒՄ ՍԱՐՈ

PUBLIUS VERGILIUS MARO /70 – 19 քք./

Ծնվել է կավագործի ընտանիքում, ուսումը ստացել է Կրեմոնայում, Մեդիոլանումնում /Միլան/, 50-ական թվականներին տեղափոխվել է Յոմն, որտեղ տարվել է ռիտորիկայով և էպիկուրյան փիլիսոփայությամբ: Հետագայում թողնում է Յոմնը և բնակություն հաստատում Նեապոլյան ծովածոցի ափին գտնվող շքեղ վիլլայում:

Նրա առաջին պոեմն է տասը էկլոգներից /բանաստեղծություններից/ բաղկացած «*Բուկոլիկներ*» /*Bucolica*/ հովվական իդիլիան: Այս պոեմում զգացվում է իդիլիայի ժանրի «հայր» Թեոկրիտեսի ազդեցությունը: Սակայն եթե հելլենիստական պոետին հետաքրքրում էին հովվական կյանքի իրական և կենցաղային մանրամասնությունները, հովիվների կենդանի կերպարները և բնության նկարագրությունը, ապա Վերգիլիոսի հերոսները պայմանական և արհեստական են, նրանք կրթված, զգայուն պոետներ են, ապրում են նույնքան իդեալական աշխարհում: Վերգիլիոսը կարծես փախչում է իրականությունից դեպի իր երևակայական աշխարհը, որը լի է ծաղիկներով, թռչունների երգով, ամվակների կարկաչով: Եթե անգամ հնչում են ողբերգական երանգներ, ապա դրանք միայն անհույս սիրո տառապանքներն են /X էկլոգ/:

IV էկլոգում Վերգիլիոսը կանխագուշակում է Հռոմի համար երջանիկ դարի մոտալուտ գալուստը, որը կապում է մի արու զավակի ծննդի հետ:

Հատուկ ուշադրության է արժանանում բնությունը, որի նկարագրությունները լատիներեն լեզվով գրված պոեզիայի լավագույն էջերից են /VI էկլոգ/:

Վերգիլիոսի հաջորդ պոեմը կոչվում է «*Գեորգիկներ*» /*Georgica*/ և նվիրված է Մեկենասին ու Օգոստոսին: Օկտավիանոսի մասին գրվել է դեռ I էկլոգում, որտեղ պոետը շնորհակալություն էր հայտնում բռնագրավված կալվածքը վերադարձնելու համար, սակայն այս պոեմում Վերգիլիոսը ոչ միայն Օգոստոսի, այլև նրա ողջ կառավարման գովքն է անում: Օգոստոսի ժամանակ կայսրության գյուղատնտեսությունը, իրոք, վերելք է ապրում և դառնում երկրի բարեկեցության հիմքը: Եթե «*Բուկոլիկներում*» Վերգիլիոսը նկարագրում է բնության վերացական գեղեցկությունը, ապա «*Գեորգիկներում*» նրան հետաքրքրում է մարդու և բնության անմիջական կապը: Եթե մարդը չաշխատեր, բնությունը կվերադառնար նախկին քաոսական վիճակին: Ըստ հեղինակի “*Labor omnia vincit*” /աշխատանքը հաղթում է ամեն ինչի/:

«Էնեականը» /Aeneis/ Վերգիլիուսի գլուխգործոցն է, որի վրա աշխատել է 10-12 տարի: Սահից առաջ նա խնդրում է ընկերներից այրել իր կարծիքով անավարտ պոեմը, որը, սակայն, պահպանվել է Օկտավիանուսի հրամանով: Պոեմը բաղկացած է 9896 տողից, 12 գրքից, երկու մասից՝ առաջինը /1-6/ գրված է Հոմերոսի «Ոդիսականին», երկրորդը /7-12/ «Իլիականի» օրինակով:

Պոեմի գլխավոր հերոսը տրոյացի Էնեասն է՝ Վեներայի որդին: Տրոյայի նվաճման ժամանակ նրան ներկայանում է Հեկտորի սուվերը, որը Էնեասին մարտի է կոչում հույների դեմ, սակայն Վեներան խորհուրդ է տալիս որդուն փախչել Տրոյայից: Ուսերին առնելով իր ծեր հորը՝ Անխիսեսին և բռնելով որդու՝ Ասկանիի /Հուլիուսի/ ձեռքը, Էնեասը ուղևորվում է դեպի նավերը, վշտացած հեռանում հարազատ ավերից:

Հոմերոսի օրինակով, Վերգիլիուսն իր պոեմի սյուժեն տեղադրում է երկու պլանում՝ աստվածային և երկրային: Այսպես, եթե Ոդիսևսին հետապնդում էր Պոսեյդոնը, ապա Էնեասին՝ Յունոնան: Իմանալով, որ իր հովանավորած Կարթագենը պիտի քանդվի հռոմեացիների ձեռքով, Յունոնան խոչընդոտում է Էնեասի հասնելը Իտալիա, որտեղ պիտի դառնար հռոմեացիների նախահայրը: Յոթ տարի ծովի վրա թափառելուց հետո՝ շնորհիվ Վեներայի և Յուպիտերի միջնորդության, Էնեասն իր ուղեկիցների հետ գալիս է Կարթագեն: Թագուհի Դիդոնեն պատիվներով ընդունում է Էնեասին և խնջույքի ժամանակ խնդրում է պատմել նրա արկածների մասին:

*Սանավանդ, պատմե մեզ, ո՛վ հյուր
Բուն ըսկզբեն Դանայեցվոց դարաններն
Եվ արկածները քո ազգիդ և մոլորումներդ,
Ձի յոթներորդ ամառն է
Հորմեհետե ծովափունքե ծովափունք
Եվ ծովե ծով թափառական կը շրջիս:*



II գիրքը նվիրված է Տրոյայի կործանման նկարագրությանը, իրար են հաջորդում դրամատիկ տեսարաններ՝ քուրմ Լաոկոոնի հույների կառուցած փայտե ձին քաղաք չբերելու հուսահատ աղերսանքները, ձիուն հասցված նիզակի հարվածը, նրա և երկու որդիների տանջալից մահը օձերի խայթոցից, ծեր և անզեն Պրիամոս թագավորի Աքիլլեսի որդի՝ Պիրրոսի ձեռքով սպանությունը, և Էնեասի քաղաքից հեռանալը:

III գրքում էնեսաը պատմում է տարբեր քաղաքներով և կղզիներով ճանապարհորդությունների մասին: Առավել հետաքրքիր են Արափանների դեմ մարտը, Պրիամոսի որդի Յելենոսի հետ նոր ամուսնությունը կնքած Անդրոմաքեին հանդիպելը, Անխիսեսի մահը և Կարթագենում հայտնվելը:

IV գրքում նկարագրվում է էնեսասի և Դիդոնեի սերը: Էնեսասի գեղեցկությամբ և կատարած սխրանքներով հիացած Դիդոնեն այլևս չի կարող դիմադրել իր զգացմունքներին.

*Ո՞վ է այս նոր հյուրը, որը մեր տունը եկավ
Ինչ լավն է նա, ինչ քաջություն, ինչ կորով
Հավատում եմ և հավատով աներկմիտ
Որ զարմից է աստվածների
Պետք է որ քեզ խոստովանեմ, իմ Աննա,
Որ այն օրից, երբ Սիքեոս ամուսինս
Վատարախտիկն սպանվեցավ եղբորիցս
Սա միմիայն զգայությունս ողորքեց
Եվ անհողողող սիրտս հուզեց, դողվեցրեց:*

Նա, ի վերջո, դժուր է մահացած ամուսնուն հավատարիմ մնալու երդումը և որոշում ամուսնանալ էնեսասի հետ:

Էնեսաը պատրաստ է մոռանալ ճակատագրի կողմից իրեն պարտադրված պարտականությունները և, ինչպես Ոդիսևսը Կալիպսոյի, Անտոնիուսը Կլեոպատրայի մոտ, օրերն անցկացնում է խնջույքներում ու սիրո հաճույքներում: Սակայն նրան ներկայանում է Յուլիետեի կողմից ուղարկված Մերկուրիուսը, որը հրամայում է թողնել Կարթագենը և ուղևորվել աստվածների կողմից նախանշված Իտալիա: Դիդոնեն սպառնում է զալիք արհավիրքներով, աղերսում է, սակայն իզուր, էնեսաը գիշերով նավ է բարձրանում և արցունքներն աչքերին հեռանում Կարթագենից: Անտիկ գրականության մեջ գուցե առաջին անգամ է նկարագրվում ստիպված պատմության թելադրանքին ենթարկվող մարդու ողբերգականությունը:

Հիանալի է նաև Դիդոնեի կերպարը, առաջին գրքերում նկարագրված հպարտ թագուհին IV գրքում ներկայանում է որպես դժբախտ մի կին, որը խղճի ծանր խայթերը հաղթահարելով, նվաճում է իր սիրած հերոսին, բայց ստիպված է հրաժեշտ տալ նրան: Տեսնելով իր աղերսանքների անզորությունը՝ Դիդոնեն խարույկ է բարձրանում և էնեսասի նվիրած սրով իրեն սպանում:

Էնեսասի և Դիդոնեի կերպարները կառուցված են հոգու անտիկ վեհության /magnitudo animi/ և մարդկայնության /humanitas/

միաձուլման սկզբունքով: Նրանց սերը ոգեշնչել է շատ նկարիչների և կոմպոզիտորների ստեղծելու կտավներ, օպերային և բալետային երկեր:

V գրքում էնեսար գալիս է Սիցիլիա, որտեղ խաղեր է կազմակերպում հոր մահվան տարեդարձի առիթով:

Յունոնան նորից է փորձում խափանել էնեսաի ուղևորությունը դեպի Իտալիա. նրա դրոժամբ տրոյացի կանայք հրդեհում են էնեսաի նավերը, սակայն Յուպիտերը անձրևով հանգցնում է:

VI գրքում էնեսար հասնում է Իտալիա և Կունա քաղաքում հանդիպում է Սիբիլլային, ում խնդրում է ուղեկցել իրեն հանդերձյալ աշխարհ, հոգիներից իր ճակատագիրն իմանալու և խորհուրդ հարցնելու համար.

*Մութ գիշերով լուռ ու մեմակ անցնում էին
Պլուտոնի լայնածավալ պետության
Աղջամուղջն ու ամայի գավառները,
Այսպես, գիշեր ժամանակ թավ անտառից
Լուսնի աղոտ լույսով անցնում է ուղևորն,
Երբ Յուպիտերը մեզով պատել է երկինք
Եվ մութը սև գողացել գույնն իրերի:*

Վեներայի օգնությամբ մութ անտառում գտնելով թաքցրած ոսկե ճյուղը՝ էնեսար թույլտվություն է ստանում թափանցել Պլուտոնի թագավորություն:

Այս գրքում Վերգիլիուսը օգտագործում է և՛ հոմերոսյան պատկերացումները, և՛ Պյութագորի հոգիների տեղափոխության տեսությունը /ըստ որի երկար մաքրումից հետո մահկանացուների հոգիները նոր կերպարանքով վերադառնում են երկիր/, և՛ ստոյիկների ուսմունքը հոգու կրակե էության մասին:

Վերգիլիուսի հանդերձյալ աշխարհի նկարագրությունը նշանավոր է իր ազդեցությամբ համաշխարհային, հատկապես կղերական գրականության մեջ հայտնի էսխատոլոգիական սյուժեների վրա: Բավական է հիշատակել Դանթեի հանճարեղ պոեմը, որտեղ հեղինակը Վերգիլիուսին է իր ուղեկցողը դարձնում դժոխքով և քավարանով անցնելու համար: Վերգիլիուսը առաջինն է նկարագրում հանդերձյալ աշխարհի բաժանումը՝ տարտարոսը հատկացված է մեղավորների տառապանքներին, էլիսիոնում ցնծության մեջ ապրում են անմեղ հոգիները.

*Ունանք կանաչ գետիցներին, իսկ ունանք
Շեկ ավազին մարմիններն են մարզում
Կամ մրցում են հաճոյական խաղերով,
Եվ տաղերի մրմունջներով ուրիշները
Կաքավում են և գայթում են ոտնատրոփ:*

Ստորերկրյա աշխարհում էնեսաը հանդիպում է իր տրոյացի ընկերներին, Դիդոնեին, որը էնեսասից փախչելով շարունակում է փնտրել ամուսնուն նրա ներողամտությունը հայցելու համար: Եվ վերջապես էլիսյան դաշտերում հանդիպում է Անխիսեին, որն իր որդուն պատմում է Զոոմի փառքի մասին, ցույց տալիս նախկին և ապագա մեծ գործիչների հոգիները, առանձնահատուկ մեծարանքով է խոսում Օկտավիանուսի մասին:

*Այս այն դյուցազն է, որ քեզ շատ անգամ
ես խոստացա, աստվածների շառավիղ
Մեծն Օգոստոս Կեսար, որ դարը ոսկեղեն
Պիտ հաստատի Լացիումի մեջ վերստին,
Այն երջանիկ վայրերում, ուր երբեմն
Ինքնակալեց վեհ Սատուրնուս թագավոր:
Նա պիտ իշխի Գարամանտին ու Զնդիկին
Եվ մինչ անդ, ուր չի հասնում ոչ արև
Եվ ոչ տարի, և ուր Ատլաս ուսն առած
Պարտում է լուսաճաճանչ առանցքը:*

Զոոմը սիրելու և պաշտպանելու պատգամը տալուց հետո Անխիսեսը փղոսկրյա դռնից դուրս է թողնում էնեսասին:

VII գրքից սկսվում է «էնեսականի» երկրորդ մասը: «Իլիականի» ազդեցությունը արտահայտվում է մուսային ուղղված Վերգիլիուսի դիմումում՝

*Դու', դիցուհի', արդ ներշնչիր քերթողին,
Պիտի երգեն պատերազմներ ահավոր:*

Լացիումի թագավոր Լատինուսը գուշակներից իմանալով, որ իր դստերը՝ Լավինիային պիտի ամուսնացնի տրոյացի մի հերոսի հետ, պատրաստվում կատարելու աստվածների կամքը, սակայն Յունոնան դրդում է Լավինիայի փեսացու, հռուտուլների առաջնորդ Տուրնուսին պատերազմ հայտարարել նորեկներին:

VIII գրքում պատերազմող կողմերը դաշնակիցներ են փնտրում: Էթրուսկների և սաբինների ցեղերը օգնում են հռուտուլ-

ներին, իսկ Արկադիայի թագավոր Էվանդրոսը Էնեսաին 400 հեծյալ է հատկացնում իր որդու՝ Պալլանտի գլխավորությամբ: Վեներայի խնդրանքով Վուլկանը զրահներ է պատրաստում Էնեսաի համար: Ինչպես և «Իլիականում» հատուկ ուշադրությամբ է նկարագրվում վահանը, որի վրա պատկերված են Օկտավիանուսը և մարտուն հաղթանակող հռոմեացիները:

IX գրքում պատմվում է, թե ինչպես Էնեսաի բացակայության ժամանակ հռուտուլները հարձակվում են նրա ճամբարի վրա, հայտնի է հատկապես երկու ընկերոջ՝ Նիսոսի և Էվրիալի հերոսական պաշտպանությունը, մահվան դրամատիկ էպիզոդը:

X գրքում նկարագրվում է Յունոնա և Վեներա դիցուհիների վեճը, որից հետո Յուպիտերը որոշում է չմիջամտել պատերազմի ընթացքին: Էնեսաը 30 էթրուսական նավերով փրկության է հասնում իր պաշարված բանակին: Վերսկսված ճակատամարտում Տուրնուսը սպանում է Էնեսաի ընկերոջը՝ Պալլանտին, և որպես ավար կրում նրա գոտին և ուսափոկը:

XI գրքում 12 օրվա զինադադար է հայտարարվում Պալլանտի մահը սգալու համար: Բանակցությունները խաղաղություն չեն բերում, հռուտուլներին գլխավորող ամազոնուհի Կամիլլայի սպանությունից հետո զորքը դիմում է փախուստի, Տուրնուսը դուրս է գալիս դաշտ՝ մենամարտով լուծելու պատերազմի վախճանը:

XII գրքում Տուրնուսի քրոջ՝ Յուտուրնայի հրահրումներից բռնկված հռուտուլները խախտում են մենամարտի համար կնքած զինադադարը և, նետահարելով տրոյացիներին, վիրավորում են Էնեսաին: Վեներան բուժում է նրա վերքը, Էնեսաը հարձակվում է թշնամիների վրա՝ սպանելով հազարավոր հռուտուլների: Տուրնուսը հրամայում է դադարեցնել պատերազմը, դուրս է գալիս մարտադաշտ: Յունոնան հրաժարվում է Տուրնուսին պաշտպանել այն դեպքում, եթե Լացիոնի անունը պահպանվի և «Հռոմը հզորանա իտալական քաջությամբ»: Էնեսաը վիրավորում է Տուրնուսին, որը Յեկտորի նման աղաչում է իր դիակը հանձնել հորը, իսկ Էնեսաը Աքիլլեսի պես մի պահ խղճում է նրան, բայց հանկարծ նկատելով Պալլանտի գոտին և ուսափոկը, սրով խցում է Տուրնուսի սիրտը:

«Էնեսականը» մի կողմից հռոմեական «պաշտոնական իդեոլոգիայի» և Օգոստոսի ժամանակաշրջանի «ոսկեդարի» տեսության արտահայտությունն է, մյուս կողմից ժառանգում է հունական, հատկապես հոմերոսյան ավանդույթները՝ աստվածների մասնակցությունը, հերոսների վեհակերտությունը, հեքզամետրը, հոգեբանական նրբությունը, մարդու ներաշխարհը թափանցելու հմտությունը: Սակայն, ի տարբերություն Հոմերոսի, Վերգիլիուսը իր ստեղծագործությամբ կատարել է սոցիալական պատվեր, նրա հե-

րոսները ինքնուրույն չեն իրենց որոշումների մեջ, Վերգիլիուսին խորթ է հոմերոսյան դեմոկրատիզմը և, քանի որ նա խուսափել է կենցաղային մանրամասնություններից, նրա «Էնեականը» չի կարող համարվել «հնադարի հանրագիտարան»:

Վերգիլիուսի պոեմում շատ են ալլեգորիաները /այլաբանությունները/, այսպես՝ բարձրացնելով Վուլկանի կռած վահանը, Էնեասը դրանով ուսերին է վերցնում սերունդների՝ հռոմեացիների ճակատագիրը, Էնեասի շքեղ կյանքը Դիդոնեի դոյակում՝ հիշեցնելով Անտոնիոսի՝ Կլեոպատրայի մոտ ապրելը, հուշում է նրանց սիրո որբերգական վախճանը և այլն:

Միջնադարում Վերգիլիուսին համարել են Քրիստոսի ծնունդը ավետած իմաստուն, իսկ նրա պոեմները՝ գուշակությունների աղբյուր: Նրա ազդեցությունն են կրել լատինական պոեզիան, եվրոպական էպիկական պոեմները, Վերածննդի և կլասիցիզմի էպիկան և պաստորալը: Ռոմանտիզմը, Վերգիլիուսի արվեստը համարելով արիեստական, պաթետիկ և պալատական, նրան հակադրել է Յոնեթոսի «ժողովրդական» պոեմները, բայց XIX դարի վերջից Վերգիլիուսը իրավամբ համարվեց հռոմեական պոետներից մեծագույնը:

ՔՎԻՆՏՈՒՍ ՀՈՐԱՏԻՈՒՍ ՓԼԱԿԿՈՒՍ

QUINTUS HORATIUS PHLACCUS /65-8 թթ./

Ծնվել է Վենուզիայում, հայրը եղել է ազատարձակ ստրուկ: 25նայած սուղ միջոցներին, ստացել է փայլուն կրթություն Յոնում, հետագայում Աթենքում, որտեղ ուսումնասիրել է հունական գրականություն: Աթենքում նա ծանոթացել և մտերմացել է Բրուտուսի հետ /Յուլիոս Կեսարի սպանությունից հետո/, անգամ հանրապետականների բանակում լեգիոնի հրամանատար է եղել:

Բրուտուսի և Կասսիուսի բանակի ջախջախումից հետո Յորացիուսը վերադառնում է Յոն, հաշտվում է Օգոստոսի պրինցիպատի հետ և նվիրվում գրական գործունեությանը:

Յորացիուսի առաջին բանաստեղծությունները երկտող էպոդներ են: Այդ ծաղրական, երգիծական, երբեմն կոպիտ տողերը հակադրվում են Վերգիլիուսի նրբագեղ ոճին: Յիմնականում երգիծանքի են ենթարկվում նրա ժամանակակիցները՝ անչափ երկար տողայով զբոսնող տրիբունը /4 էպոդ/, պոետ Մեվիուսը, որի նավը պիտի խորտակվի /10 էպոդ/, չար կախարդը, դավաճան սիրուհին և այլն: Գործող անձանց շրջանակը սահմանափակվում է «փոքր մարդկանցով», քանի որ մեծերին ծաղրելը վտանգավոր էր: Այնուամենայնիվ, Յորացիուսը իր հռեետեսությունն արտահայտում է

Վերգիլիուսի ազդարարած «ոսկեդարին» հակադրելով իր կոչը հռոմեացիներին՝ «փախչել հեռու կղզիներ» /16 էպոդ/: Յորացիուսը չի ընդունում նաև Վերգիլիուսի բուկոլիկ պոեզիան /նրանով հիանում է էպոդների հերոսներից մեկը՝ վաշխառու Ալթիուսը, որը մտահոգված է միայն իր հարստության կուտակման հիմնախնդրով/:

Սիրային էլեգիան նույնպես չի հուզում Յորացիուսին, էպոդներից նա անցնում է *սատիրաներին*, ընտրելով փիլիսոփայական *դիատորիքայի* ձևը: Նրա սատիրաները նվիրված են տարբեր թեմաների՝ քաղաքական, փիլիսոփայական, երգիծական:

I գրքի I սատիրայում պոետը ծաղրում է ժլատներին, որոնք իրենց գանձերը թաքցնելով, ցնցոտիներ են հագնում: Ըստ Յորացիուսի, մարդը պիտի ապրի բնության հետ ներդաշնակ՝ հաճույքներ ստանալով առօրյա կյանքից: VI սատիրայում նա նկարագրում է սեփական համեստ կյանքը՝ շուկայից գնումներն ինքն է կատարում, նրան սպասարկում են ընդամենը երեք ստրուկ, բայց նա երջանիկ է, քանի որ ոչ մեկից կախում չունի և ազատ տնօրինում է ժամանակը:

Համաձայն էպիկուրյան տեսության, Յորացիուսը գովերգում է ընկերական հավատարմությունը և կոչ է անում ընկերոջ թուլությունների հանդեպ ներողամիտ լինել: V սատիրայում պոետը նկարագրում է Մեկենասի և Վերգիլիուսի հետ կատարած ճանապարհորդությունը Բրունդիզի, Օկտավիանուսի և Անտոնիուսի բանակցություններին մասնակցելու համար: Շրջանցելով քաղաքական հարցերը, Յորացիուսը նկարագրում է կենցաղային մանրամասնությունները, ճանապարհի դժվարությունները, համեստ ուրախությունները:

Սատիրաների II ժողովածուն ավելի հասուն է, նախապատվությունը տրված է երկխոսության ձևին: VI սատիրայում հեղինակը պատմում է իր կալվածքի դրվածքի մասին: Յետաքրքիր է սեփական դիմանկարի ինքնաքննադատությունը. պոետը խոստովանում է իր բնավորության փոփոխականությունը, ծուլությունը և դյուրագրգռությունը:

II գրքի V սատիրայում հույն գուշակ Տիրեսիուսը Ուլիսին /Ոդիսևսին/ կորցրած հարստությունը վերադարձնելու ուղիներ է հուշում, խորհուրդ տալիս դիմել Օգոստոսի դարաշրջանին հատուկ շողոքորթությանը և ստորությանը:

Մ.թ.ա. 23 թ.–ից Յորացիուսը սկսում է գրել *օդաներ* /ներբող/, որտեղ այլևս չի շոշափում քննադատական և ծաղրական մոտիվներ: Ի տարբերություն Կատուլուսի սուբյեկտիվ պոեզիայի՝ Յորացիուսի օդաները, ժամանակի վեհակերտությանը համահունչ, գրված են հանդիսավոր վերամբարձ տոնով, կոչ են անում «իմաս-

տության», զերծ են հուզականությունից, կրքերի և դժբախտությունների նկարագրություններից: Ոգեշնչված լինելով Ալքայոսի, Սապֆոյի, Անակրիոնտի պոեզիայով՝ Յորացիուսի օդաները բազմազան են ուղերձներ ընկերներին, հիմներ աստվածներին, մտորումներ, սիրային բանաստեղծություններ: Յուրաքանչյուր օդան ոսկերչական աշխատանքի արդյունք է, բառը՝ կշռադատված և մտածված, նկարագրությունը՝ սեղմ: Յորացիուսը միշտ դիմում է որևէ հասցեատիրոջ: Այսպես՝ առաջին գրքի 23-րդ սիրային օդան նվիրված է ոմն Խլոյային.

*Փախչում ես ինձնից, Խլոյա, որպես պատանի եղնիկ
Որ կորցրել է լեռներում
Իզուր ես դողում դու*

.....
*Անտառի մեղմիկ շրշյունից:
Ես վարդ չեմ, ոչ էլ առյուծ, ահաբեկող զավակը Լիբանանի
Որ հոշոտեմ գազանաբար հարձակվելով
Թող վազելը մորդ հետևից,
Ժամանակն է, որ պսակվես:*

IX օդայում նա, շարունակելով Ալքայոսի ավանդույթները, դիմում է ընկերոջը՝

*Մի՛ մտածիր, թե ինչ կլինի մեր վերջը,
Ընդունի՛ր որպես շահույթ մեզ պարզևած օրը
Ճակատագրի և մի մերժիր, բարեկամս
Եվ շուրջպարը, և սիրային փառաքանքը:*

Փիլիսոփայական օդաներում Յորացիուսը մտորում է կյանքի կարճատևության և մահվան անխուսափելիության մասին՝ ընթերցողին հրավիրելով կենսական դժվարություններում իմաստուն կեցվածքի.

*Ջանիր պահպանել դու հոգուդ անդորրը
Փորձության պահին, իսկ բախտավոր ժամիդ
Մի արբիր ցնծությամբ, զի
Ենթակա ես դու մահվան, Դելլիուս, ինչպես մենք բոլորս:
Մենք բոլորս պիտի քվենք դեպ Յադես
Պտտվում է սափորը, վաղ թե անագան
Վիճակը մեզ կընկնի և ահա
Մեր հանդեպ նավակը դեպ հավետ չքացում:*

Հորացիուսի անենահայտնի օդան ճվիրված է պոետի դերին և նշանակութանը.

*Կանգնեցրի անմեռ արծան ես ինձ համար ամրակուռ քան պղինձն
Ու պալատներն արքայական և բարձրաբերձ, քան բուրգերն այն,
Եվ չեն եղծի ո՛չ անձրևը, ո՛չ Աքվիլիոնը հյուսիսի,
Ո՛չ անհամար շարանները դարերի:
Ոչ, չեն մեռնի ես լիովին, և լավագույն մասն իմ կյանքի
Կփրկվի թաղումից և փառաշուք պսակն իմ
Կփթթի առհավետ, որքան քուրմն անմռունչ կույսի հետ
Կելևեջե սանդղոթներով դեպ տաճարը Կապիտոլի:*

Օդաների IV գրքում Հորացիուսը գովերգում է Օկտավիանուսին, նրա խորթ որդիներ՝ Տիբերիուսին և Դրուզոսին, և փաստորեն դառնում է «Հուլիուսների ցեղի երգիչ»:

Մ.թ.ա. 17 թ. Հռոմում կազմակերպվել էր «սեկուլյան խաղեր» տոնը, որը պիտի խորհրդանշեր քաղաքացիական պատերազմների ավարտը և ազդարարեր «Օգոստոսի հովանու տակ նոր երջանիկ դարաշրջանի գալուստը»: Տոնական հիմնի ստեղծումը հանձնարարվեց Հորացիուսին, որը Վերգիլիուսի մահից հետո /մ.թ.ա. 19 թ./ համարվում էր կայսրության մեծագույն պոետը: Այդ պաշտոնական հիմնում Հորացիուսը բնականաբար գովերգում է Օկտավիանուս Օգոստոսին, նրա բարեփոխումները, հռոմեական պետությունը, «նոր դարի սկիզբը»:

Հորացիուսի ստեղծագործական վերջին տարիների նախընտրած ժանրը *ուղերձներն* են՝ չափածո նամակները: Ինչպես և սատիրաները, դրանք նույնպես գրված են անկաշկանդ զրույցի ձևով, սակայն այստեղ բացակայում է ծաղրանքը, իսկ «հորացիական իմաստությունը» արտահայտվում է Օգոստոսին, Մեկենասին, Տիբերիուսի քարտուղար Ֆլորին ուղղված խորհուրդների ձևով: Ուղերձների երկու գրքերը լույս տեսան համապատասխանաբար մ.թ.ա. 20 և 14 թթ.: Երկրորդ գիրքը բաղկացած է գրականությամբ ճվիրված երեք նամակից, որոնցից կարևորագույնը «Պիզոներին» ուղերձն է, որը հայտնի է «Պոետական արվեստ» խորագրով: Այստեղ Հորացիուսը ներկայանում է որպես հռոմեական կլասիցիզմի տեսաբան: Պոետական ստեղծագործությունից նա պահանջում է ներդաշնակություն և մասերի համաչափություն, իսկ պոետից՝ կրթվածություն և դատողություն: Տաղանդը պետք է ամրապնդել քրտնաջան մասնագիտական աշխատանքով: Այս նամակը կարևոր աղբյուր էր դարձել Վերածննդի և կլասիցիզմի տեսաբանների համար:

Հորացիուսի պոեզիան բարձր է գնահատվել Պետրարկայի և Վերածննդի մյուս հունամիստների, XVII դարի տեսաբանների, ինչպես նաև XVIII և XIX դարի սկզբի ֆրանսիական և ռուսական պոետների կողմից:

ՊՈՒՔԼԻՈՒՍ ՕՎԻԴԻՈՒՍ ՆԱՍՈ

PIBLIUS OVIDIUS NASO /43 մ.թ.ա.- 18 մ.թ./

Հռոմեական «ուսկեդարի» պոետներից կրտսերն է: Նա իր կենսագրությունը պատմում է «*Հեծեծանքներից*» մեկում: Ծնվել է 43 թ. մ.թ.ա. Սոլմոնա քաղաքում, որի գլխավոր փողոցը այսօր կրում է Օվիդիուսի անունը: Կրթությունը ստացել է Հռոմում և Հունաստանում: Հռոմում ուսումնասիրել է ճարտասանության /ռիտորիկայի/ երկու հիմնական ձևերը՝ *կոնտրովերսիան* /դատական/ և *սվաստրիան* /դատողական/: Նա կարող էր դառնալ լավ հռետոր, ժամանակակիցների վկայությամբ, իր ճառերին երբեմն տալիս էր բանաստեղծական ձև: Օվիդիուսը Հունաստան էր ուղևորվել փիլիսոփայություն ուսումնասիրելու նպատակով, սակայն հետագա զործունեության համար ավելի կարևոր դարձան Տրոյա, Ալեքսանդրիա, Սիցիլիա կատարած ճանապարհորդությունից ստացած տպավորությունները: Իրեն ուղեկցող ընկերոջ՝ Մակրուսի հետ /Մակրուսը, ի դեպ, Հռոմի առաջին գրադարանի ստեղծողն էր/ Օվիդիուսը ծանոթանում է հին հունական դիցաբանությանը, բարբերին, մշակութային արժեքներին: Վերադառնալով Հռոմ՝ Օվիդիուսը, հոր կամքով պետական պաշտոն է ստանձնում, սակայն շուտով թողնում է այն՝ գերադասելով բանաստեղծության ոլորտը:

Օվիդիուսը երեք անգամ ամուսնացել է, երրորդ կնոջից ունեցած նրա միակ դուստրը՝ Պերիլլան, նույնպես բանաստեղծ է եղել:

Օվիդիուսը սիրո մեծագույն երգիչ է, իր խոստովանությամբ «նա անկարող էր երկար դիմադրել էրոսի նետերին», սերը նա համարում էր արվեստ ու գիտություն: Օվիդիուսի առաջին ստեղծագործությունը Կորիննա անունով առեղծվածային մի կնոջ նվիրված «*Amores*» սիրային էլեգիաների ժողովածուն է: Ի տարբերություն նախորդ պոետների՝ Օվիդիուսը ռեալիստորեն և սրամտորեն է վերաբերվում սիրո տառապանքներին, ավելի ազատ է թեմաների ընտրության մեջ. Երիտասարդ ընթերցողին խորհուրդներ է տալիս իր օրինակով ծանոթանալ և սիրել գեղեցիկ աղջիկներին և կանանց՝ անկախ նրանց սոցիալական դիրքից, անգամ խաբելով սիրուհիների ամուսիններին: Սերը Օվիդիուսի համար ուրախ ժամանց է, սակայն նրան հետաքրքրում են ոչ միայն սիրահարված պոետի, այլև կնոջ զգացմունքները: Սիրային էլեգիան Օվիդիուսի

գրչի տակ դառնում է կատակ, նրբագեղ մանրապատում: Սիրային թեման նա տարածում է նաև դիցաբանական կերպարների վրա: «Չերոսուհիներ» /Epistolae/ պոեմում նոր երանգներ են ստանում Պենելոպեի, Բրիսեիսի, Ֆեդրայի, Դիդոնեի, Մեդեայի սիրային զգացմունքները: Օվիդիուսը նրանց անունից նամակներ է ուղղում նրանց սիրեցյալներին՝ դրսևորելով կանացի հոգեբանության ճանաչողական հմտություն: Օվիդիուսի ստեղծագործական առաջին փուլի գլուխգործոցն է «Սիրո արվեստ» /Ars amatoria/ պոեմը, որի շարունակությունը մեկ տարի անց /մ.թ.ա.1 թ./ դարձավ «Սիրո հարը» /Remedia amoris/ պոեմը:

Օվիդիուսը, հետևելով տարածված դիդակտիկ ավանդույթին, խորհուրդներ է տալիս սիրահարված երիտասարդին: Պոեմի առաջին մասը նվիրված է սիրո առարկան գտնելու վայրերին /թատրոններում, կրկեսներում և այլն/, երկրորդը՝ գեղեցկուհուն գրավելուն /հետևելով սեփական արտաքինին, կեղծ խոստումներ տալով, հուզիչ նամակներ գրելով, սերը թաքցնելով բարեկամության դիմակի տակ և այլն/, երրորդը՝ այն պահպանելուն /պերճախոսությամբ, հնազանդությամբ, խանդով և այլն/: Գրքի երրորդ մասում Օվիդիուսը խորհուրդներ է ուղղում կանանց՝ նրանցից պահանջելով նուրբ ճաշակ, արտաքին նրբագեղություն և գիտելիքներ:

Պոեմի ազատ ոճը, համարձակությունը զայրացրին բարոյականության ջատագովներին, և չնայած իր գրած երկրորդ, ավելի լուրջ բնույթ կրող, «Սիրո հարը» պոեմին, մեղադրվեց անբարոյական բարքերը խրախուսելու և տարածելու մեջ: «Սիրո հարը» պոեմում Օվիդիուսը սիրո հիվանդությունից բուժվելու միջոցներ է առաջարկում, դրանցից կարևորագույնը՝ պարապությունից խուսափելն է, որին օգնում են նաև սիրուհու ֆիզիկական և բարոյական թերությունների մտաբերումը, ծոն պահելը, հատկապես սոխ և գինի չօգտագործելը: Չնայած այս պոեմի «ամենդոսյանը»՝ «Սիրո արվեստը» պոեմի հեղինակին Ջոնսից վտարելու Օգոստոսի որոշումը մնաց անփոփոխ:

Նրան արքայազնին Սև ծովի ափին գտնվող Թոմի բերդը, որտեղից այլևս չվերադարձավ, չնայած բազմաթիվ դիմումների, աղերսանքներով լի նամակների, որ ուղղել էր թե՛ Օգոստոսին, թե՛ Մեկենասին և թե՛ Օգոստոսից հետո կայսր դարձած Տիբերիուսին: Նրա մահվան տարեթիվն անգամ մոտավորապես է հայտնի:

Օվիդիուսի գլուխգործոցն է «Մետամորֆոզներ» հանճարեղ պոեմը, որն իրենից ներկայացնում է 15 գրքից բաղկացած հունական և հռոմեական առասպելների հանրագիտարան: Օվիդիուսը

մոտ 250 կերպարանափոխություններ է նկարագրում՝ միավորելով տարբեր շարքերում թեբեական, արգոսական և այլն:

Համաշխարհային մշակույթի և գրականության համար անգնահատելի է այդ պոեմի սյուժեների նշանակությունը: Ապոլլոնը և Դափնեն, Ֆատոնը, Նարկիսոսը, Պիզմալիոնը, Դեդալը և Իկարը դարեր շարունակ ոգեշնչել են գրողներին, պոետներին, նկարիչներին, քանդակագործներին, երգահաններին:

I գրքում Օվիդիոսը նկարագրում է քաոսային վիճակից երկրի, կենդանիների, բույսերի և մարդու առաջացումը, արծաթե, պղնձե և երկաթե դարերի հաջորդումը, ջրհեղեղը, որից փրկվում են Պառնաս սարը բարձրացած Դևկալիոնը և Պիրրան:

II գրքում Յուպիտերը շանթահարում է Արեգակի որդի Ֆատոնին, իսկ նրան սզացող քույրերը բարոյիներ են դառնում:

III և IV գրքերում կենդանանում են թեբեական դիցաբանական հերոսները՝ Կադմոսը և Գարմոնիան, Աքթեոնը, Սենելան, Տիրեսիոսը: Առավել հետաքրքիր են Նարկիսոսի և էբոյի, Պիրամոսի և Թիսբեի, Պերսևսի սխրանքների մասին էպիզոդները:

V- VII գրքերը վերաբերում են արգոնավորդների ժամանակներին: Հայտնի են Նիոբեի, Յասոնի և Մեդեայի, Թեսևսի և Մինոսի մասին պատմող առասպելները:

V - IX գրքերում պատմվում են Հերկուլեսի ժամանակի միջոցները, որոնց հերոսներն են Դեդալը և Իկարոսը, Փիլեմոնը և Բավքիդը, ինքը՝ Հերկուլեսը և նրա հետ կապված կերպարները:

X գրքի փայլուն էջերից են Օրֆեոսի և Էվրիդիկայի, Կիպարիսի, Հիացինտի, Պիզմալիոնի, Ադոնիսի մասին առասպելները:

XI գրքում առավել հետաքրքիր են Միդասի ոսկու և ականջների, ինչպես նաև տրոյական դիցաբանության անցումն ազդարարող Պելևսի և Թետիսի մասին պատմող առասպելները:

XII և XIII գրքերում ներկայացված է տրոյական դիցաբանությունը՝ Ավլիսում հավաքված հույները, Իֆիգենիան, Աքիլլեսի մահը, Ուլիսի և Այաքսի վեճը:

XIV և XV գրքերում Օվիդիոսը վերջապես անդրադառնում է Հռոմի դիցաբանական պատմությանը՝ տրոյացի Էնեասի ճանապարհորդությանը, հռուտուլների դեմ մղած պատերազմին, նրա աստվածացմանը, հռոմեական առաջին թագավորներից մեկի՝ Նումայի արդար կառավարմանը: Ավարտելով կերպարանափոխությունների այդ հսկայական շարքը՝ Օվիդիոսը գովաբանում է Հուլիոս Կեսարին, որը մահից հետո վեր է ածվում համաստեղության, Օգոստոսին, որը հետևելու է Կեսարին, և ինքն իրեն՝ որպես Հռոմի երգչի:

«Մետամորֆոզներ» պոեմում, որը և՛ էպիկական է, և՛ լիրիկական, նաև դրամատիկ, զարմանալի ներդաշնակությամբ են զուգակցվում բազմազան գեղարվեստական ժանրերն ու ոճերը՝ էպիստոլյարը, իդիլիկը, սիրային էլեգիան, սերենադը, էպիտաֆիան, ողբը: Օվիդիոսը ցուցաբերում է նաև գույների սիմվոլիկայի նուրբ զգացողություն:

Մետամորֆոզների» հետ զուգահեռ Օվիդիոսը գրում է «*Օրացույց*» /*Fasti*/ պոեմը: Նա ծրագրել էր ստեղծել տասներկու գիրք, ըստ ամիսների թվի, սակայն գրել է միայն վեցը: Յուրաքանչյուր գիրք սկսվում է տվյալ ամսվա հետ կապված առասպելով. առաջինը՝ Յանուսի անունով, երկրորդը՝ փեբուարիոսը՝ դաշտերի, լեռների և անտառների աստված Փաուսոսի անունով, երրորդը՝ Մարս աստծո, չորրորդը՝ ծովի փրփուր նշանակող Ափրոս անունով, հինգերորդը՝ մայեստաս /մեծություն/, և վեցերորդը՝ Յունոնայի անունով:

Աքսորում գրած «*Չեծածանրների*» /*Tristia*/ 5 գրքում Օվիդիոսը նկարագրում է արքայազնի մեկնելու ճանապարհին Ադրիատիկ ծովում փոթորկից փրկվելը, «*Մետամորֆոզների*» ձեռագրի Չոռոնում այրվելը, ներում է հայցում կայսրից, բացատրում է թոնի անվանումը, զանգատվում դաժան կլիմայից և «բարբարոսների» տգիտությունից, տալիս է իր ինքնակենսագրությունը:

«*Նամակներ Պոնտոսի*» /*Epistolae ex Ponto*/ ժողովածուն բաղկացած է չորս հատորից: Օգոստոսին և Մեկենասին ուղղված նամակներում Օվիդիոսը աղերսում է իրեն ներում շնորհել և թույլատրել վերադառնալու Չոռոն: Այս նամակներում ընկճված պոետը իր գովեստներով և շողոքոթությամբ գերազանցում է պալատական պոետներ Վերգիլիոսին և Չորացիոսին: Ընկերներին և հարազատներին ուղղված նամակներում Օվիդիոսը աղաչում է բարեխոսել իր համար, սակայն մնում է անպատասխան:

Օվիդիոսի վերջին, թերավարտ պոեմը՝ «*Չկների մասին*» /*Halieutica*/ ուսումնասիրությունն է:

Օվիդիոսը թաղված է թոնիում /ժամանակակից Կոնստանցայում/, տապանաքարի վրա գրված է իր իսկ տապանագիրը՝ *Եթե սիրել ես, անցորդ, մի՛ զլանար շշմջալ նրա աճյունին հրաժեշտի ողջույն*. «*Հանգիստ աճյունիդ Նատո*»:

Եթե Օկտավիանոսի կայսրության օրոք պոետներն անկեղծ էին կայսրի իրենց գովասանքներում, ապա Օկտավիանոսին հաջորդող կայսրերի՝ Տիբերիոսի /14-37 թթ./, Կալիգուլայի /37-41 թթ./, Կլավդիոսի /41-54 թթ./ և հատկապես Ներոնի /54-68 թթ./ ժամանակ գրականությունը օգտագործվել է իշխանությունը ամրապնդելու նպատակով: Կայսրերը շարունակում են հովանավորել,

նույնիսկ կաշառել պոետներին, գրողներին, փիլիսոփաներին և պատմիչներին, որոնց մեծամասնությունը գովերգում է իշխանավորներին:

Ա.թ. I դարի ականավոր գրողներն են առակագիր Ֆեդրը, փիլիսոփա և ողբերգակ Սենեկան և վիպասան Պետրոնիուսը:

ԼՈՒՑԻՈՒՍ ԱՆՆԵՈՒՍ ՍԵՆԵԿԱ

LUCIUS ANNEUS SENECA

/...մ.թ.ա. - մ.թ. 65 թթ./



Ծնվել է Կորդուբա /Կորդովա/ իսպանական քաղաքում, երիտասարդ տարիներն անցկացրել Եգիպտոսում, որտեղ ծանոթացել է հելլենիստական գրականության և արևելյան պաշտամունքների հետ: Հռոմ տեղափոխվելուց հետո Կլավդիոս կայսրի հրամանով վտարվում է Կորսիկա կղզի, որտեղ ութ տարի զբաղվում է գրականությամբ և փիլիսոփայությամբ: Կլավդիոսի երկրորդ կինը՝ Ագրիպինան, նրան վերադարձնում է Հռոմ և վստահում իր որդու՝ Ներոնի դաստիարակությունը: Կասկածամիտ և դաժան Ներոնի

կայսրության արյունոտ տարիները նշանավորվեցին քրիստոնյաների խոշտանգումներով, հակառակորդների և հարազատների՝ եղբոր՝ Բրիտանիկոսի, մոր՝ Ագրիպինայի, կնոջ՝ Օկտավիայի, սիրուհու՝ Պոպպեայի սպանություններով: Դրա հետ մեկտեղ Ներոնը հովանավորել է գրականությունը, թատրոնը, երաժշտությունը, գրել է ողբերգություններ, մասնակցել ներկայացումներին որպես դերասան:

Ներոնի կայսրության սկզբնական շրջանում Սենեկային շնորհվում է կոնսուլի պաշտոն, սակայն 65 թ. կայսրը հրամայում է նրան ինքնասպան լինել:

Սենեկայի գրական ժառանգության մի մասը մեզ չի հասել: Նրա ստեղծագործությունները բաժանվում են երկու մասի՝ փիլիսոփայական և գեղարվեստական /ողբերգություններ/:

Սենեկայի փիլիսոփայական հայացքները ո՛չ հետևողական են, ո՛չ կայուն: Իրեն ստոյիկ համարելով՝ Սենեկան ընդունում է նաև էպիկուրիզմի շատ դրույթներ /«Հոգեկան հանգստի մասին», «ժամանցի մասին» տրակտատները/: Տեսականորեն Սենեկան բոլոր

մարդկանց հավասար է ճանաչում, բայց իրականում նրա տրակտատներն ուղղված են բարձր խավին:

Սենեկայի կարծիքով, մարդ կարող է հոգեկան ազատության հասնել միայն փիլիսոփայությամբ: Մարդու բացարձակ ազատությունն է այն, որ ցանկացած պահի կարող է ինքնասպանությամբ հեռանալ կյանքից: Այդուհանդերձ ինքը կենսական տարբեր իրավիճակներում միշտ պատրաստ է եղել փոխզիջումներ փնտրելու:

Հատկանշական է նրա վերաբերմունքը հարստության նկատմամբ: Գովերգելով բարքերի պարզությունը և աղքատի համեստ հաճույքները՝ Սենեկան կոչ է անում արհամարհել հարստությունը՝ չիրաժարվելով նրանից: Իմաստունը «հարստություն չի սիրում, բայց գերադասում է այն, նրան չի տալիս իր հոգին, բայց ընդունում է այն, տիրում է նրան, բայց չի դառնում նրա ստրուկը»: Ավելին, միայն ունենալով կարելի է արհամարել հարստությունը: Հարստության հանդեպ բացասական վերաբերմունքը Սենեկային չխանգարեց մեծ կարողություն դիզել, իսկ փիլիսոփայական իմաստությունը՝ պալատական խարդավանքներին մասնակցել: Իր քարոզած բարոյական սկզբունքների և սեփական ապրելակերպի հակասությունները Սենեկան բացատրում է մարդուն հատուկ թուլությամբ և ընդհանուր մեղավորությամբ:

Կայսրությունը անխուսափելի չարիք է, և նրան հակադրվելու համար Սենեկան հոգեկան ուժեր է փնտրում: Այդ նպատակով պետք է ճնշել կրքերը, սովորել դիմակայել տառապանքներին, դաստիարակել «պասիվ դիմադրություն», որի վերջին ապաստանը մահն է: Ամբողջ կյանքը պետք է լինի մահվան նախապատրաստում. «Վատ է ապրել նա, ով չի կարողանում լավ մեռնել»:

Սենեկան նախընտրում է վառ գույներ, նրան հաջողվում են արատների, բուռն կրքերի, պաթոլոգիական հոգեվիճակների նկարագրությունները: Ոճական այդ առանձնահատկությունները արտահայտվել են հատկապես ողբերգություններում: Մեզ հայտնի է Սենեկայի ինը ողբերգություն, որոնք հռոմեական ողբերգության բացառիկ ամբողջական մոուլներ են:

Սենեկայի «դեկլամացիոն» ոճով գրված ողբերգությունները նախատեսված են ոչ բեմադրման, այլ ընթերցանության համար: Նա պահպանում է հին հունական ողբերգության արտաքին ձևը՝ չափածո մենախոսություններն ու երկխոսությունները հերթագայվում են խմբերգի լիրիկական հատվածների հետ, գործող անձանց թիվը չի անցնում երեքից, երգչախմբի ելույթները ողբերգությունը բաժանում են հինգ գործողության: Պահպանվում են նաև հույն դասականների մշակած դիցաբանական սյուժեները. Սենեկան մորից անդրադառնում է «Մեդեային», «Ֆեդրային», «Էդիպոսին» և այլն:

«Մեղեա»: Սենեկան էքսպոզիցիա չի տալիս, ենթադրվում է, որ ընթերցողը ծանոթ է և՛ առասպելին, և՛ գործող անձանց, և թե գործողության վախճանին: Ողբերգությունը սկսվում է հերոսուհու մենախոսությունից, որտեղ նա ներկայանում է որպես դաժան կախարհ, որի միակ նպատակը վրեժխնդրությունն է: Սենեկայի Մեղեան ոչ մի բանից չի վախենում:

«Ճակատագիրը վախենում է քաջերից, ճնշում վախկոտներին... ով հույս չունի, հույսը չի կտրի ոչ մի բանից... ճակատագիրը կարող է մեզնից խլել մեր հարստությունը, բայց խլել մեր ոգին չի կարող»:

Ճարպիկ փաստաբանի հմտությամբ Մեղեան կարողանում է մեկ օրով հետաձգել իր աքսորը /երեխաները չեն աքսորվում/: Եթե էվրիպիդեսի Մեղեան ատում է իրեն դավաճանած Յասոնին, ապա Սենեկայի Մեղեան պատրաստ է ներել նրան և առաջարկում է միասին փախչել: Մեղեայի բազմաթիվ մենախոսություններից ամենատպալորիչը վերջին գործողության մենախոսությունն է. նա պատմում է, թե ինչպես է իր հոգում «մայրը» պայքարում «կնոջ» դեմ, «սերը»՝ ատելության: Մեղեայի աչքին հայտնվում են եղբոր մասնատված դիակը, վրիժառության աստվածությունները, և խելացնոր վիճակում սպանում է որդիներից մեկին: Ի տարբերություն հունական ողբերգության՝ Սենեկայի հերոսները ոճիրը գործում են հանդիսատեսի ներկայությամբ: Տեսնելով մոտեցող Յասոնին՝ Մեղեան երկրորդ որդուն սպանում է հոր աչքի առաջ՝ հրձվելով նրա տառապանքներով:

«Էդիպոս»: Ի տարբերություն Սոֆոկլեսի, Սենեկայի հերոսը ողբերգության սկզբից նախազգում է իր ողբերգական ճակատագիրը, սակայն հասկանում է պայքարելու անիմաստությունը: Հատուկ ուշադրությամբ է նկարագրվում ժանտախտի տեսարանները, զոհաբերությունները, կենդանիների փորոտիքով գուշակությունները: Իմանալով ահավոր ճշմարտությունը՝ ինքնասպանության պատրաստ Էդիպը հասկանում է, որ մահը իր համար միայն տանջանքներից ազատում կլիներ և ինքն իրեն կուրացնում է՝ դատապարտվելով ավելի դաժան տառապանքների:

Սոֆոկլեսի Իոկաստեն, գուշակելով ահավոր ճշմարտությունը, աղաչում է Էդիպոսին դադարեցնել հարցաքննումները և, հեռանալով բեմից, ինքնասպան է լինում: Սենեկայի Իոկաստեն փորձում է համոզել արդեն կույր Էդիպին, որ կատարվածի մեղավորը ճակատագիրն է և, Էդիպից խլելով սուրը, սպանում է իրեն:

«Թիեստես» ողբերգության մեջ դաժան Ատրեսը բեմում սպանում է եղբոր զավակներին և նրանց մսով կերակրում Թիեստեսին:

«Ինչպես Հայաստանի լեռների արքան՝ անագորույն ոսկեբաշ առյուծը, հոշոտում է հոտը և արյունաշաղախ ընկնում է և քաղցը հագեցնելով՝ յուրաքանչյուր ակնթարթ կատաղում ու հոգնած ատամներով սպառնում փոքրիկ անպաշտպան արջառների, այսպես և Ատրեսը է՛լ ավելի պայթում է բարկությունից, և մոռանալով, թե ով է կանգնած իր առջև, արյունաթաթախ սուրը մխում է երկու մարմնի մեջ այնպես, որ սուրը կրծքից անցնում է թիկունքը:

«Ֆեդրա» ողբերգության համար Սենեկան օգտագործում է Էվրիպիդեսի «Իպոլիտոսի» առաջին տարբերակը, որտեղ Ֆեդրան ինքն է սեր խոստովանում խորթ որդուն: Երբ Իպոլիտոսը տանջամահ է լինում, Ֆեդրան մեղանչում է կատարած հանցանքի համար՝ ինքնասպանություն գործում:

«Դիմացում» երգիծական ստեղծագործությունը ուղղված է Կլավդիոսի դեմ: Նկարագրվում է նրա մահից հետո համբարձվելը երկինք, որտեղ աստվածները, գնահատելով ապրած կյանքը, նրան ուղարկում են դժոխք: Ճանապարհին նա հանդիպում է սեփական հուղարկավորությանը և ականատես լինում ժողովրդի ցնծությանը: Դժոխքում Կլավդիոսին դատում են իր իսկ սկզբունքով լսելով միայն մեղադրողներին: Նրա կողմից հալածվածները շրջապատում են նրան և դատապարտում են անտակ բաժակով զառ խաղալու: Սենեկայի կուտակված ատելությունը արտահայտվում է Կլավդիոսի ֆիզիկական արատների, տգեղության, տգիտության և դաժանության նկարագրություններում:

Սենեկայի բազմազան գրական ժառանգությունը մեծ հետաքրքրություն է առաջացրել ինչպես հին, այնպես էլ նոր ժամանակներում: Նրա ստոյիցիզմը ուսումնասիրվել է քրիստոնեական մտածողների կողմից, բարոյական փիլիսոփայությանը տարվել են XVIII դարի լուսավորիչները, հատկապես Դիդրոն: Ողբերգությունները օրինակ և սյուժեների աղբյուր են հանդիսացել Շեքսպիրի և Վերածննդի դարաշրջանի մյուս դրամատուրգների, XVII դարի կլասիցիստների համար:

ԳԱՅՈՒՄ /ԿԱՍ ՏԻՏՈՒՄ/ ՊԵՏՐՈՆԻՈՒՄ

PETRONIUS ARBITER

/... - մ.թ.66 թթ./

Տացիտուսը /Տակիտուսը/ իր «Աննալներում» պատմում է Ներոնի ժամանակների մի շատ հետաքրքիր գրողի մասին, որը «ցերեկը քնում էր, գիշերը գործում և զվարճանում» և որի գիրքը բացարձակ հաջողություն է ունեցել: Խոսքը Պետրոնիոսի «Սատիրիկոնի» մասին է: Պիզոնի դավադրությունը մերկացնելուց հետո Պետրոնիոսը որոշել էր ինքնասպան լինել, բայց նույն Տացիտուսի վկայությամբ, մեկ կտրում էր երակները, մեկ կապում, չշտապելով բաժանվել կյանքից:

«Սատիրիկոնը» գրված է «մենիպայան սատուրայի» ձևով, այսինքն արձակ և չափածո հատվածների հերթագայությամբ: «Սատիրիկոնը» երգիծական կենցաղային վեպ է, որտեղ ծաղրի է ենթարկվում սերը իր վեհ հասկացությամբ: Պետրոնիոսի նպատակը ընթերցողին հետաքրքրելն էր սիրային արկածների չափազանց անկեղծ նկարագրություններով: Այս ծավալուն վեպից մեզ հասած հատվածները սկսվում են XIV գլխից: Գլխավոր հերոսը՝ Էնկոլպիոսը կրթված երիտասարդ է, սակայն դարձել է թափառաշրջիկ և հանցագործ: Նա տաճար է պղծել, վիլլա է թալանել, սպանություն է գործել, գլադիատոր է եղել: Ճակատագիրը նրան շարտում է քաղաքից քաղաք, դժբախտությունից դժբախտություն: Համաձայն վիպական ավանդույթի՝ հերոսին պետք է հետապնդեր աստվածների «զայրույթը», Էնկոլպիոսին նույնպես հետամտում է սիրո մի աստվածություն, բայց ոչ Երոտը կամ Աֆրոդիտեն, այլ «ցածր որակի» աստված Պրիապը: Ավանդական սիրող զույգը վեպում ներկայացնում են Էնկոլպիոսը և կանացի տղա Գիտոնը: Այս «զույգին» պարբերաբար միանում է որևէ երրորդ թափառաշրջիկ, որը խախտում է նրանց հարաբերությունների ներդաշնակությունը: Գլխավոր հերոսները ենթարկվում են տարբեր փորձությունների՝ փոթորիկ, նավի խորտակում, կեղծ ինքնասպանություն, բաժանումներ և հանդիպումներ: Վեպի հիմնական հետաքրքրությունը, սակայն, բազմաթիվ էպիզոդների նկարագրություններում է. իրար են հաջորդում խրախճանքների, խաղաղության, հրապարակային վեճերի տեսարանները: Հեղինակը ցածր խավի ներկայացուցիչների զարմանալի իմացություն է ցուցաբերում, նա շատ վառ է պատկերում կախարհների, կավատների, սիրային արկածներ որոնող կանաց, օժիտ փնտրողներին, պարագիտներին, գողերին, նավաստիներին և զինվորներին:

Առավել հայտնի էպիգրոդը Տրիմալքիոնի խնջույքի տեսարանն է: Տանտերը՝ Տրիմալքիոնը /եռակի զգվելի/, ազատարձակ է, նախկինում սիրիացի ստրուկ, պատանեկության տարիներին ծառայել է տերերի սիրային հաճույքներին, ազատություն է ստացել և հարստացել շնորհիվ հաջող առևտրի: Իր համար պատրաստած տապանաքարի վրա նա գրել է տալիս. «Նա եկել է ցածր խավից, թողել է 30 միլիոն սեստերցի և երբեք չի լսել ոչ մի փիլիսոփայի»: Չնայած Տրիմալքիոնի դրյակի շքեղությանը և խնջույքի պերճությանը՝ նրա ճառերը, տգիտությունը, սնահավատությունը, մեծամտությունը և հատկապես անճաշակությունը ապացուցում են ստրկական ծագումը: Տրիմալքիոնի հյուրերը նույնպես ազատարձակ ստրուկներ են, գռեհիկ, անճաշակ և ազահ:

Պետրոնիոսի վեպը վկայում է, որ հռոմեական ազնվականությունը, որին պատկանում էր «Սատիրիկոնի» հեղինակը, կայսրության դարաշրջանում կորցրել էր հավատը դեպի ապագան: Պետրոնիոսին բնորոշ են նիհիլիզմը, հիասթափությունը, բացարձակ նատուրալիզմը, որոնք, սակայն, չեն արժեզրկում հռոմեական այս վեպի գեղարվեստական նշանակությունը:

ԼՈՒՑԻՈՒՍ ԱՊՈՒԼԵՅ

LUCIUS APULEIUS

/125 - ... թթ./

Հռոմեական մյուս մեծ վիպասանը՝ Ապուլեյը, ծնվել է 125 թ. Աֆրիկայում, հարուստի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է Կարթագենում, հետո Աթենքում, որտեղ տարվել է սոփեստությամբ և փիլիսոփայությամբ, մոգությամբ և արևելյան հավատքներով: Հռոմում մի քանի տարի փաստաբանությամբ զբաղվելուց հետո որոշել է ճանապարհորդել և դեկլամացիոն դասախոսություններով շրջել է արևելյան երկրներում: Վերջնականապես բնակություն հաստատելով Կարթագենում՝ շարունակում է իր հռետորական գործունեությունը և զբաղեցնում «գավառի քրմի» պաշտոնը:

Տաղանդավոր գրողը լատիներեն և հունարեն գրված բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակ է. «Պլատոնի և նրա ուսնունքի մասին», «Սոկրատեսի աստվածայնության մասին», «Աշխարհի մասին», «Ձկների մասին», «Ծառերի մասին», «Թմաբանության մասին», «Երաժշտության մասին» և այլն: Համաշխարհային փառքի արժանացան նրա «Ապոլոգիա» ճառը և «Սետամորֆոզներ» կամ Ոսկե ավանակը՝ վեպը:

Ճանապարհորդություններից մեկի ժամանակ Ապուլեյը հանդիպում է մի վաղեմի ընկերոջ և ամուսնանում նրա մոր հետ: Կնոջ ազգականները մեղադրում են Ապուլեյին, որ նա մոգության /հայելու և ատամի փոշու/ միջոցով հրապուրել է իրենից տաս տարով մեծ հարուստ այրուն՝ ունեցվածքին տիրանալու նպատակով: Այդ առիթով էլ Ապուլեյը ելույթ է ունենում «Ապուլոգիա» ինքնաարդարացման ճառով, որտեղ ծաղրում է տոգետ և ագահ մեղադրողներին, մոգությունը հայտարարում աստվածային գիտություն:

«Մետամորֆոզներ» վեպը դեռ անտիկ դարաշրջանում ստացել է երկրորդ անվանումը՝ «Ավանակ», որին հիացած ընթերցողները ավելացրել են «ոսկե» գնահատականը: Գլխավոր հերոսը՝ Լուցիուսը ընկնում է մոգությամբ հայտնի Թեսալիա մարզը և իջևանում վաշխառու Միլոնի մոտ, որի կինը՝ Պամֆիլան կախարդուհի է: Լուցիուսը սիրային կապի մեջ է մտնում մի սպասուհու հետ, որի օգնությամբ գաղտնի ականատես է լինում Պամֆիլայի բու դառնալուն: Լուցիուսը աղաչում է սիրուհուն իրեն նույնպես կերպարանափոխել, սակայն թռչունի փոխարեն նա դառնում է ավանակ: Մարդկային կերպարանք ստանալու համար նա պետք է վարդի տերևներ ծամեր, բայց վաշխառուի տան վրա ավազակներ են հարձակվում և զողանում ավանակին: Սկսվում են նրա տառապանքները, նա ձեռքից ձեռք է ընկնում, ահավոր զրկանքներ կրում, բայց վեպի վերջում աղոթում է Իզիդային, որի քուրմը նրան վարդե պսակ է տալիս ծամելու:

Լուցիուսը ավանակի կերպարանքով ականա վկա է դառնում մարդկային բնավորությունների իրական դրսևորմանը, նրանց արարքների դրդապատճառների, հարաբերությունների բազմազանությանը:

Վեպը բաղկացած է 11 գրքից, որոնց մեծ մասը կազմում են ընդմիջարկված էպիզոդները: Տարբեր ոճերով գրված այդ էպիզոդները, միահյուսվելով, արտացոլում են դարաշրջանի հասարակության խայտաբղետությունը: Ամենահայտնի էպիզոդը՝ «Ամուրի և Փսիխեի» մասին նույն է, որն, ինչպես և ամբողջ վեպը, հաճախ է օգտագործվել բազմաթիվ նովելիստների /Բուկաչչո/, ինչպես նաև քանդակագործների և նկարիչների կողմից:

ՎԵՐՋԱՐԱԼ

Անտիկ գրականությունը երբեք վերջնականապես չի մահացել, նույնիսկ Միջնադարում. VIII դարում Կառլոս Մեծը իր մայրաքաղաք Աախեն է հրավիրել տարբեր երկրների գիտնականներին Ակադեմիա հիմնելու նպատակով, XII դարում հիմնվել է Փարիզի համալսարանը, որտեղ ուսումնասիրվել են Վերգիլիուսը, Օվիդիուսը, Զորացիուսը, Ցիցերոնը և այլոք, սիրո երգիչներ տրուբադուրները օգտվել են Օվիդիուսի պոեմներից, միջնադարյան վեպերը նվիրված են եղել Ալեքսանդր Մակեդոնացուն, Էնեսաին, Տրոյական պատերազմին: Դանթեի «Աստվածային կատակերգության» էջերում բացի Վերգիլիուսից հանդիպում ենք անտիկ պոետներ Զոնտրոսին, Զորացիուսին, Օվիդիուսին և այլոց, անտիկ դիցաբանության կերպարներին, պատմական դեմքերի: Ամբողջ միջնադարի ընթացքում լատիներենը եղել է կրթության, եկեղեցու, փիլիսոփայության, օրենսդրության, գրականության լեզուն:

Վերածննդի համար անտիկ դարաշրջանը եղել է մարմնի և ոգու ազատության իդեալի: Վերածննդի մեծագույն ներկայացուցիչները հիմնվել են անտիկ աստղագիտության, բժշկության, բնագիտության, փիլիսոփայության նվաճումների վրա, XV դարում Կոզիմո Մեդիչին հիմնել է Ֆլորենցիայի Պլատոնյան ակադեմիան: Պետրարկան, Բոկաչչոն, Շեքսպիրը, Դյու Բելեն, Էրազմ Ռոտտերդամցին իրենց ստեղծագործություններում օգտագործել են անտիկ գրականության ավանդույթներն ու սյուժեները:

Նոր ժամանակներում անտիկ գրականությունը պահպանում է իր հսկայական նշանակությունը՝ չափանիշ դառնալով XVII դարի կլասիցիզմի գեղագիտության համար: Կոռնելի և Ռասինի անտիկ սյուժեներով գրված ողբերգությունները, Լեսսինգի և Շիլլերի գեղագիտական հայացքները, Գյոթեի պոեմներն ու «Ֆաուստի» II մասը, Լոմոնոսովի ստեղծագործությունները, ռոմանտիկներ Բայրոնի, Շելլիի, Զյուգոյի, Պուշկինի երկերի պոետիկ կերպարները անտիկ գրականության անմահության լավագույն վկայությունն են:

Տ՝ օրս նորագույն գրականության ներկայացուցիչները շարունակում են դիմել անտիկ գրականության հավերժական թեմաներին: XX դարում Ֆրանսիայում ժան Կոկտոն գրում է «Էդիպ արքա», «Անտիգոնե», «Օրփեոս», «Բակտոս», Անդրե ժիդը՝ «Էդիպ», «Թեսես», ժան ժիրոդուն՝ «Տրոյական պատերազմը չի լինելու», «Էլեկտրա», Ալբեր Կամյուն՝ «Կալիգուլա», ժան Անույը՝ «Էվրիդիպես», «Անտիգոնե», «Մեդեա», Ժ. Պ. Սարտրը՝ «Ճանճեր» դրամաները: Գերմանիայում Գ. Զաուպտմանը ստեղծում է «Իֆիգենիան Դելֆիում», «Իֆիգենիան Ավլիսում», «Ազամենոնի մահը»,

Ա. Մյուլլերը՝ «Դիդոնեի մահը», Գ. Ի. Յեկերը՝ «Ողիսևսի մահը», Ի. Վեսֆալը՝ «Դիոնիսոս» եռերգությունը, Շվեցարիայում Ֆ. Դյուրենմատը՝ «Յոռմոլուս Մեծը», «Յերակլեսը և ավգյան ախոռները», ԱՄՆ-ում՝ Օ՛Նիլը՝ «Սուգը սագում է էլեկտրային», Տ. Ուայլդերը՝ «Ալկեստիդե» ստեղծագործությունները:

Այսպիսով՝ անտիկ գրականությունը միշտ կմնա բոլոր ժամանակների գրական, փիլիսոփայական, քաղաքական, գեղագիտական, բարոյական նվաճումների ոգեշնչման անսպառ աղբյուր:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՔ

1. Առաքելյան Ա., Հունական գրականության պատմություն, Եր. 1968
2. Առաքելյան Ա., Հռոմեական գրականության պատմություն, Եր. «Լույս», 1975
3. Տրոնսկի Ի. Ս., Անտիկ գրականության պատմություն, մաս 1-2, 1949-50
4. Чистякова Н.А., Вулих Н.В., История античной литературы, Л.1963
5. Тахо-Годи А.А., История античной литературы, М. 1986
6. Կարապետյան Ա., Անտիկ գրականության քրեստոմատիա, մաս 1-2, 1952-54
7. Դիցաբանական բառարան, Եր. «Լույս», 1985
8. Կուն Ն.Ա., Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները
9. Лосев А.Ф., Античная мифология в ее историческом развитии, М.1957

ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐ

- Հոմերոս, Իլիական, ., թարգմ. Հ.Համբարձումյանի ,Եր. 1955 թ.
Հոմերոս, Ոդիսական, ., թարգմ. Հ.Համբարձումյանի, ԵՊՀ, 1988 թ.
Война мышей и лягушек, М.,1936, И в сб. Эллинские поэты, М., 1963
- Եզովպոս, Առակները, Եր. 1972 թ.
Պինդարոս, Ներբողներ, ., թարգմ. Ա. Թովչյանի, Եր. 1992 թ.
Տաղք Անակրեոնի, Կ. Պոլիս 1871 թ.
Հելլենական քնար /Ծաղկաքաղ հելլեն բանաստեղծություններից/, թարգմ. Կ. Եսայանի, Աթենք, 1949 թ.
Եսքիլոս, Ողբերգություններ, թարգմ. Ա. Թովչյանի, Եր. 1991 թ.
Հուլյն ողբերգակներ. Եսքիլոս, Սոֆոկլես, Եվրիպիդես, թարգմ. Հ.Համբարձումյանի, Եր. 1950 թ.
Հին հունական ողբերգություններ, թարգմ. Հ.Համբարձումյանի, ԵՊՀ, 1990 թ.
Եվրիպիդես, Բաքսոսուհիներ թարգմ. Ա. Թովչյանի, Եր. 1995 թ.
Аристофан, Избранные комедии, М.,1974
Քսենոփոն Աթենացի, Անաբասիս Եր. 1970 թ.
Քսենոփոն, Կյուրոպեդիա, Եր. 2000 թ.
Аристотель, Поэтика, Л., 1927

- Менандр, Комедии.Фрагменты, М., 1982
Պլուտարքոս, Երկեր, Եր. 1988 թ.
Лукиан. Избранное, М. 1962
Լոնգոսի հովուավեսար կամ Ղափնիս և Քլոթ, թարգմ. Վ. Աքնի, Աթենք, 1927 թ.
Плавт. Избранные комедии, М., 1967
Теренций. Комедии, М., 1934
Լուկրեցիոս, Իրերի բնության մասին, թարգմ. Գր. Արեյանի, Եր. 1960 թ.
Катулл. Лирика, М., 1957
Վերգիլիոս, Էնեական, Վենետիկ, Ս. Ղազար, 1910 թ.
Вергилий. Буколики. Георгики. Энеида.М., 1971
Гораций. Оды, эподы, сатиры, послания.М., 1970
Հորացիոս, Արվեստ քերթողական, Վենետիկ, Ս. Ղազար, 1947 թ.
Овидий. Любовные элегии. Метаморфозы. Скорбные элегии.М.,1983
Цицерон. Три трактата об ораторском искусстве. М., 1972
Сенека. Трагедии. М., 1983
Петроний Арбитр. Сатирикон. М.-Л., 1924
Апулей. Апология. Метаморфозы. Флориды.М., 1958
Корнелий Тацит. Сочинения, Л., 1969
Светоний. Жизнь двенадцати цезарей, М.-Л., 1964

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ I	
ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	5
Անտիկ գրականության աղբյուրները	6
Հունական դիցաբանություն	7
Էպիկական շարքեր	12
Հոմերոս	17
«Իլիական»	17
«Ոդիսական»	24
Հեսիոդոսի դիդակտիկ էպոսը	31
Քնարերգություն	33
Գրական արձակը	38
V դար: Ատտիկական դարաշրջան	39
Ողբերգություն	44
Էսքիլոս	45
Սոֆոկլես	51
Էվրիպիդես	56
Կատակերգություն	61
Արիստոֆան	63
V- IV դարերի արձակը	67
Հելլենիզմ	69
Նոր ատտիկական կատակերգություն	73
Ալեքսանդրյան պոեզիա	74
Հելլենիստական արձակ	76
Հռոմեական նվաճման դարաշրջանի հունական գրականություն	77
Պլուտարքոս	77
Լուկիանոս	78
 ԲԱԺԻՆ II	
ՀՈՒՄԵԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	81
Կատակերգություն	86
Պլավտոս	86
Տերենցիոս	89
Լուկրեցիոս	92
Ցիցերոն	94
Օգոստոսի պրինցիպատի դարաշրջանի գրականությունը ..	95
Վերգիլիոս	96
Հորացիոս	102
Օվիդիոս	106

Սենեկա	110
Պետրոնիոս	114
Ապուլեյ	115
Վերջաբան	117
Մատենագրական շարք	
Գեղարվեստական տեքստեր	119

Համակարգչային ձևավորումը՝ Վ.Բրյուսովի անվ. ԵՊԼՀ-ի համակարգչային կենտրոն /ղեկավար՝ դոց. Վ.Վ.Վարդանյան/

Օպերատորներ՝ Զ.Մ.Էլչակյան
Ս.Վ.Առաքելյան

Համակարգչային շարվածքը՝ Մ.Ներկարարյանի

Ստորագրված է տպագրության՝	15.11.2002
Հանձնված է տպագրության՝	30.11.2002

Տպաքանակ՝ 200